

for 2 years here for 2000
and 2001 - for
highly for life

07 [at 2004]

9-42

19 JUN 2009

ԽԱՉԱՏՈՒՐ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՄԵԼԻՔ-ԴԱԴԱՅԵԱՆՑԻ

ԻՄ ՇՆՈՐՀԱԻՈՐԱՆՔԸ „ՄՇԱԿ“-Ի ՅՈՒԲԵԼԵԱՆԻՆ

(Արտատպւած «Հովիտ» շաբաթաթերթից)

Գրեց Եղիշէ ա. ք. Գեղամեանց



Мои поздравления къ юбилею «Мшака», переп.
изъ журнала «Овигъ»
Протоіер. Е. Гегамянцъ.



ԳԻՆԸ 70 ԿՈՊ.

Б А К У,



ТИПОГРАФИ „ТРУЖЕНИКЪ“ А. А. КУНДЖИ.
1915 г.

07 [5204]

9-42

ՅՂԱԶԱԿ
Գ-42
Հրատարակութիւն ԽԱԶԱՏՈՒՐ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՄԵԼԻՔ-ԴԱԴԱՅԵԱՆՑԻ

ԻՄ ՇՆՈՐՀԱԻՈՐԱՆՔԸ „ՄՇԱԿ“-Ի ՅՈՒԲԷԼԵԱՆԻՆ

(Արտատպւած «Հովիտ» շաբաթաթերթից)

Գրեց Եղիշէ ա. ք. Գեղամեանց




Мои поздравления къ юбилею «Мшака», переп.
изъ журнала «Овить»
Протоіер. Е. Гегамянцъ.

ԳԻՆԸ 70 ԿՈԳ

Б А К У,

ТИПОГРАФІА „ТРУЖЕНИКЪ“ А. А. КУМАНДИ.
1915 г.



198-1988

15769

Հրատարակիչը պատասխանատու է լինում հոդվածների
սխալներով և անհամապատասխանությամբ հեղինակին



3331-84

ԻՄ ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔԸ «ՄՇԱԿ»-Ի 30-
ԲԵԼԵՍԱՆԻՆ

Ա.

Այս տարի (1912) մայիսի 26-ին «Մշակը» իր գոյութեան քառասնամեակը տօնեց, որ շատ յաջող անցաւ թէ ըստ նիւթականին և թէ ըստ բարոյականին:

Թերթի ապահովութեան համար մօտ 30 հազար սուրբի փող հաւաքուեց և հայ ժողովուրդը, ինչպէս մեզանում, նոյնպէս արտասահմանում փութաց իր համակրանքը արտայայտել թերթին: Եղան և չհամակրողներ էլ. բայց աննշան թւով: Եւ վերջիններին անհամակրութիւնը վերաբերում էր յատկապէս «Մշակի» այժմեան վարիչների գործունէութեանը, որ, իրենց կարծիքով, փաստակար և խոտելի է:

Գալով թերթի հիմնադիր Գրիգոր Արծրունու գործունէութեանը՝ այս կէտում հաւասարաչափ և միաբերան համամիտ և գոհ էին թէ յօրելեանին մասնակցողները և թէ չմասնակցողները: Երկու կողմն էլ Գր. Արծրունու գործունէութիւնը գտնում էին շատ գովելի և շատ օգտակար ազգի

համար: Եւ խօսք չէին գտնում իրենց հիացմունքի և երախտագիտութեան զգացմունքները արտայայտելու՝ հանգուցեալ հրապարակախօսի գրական գործունէութեան վերաբերմամբ:

Տողերիս գրողն էլ ի մօտոյ ծանօթ է եղել Գրիգոր Արծրունու գործունէութեանը և իր ժամանակին, թէև յաճախ այդ գործունէութեան դէմ է գրել, բայց միևնոյն ժամանակ չէ ժխտել և նրա գնահատելի կողմերը: Իսկ եթէ ես էլ, իբրև լրագրական մի տկար գործիչ, «Մշակի» յօբելեանը չչնորհաւորեցի, — այդ նրանից չէր, որ քառասուն ձիգ տարիներ կեանք ունեցող հայ թերթի գործունէութիւնը շնորհաւորանքի արժանի չհամարեցի. ոչ, քաւ լիցի: Այլ նրանից, որ մեզանում կազմւած յօբելեաններին ես առհասարակ չեմ համակրում: Եւ գտնում եմ, որ այդ վեհ գաղափարը արագ քայլերով կորցնում է իր նշանակութիւնը մեզանում: Եւ իր հետ գլորում, վայր է ձգում, անբարոյականացնում է ժողովրդին: Եւ եթէ այս գրութիւնը շարունակելի, մի օր, անշուշտ, այդ ժողովուրդը երեսը շուռ կըտայ հայ գրականութիւնից, որին նորնոր է սկսում բարեկամանալ, մտերմանալ:

Չեմ ուրանում, որ յօբելեանները իրենց կրթիչ նշանակութիւնն ունեն. չեմ

ասում, որ մենք իսպառ նրանից ձեռք քաշենք: Ո՛չ: Այլ ես ասում եմ, որ գոնէ այս մէկ գաղափարն իր վեհութեան ու բարձրութեան վրայ պահենք, ոտնատակ չանենք, գոնէ այս մէկ բանում որոշ չափ ու կշիռ ունենանք մեր ձեռքում բռնած.

Հնումք Եգիպտոսի մէջ մի այսպիսի կանոն կար. երբ մի մարդ մեռնում էր՝ թաղելուց առաջ դիակը հրապարակի վրայ էր դրւում և հանգուցեալի գործունէութեան և արժանիքների մասին թեր ու դէմ ճառաբանութիւններ էին տեղի ունենում հրապարակաւ: Եթէ մեծամասնութեան կարծիքով՝ հանգուցեալի գործերը գրական էին լինում, դիակը բուրգերումն էին թաղում — մարդուն անմահացնում էին: Իսկ եթէ գործերը բացասական էին՝ դիակը հասարակաց գերեզմանոցներն էին տանում թաղում:

Եգիպտական այս կանոնին ես շատ եմ հաւանում:

Եւ իր ժամանակին հրաժարւելով «Մշակի» քառասնամեակը մեզանում սովորութիւն դարձած ձևով շնորհաւորելուց, այժմ գալիս եմ կատարել իմ բարոյական պարտականութիւնը դէպի այդ թերթի հիմնադիրը, ակնածութեամբ կանգնած նրա տըխուր շիրիմի առաջ:

Ես ճառ չեմ խօսելու, ոչ էլ մեր վա-

զամենիկ հրապարակախօսի գործունէութեան մասին փոքր ի շատէ մշակւած, սիստեմատիկ տեսութիւն եմ կազմելու: Ոչ գրա համար ես ոչ պատրաստութիւն ունիմ, ոչ էլ ձեռքիս տակ հարկաւոր նիւթեր, նոյնիսկ «Մշակի» տարեկանները:

Այլ այս սողերով ես սիրա եմ անում մի ընդհանուր և թոուցիկ ակնարկ ձգել Գրիգոր Արծրունու գործունէութեան վրայ, հիմնուելով յիշողութեանս վրայ և մասամբ օգտւելով նաև պ. Լէօի ընդարձակ աշխատութիւնից*):

Սկսենք ուրեմն:

Գրիգոր Արծրունին առաջին անգամ մեզանում յայտնի դարձաւ եւրոպայում ուսանող եղած ժամանակ:

Այնտեղից նա ժամանակ առ ժամանակ յօղւածներ էր ուղարկում «Մեղու Հայաստանի» և «Հայկական Աշխարհ» թերթերին: Յօղւածները իրենց գրաւիչ վերնագրերով, թէպէտ և ոչ հայկական, սակայն սիրուն լեզուով հետաքրքրութիւն էին շարժում:

Այդ պատճառաւ էլ ուսանող Արծրունու յօղւածները սիրով էին կարդացում ընթերցող հասարակութեան այն ժամանակէս սահմանափակ շրջանում:

*) «Գրիգոր Արծրունի», Թիֆլիզ, հատոր Ա, Բ և Գ.

Բայց Արծրունու յօղւածների ամենախոշոր առաւելութիւնը նրանցում արտայայտւած մտքերն էին:

Մտքերը երկու տեսակ էին:

Առաջին կարգի մտքերը Արծրունին վերցնում էր եւրոպական յայտնի հեղինակներից—կարլ Ծօխտ, Լասսալ, Փիւլ-Սիմօն, Պիսարի և այլն, որոնց գուցէ ինքը աշակերտել էր. երկրորդ կարգի մտքերը ինքնուրոյն էին, սեփական:

Վերջին մտքերի, նրանցից մանաւանդ միքսնիսի հետ կարելի էր և չհամաձայներ: Բայց նրանց արհամարհել չէր կարելի, ի նկատի առնելով նրանց արտայայտման ընդհանուր, լուրջ, կորրեկտ ձևը, ոգին, թարմութիւնը, որոնք ամենալաւ գրաւական կարող էին լինել ուսանող Արծրունու յաջողութեանը ապագայ հայ հրապարակախօսական ասպարիզում: Իսկ այդ ասպարէզը կարօտ էր և մեծապէս կարօտ, գիտութեան պաշարով սպառազինւած, եւրոպականօրէն կրթւած, զարգացած, իւրօվի, ամբողջովին, հրապարակախօսութեան նուիրւած մի նոր, թարմ ուժի:

Թէ արդարև Արծրունին էր լինելու մի այդպիսի ոյժ. մի՞ այսպէս ասած՝ կոշումնաւոր ոյժ, —աչքի առաջ առհաւատչեաներ կային:

Արծրունին թէ Թիֆլիսում թէ Ռու-

սաստանում և թէ եւրոպայում եղած ժամանակ, միշտ և հանապազ շրջապատւած է եղել լաւ դաստիարակներով, սովորել և տիրապետել է եւրոպական մի քանի լեզուներ, միքանի մասնագիտական դասընթացներ է անցել, փիլիսոփայութեան դոկտորի ատոմ է ստացել, լուսաւոր կենդրոններում երկար ճանապարհորդել է, հայ լրագրութեամբ հետաքրքւելու, կարելի է ասել, բնածին հակում է ունեցել, ուսանողական սեղանի վրայ նստած ժամանակից սկսած՝ սկսել է գրել, հայ լեզւին և գրականութեանը ծանօթանալու նպատակով Վիեննա և Վենետիկ ուղևորել և ամիսներով դասեր է վերցրել մասնագէտ Միխիթարեաններից: Վերջ ամենայնի՝ հարուստ ծնողների գաւակ լինելով՝ հացի խնդիրը նրան չպիտի հարկապէր կամ թողնել ու հեռանալ իր սիրած հասարակական գործից, կամ այդ գործին երկրորդական, երրորդական նշանակութիւն տալ, և կամ կողմնակի պարապմունքներով վաստակած սև կոպէկներով թէ սեփական անձը և թէ հասարակական գործը մի կերպ, վայնաշարի սպրեցնել,— մի դժխեմ ճակատագիր, որին ենթակայ են եղել մեր ամեն գոյնի և ուղղութեան հրապարակախօսներն ու գրական գործիչները առհասարակ:

Այս ամեն՝ գուտ ազգայնական-մաս-

նական բարեյաջող հանգամանքների վրայ աւելացրէք և մեր երկրի ընդհանուր, ընկերվարական բարեյաջող հանգամանքները ևս,— մամուլի համեմատական ազատութիւնը, Սրիմի պատերազմից յետոյ սկսւած ու արժարժւած, իսկ Ֆրանս-պրուսական պատերազմից յետոյ՝ ծաւալաւորւած, ընդարձակւած մտաւոր շարժումը Ռուսաստանում և նրա զգալի արտացոլումը դպրոցի, թատրոնական բեմի և գրականութեան վրայ ուսական կեանքում և նրա հետ, նրա հզօր ազդեցութեան տակ ընթացող հայկական կեանքում, աւելացրէք, գումարեցէք— ասում եմ— այս ամեն բարեյաջող, կենսուրախ երևոյթները, գիտակցութեան, ինքնաճանաչման այս նշոյլներն ու ճառագայթները, և դուք կը համոզւէք, որ հայ մտաւոր կեանքի դաշտը՝ իր նախկին, խոպանացած վիճակից դուրս գալով արդէն այն աստիճան պարարտացել էր, որ առանց առանձին դժւարութեան կարող կը լինէր սերմեր ընդունել և աճեցնել ու պրտաբերել, եթէ որ երկինքը նրան մի արժանաւոր, հմուտ, մշակ ուղարկէր: Եւ երկինքը ուղարկեց այդ մշակին: Դա Գրիգոր Արծրունին էր:

Բ.

Հայրենիք վերազառնալուց յետոյ՝ Գր. Արծրունին հետամուտ չեղաւ գործ, պարագմունք դանելու իր համար, ինչպէս այդ անում էին իրանից առաջ վերադարձող մեր բարձրագոյն ուսում ստացած երիտասարդները: Պատճառը, հարկաւ, այն էր, որ հացի խնդրի հոգսից Արծրունին ազատ էր, մինչդեռ այդ խնդիրը միշտ ծառայած կանգնած էր լինում իր նախորդների հանգէպ, ինչպէս առաջ էլ ասացի:

Վերջիններիս օրինակին հետևելով և նրանց նման՝ Արծրունին էլ ուսուցչական անվարձ պաշտօն ստանձնեց Գայիանեան օրիորդաց դպրոցում, որ իր գոյութեամբ ու տևականութեամբ պարտական էր այսպէս անւանեալ «մեղուական խմբին», մեր հասարակական կեանքում գործող այն ժամանակւայ մտաւորականներին: Սակայն Արծրունին շուտով թողեց դպրոցը: Նրա սիրած ասպարէզը՝ մանկավարժականը չէր: Ուսուցչական ասպարէզը միայն լաւ առիթ ընծայեց Արծրունուն ի մօտոյ ծանօթանալու ժամանակակից մտաւորականների հետ թիֆլիզում:

Եւ թերևս այս ծանօթութեան հետևանքն էր, որ Արծրունու մէջ մի հոյակապ — թէև մեզ համար ոչ նոր — միտք ծնեց՝

հէնց այդ մտաւորականների աջակցութեամբ մի նոր հայկական լրագիր հիմնելու:

Այսպէս անա աշխարհք եկաւ 1872 թւին «Մշակ շաբաթաթերթը պատասխանատու խմբագրութեամբ Գր. Արծրունու:

Ուսանող ժամանակւայ գրած յօդւածներից մէկում Արծրունին արծարծել և շատ գեղեցիկ կերպով պաշտպանել էր ընկերովի — կօօպերատիւ — գործելու միտքը:

Այժմ նա գալիս էր իրագործելու այդ միտքը: Նամանաւանդ որ նրա հնարաւորութիւնն ու շահաւէտութիւնը իր աչքի առաջն էր դրած Գայիանեան դպրոցում:

«Մշակ»ի խմբագրութիւնը կազմւած, աշխատանքները բաժանւած և գործն արդէն սկսւած էր կանոնաւոր ընթացք ստանալու, երբ յանկարծ աշխատակիցները հեռացան:

Ես չգիտէի, թէ խմբագրի և նրա աշխատակիցների միջից ի՞նչ սև կատու էր անցել: Անշատման պատճառը արդեօք մասնաւոր էր, անձնական — ինչ որ յաճախ պատահում է մեր դժբաղդ կեանքում մինչև այսօր — թէ՛ ընդհանուր, սկզբունքային:

Բարեբաղդաբար քիչ ժամանակ յետոյ, երբ «Մշակից» հեռացողները «Մեղու Հայաստանի» շուրջը խմբւեցան, արդէն պարզւեց, որ «Մշակի» խմբագրութեան

անջատման պատկառը եղել է սկզբունքը, ուղղութիւնը:

Բաժանելով ընկերներին՝ Արծրունին էլ սկսեց մեն մենակ գործել, և ի հարկէ իր ուզած ուղղութեամբ:

Գործի այս տեսակ ելքը՝ հայ լրագրութիւնը երկու հակադիր բանակի վերածեց:

Միմիանցից անջատ, մինչև անգամ միմիանց հակառակ գործելը մեզ համար, ասենք, նորութիւն չէր: Հայ մամուլը՝ լոյս ընկած օրից սկսած՝ միշտ միմեանց հակառակ ուղղութիւն է ունեցել: Բայց սկզբներում դրա համար՝ զօրաւոր հիմքեր են եղել—գրաբառի և աշխարհաբառի հարց, ուղղագրութեան հարց, եկեղեցու և եկեղեցականների ըարեկարգութեան հարց, բարձրագոյն ուսման կարևորութեան հարց, կանանց իրաւունքի հարց, մատաղ սերնդի կրթութեան հարց, և այլն և այլն:

Բայց—այս և սրանման հարցերը՝ եօթանասնական թւին կարելի էր արդէն լուծւած համարել բոլորովին: Կարելի էր այդ հարցերով նորից զբաղւել, նորից նրանց արծարծել և մշակել, բայց ոչ դրանց համար միմեանցից հեռանալ: Որովհետև թէ Արծրունին և թէ նրա աշխատակիցները՝ վերոյիշեալ հարցերի մասին՝ կեանքի կայացրած վճռի դէմ ոչինչ չունէին, համերաշխ էին, ընդունել, պրծել էին:

Նրանցից ոչ մէկի կողմն էլ չէր ասում, որ «Մշակը» գրաբառ լեզուով պիտի հրատարակւի, հին ուղղագրութիւնը պիտի մի կողմ ձգւի, եկեղեցին ու եկեղեցականութիւնը չպիտի բարեկարգւի, հայ մատաղ սերունդը տարրական և բարձրագոյն ուսում չպիտի ստանայ, հայ կինը պիտի շարունակէ իր ճնշւած, իրաւագուրկ վիճակի մէջ մնալ և այլն:

Երբ որ այս այսպէս էր, հապա էլ ի՞նչ միտք կար միմեանցից հեռանալ: Եւ դեռ դրանով էլ չբաւականալով՝ հակառակ բանակներ կազմել և միմեանց դէմ նիզակներ ճօճեցնել շարունակել:

Այլ բան էր ի հարկէ, եթէ Արծրունին կամ նրա հակառակորդները մի կամ միքանի նոր միտք, նոր գաղափար, բոլորովին նոր աշխարհահայեացք ունէին հրապարակ հանելու և պաշտպանելու: Ո՛չ, այդպէս բան չկար: Եւ այն ժամանակ չէր էլ կարող լինել:

Այն ամեն մտքերը, ինչ որ Արծրունին ուզում էր յայտնել և յայտնեց ազգային բարոյական և մտաւորական վերածնութեան մասին,—այդ ամենը նրանից առաջ Ստ. Նազարեանցն էր ասել և նոյնիսկ նրա զրական հակառակորդներից ոմանք: Մի՞թէ գաղանիք է, որ լուսնի տակ ոչինչ նոր բան չկայ:

Հարցը, գլխաւոր հարցը նրանումն է, թէ ի՞նչ եղանակով, ի՞նչ միջոցներով այս գաղափարը իրագործենք կեանքի մէջ. տեսականից գործնականին անցնենք: Ռուսական առածի նման՝ ահա թէ՛ «շան գլուխը որտեղ է թաղւած»:

Այժմեան «Մշակի» նոր աշխատակիցներից մէկը - Intimus կեղծ անւան տակ «Հայկական կուլտուրայի վիճակը և նրա գոյութեան հարցը» վերնագիրը կրող յօդւածների շարքի վերջում գրում է. «Եթէ ներկայումս հայ ժողովուրդը իրաւունք ունի միայն «Հոգեոր-թեմական դպրոցների նման սակաւօգուտ ազդային կրթարաններ պահելու՝ կղերական իրաւական հսկողութեան տակ, ապագայում նա ազատ կը լինի, իր կարողութիւնից, ոյժից ու կամքից կախւած կը լինի՝ ունենալ իր ուրոյն գիւնագիւն, սեպակաւ դպրոցը, ևսանարտանը և այլն*»:

— Ո՞ր անիծած հայը չի ուզենալ այդ բանը, բայց շատ ցանկալի էր, որ մեր պատեւի յօդւածագիրը մօտաւորապէս որոշէր իր ակնարկած ապագան. մէկ էլ՝ ցոյց տար այն եղանակը, միջոցը, որով հայը հնարաւորութիւն կունենայ Կարլ Մարքսի հայ աշակերտի այսքան գեղեցիկ, երանելի

*) «Մշակ», 1912 թ., № 145:

ցանկութիւնը ի կատար ածել: Իսկ ես, սիրելի ընթերցող, երկիւղ եմ կրում, որ ի շնորհս մեր Intimus-ների և Պիճիկեանների*) շաղիաղփանքներին, թէև հեռու չէ այն օրը, երբ մենք մեր «սակաւօգուտ» դպրոցներով՝ եզովպոսի շան օրին կը հասնենք: Մեր բերանի մսի կտորը բաց կը թողնենք և ջրում երևացող մսի կտորի երեսն էլ չենք տեսնի:

Հա, այն էի ուզում ասել, որ Արծրունու կազմած «Մշակի» խմբագրական կազմը՝ ոչ մի գօրաւոր, լուրջ պատճառ չունէր բաժան-բաժան լինելու, որովհետև, կրկնում եմ, գաղափարների, սկզբունքների նկատմամբ նրանք համերաշխ էին: Անհամերաշխութեան, ընդհարման առիթ տրւողը, այդ մտքերի, սկզբունքների գործադրման ձևը, եղանակը միմիայն կարող էր լինել: Եւ թող լինէր: Աւելի լաւ: Այդ գէպքում փոխադարձ զիջողականութիւնը փաստ չէր հասցնիլ ոչ սկզբունքին, ոչ գործին և ոչ գործիչին:

Երբ որ մեր միտքը Հռոմ գնալն է, — ապա ամեն ճանապարհով էլ մենք այնտեղ կը հասնենք:

Եթէ մենք որոշել ենք, օրինակ, հայ

*) Որի համանման մտքերը ես գուրս էի բերել «Անպատրուակ մտքեր» յօդւածներիցս մէկում:

տպագրութեան 400-ամեակը տօնել, հապա էլ ինչո՞ւ միմեանցից բաժանուում ենք, միմեանց հետ մինչև անգամ վէճի ենք բռնուում, մեր լրագիրների ամբողջ էջերն ենք լեցնում մի հարցի—մէկ և կէս ամիս չնչին ժամանակի,—համար, որ հոտած ձու անգամ չարժէ:

Բայց, արևս վկայ, մեր լրագրական կեանքում այդպիսի հոտած ձուեր են եղել գրեթէ միշտ, որոնցով աւելի զբաղւած են եղել մեր հրապարակախօսները, քան որևէ սկզբունքային, լուրջ հարցով:

Այս երևոյթը սկզբնաւորւեցաւ, աւելի ճիշտ՝ արծարծւեցաւ 1872 թւին: Եւ այդ թւականից սկսած՝ մեզանում*) քաղաքացիութիւն ստացան երկու եւրոպական բառեր—ազասաւիտ և պահպանողական, որոնցից առաջինը իր վրայ ստանձնեց «Մշակը» և երկրորդը «Մեղուն»:

Եւ մինչև այսօր այդ խեղճ բառերը, այն, բառերը միայն, անդադար քաշքշուում, նահատակւում են մեր կեանքի և մեր լրագրութեան մէջ... Ի փառս և ի պատիւ մեր ազգի... բարոյական վերածնութեան... թիւ, քիչ մնաց ասէի բարոյական մահւան...

Բայց հարցից չհեռանանք:

*) Տաճկաստանում քաղաքի դար առաջ:

Գ.

Հեռացնելով մտաւորականներին՝ Արծրունին շրջապատեց իրեն ինքնուսներով և կամ, ինչպէս ինքն էր գրում՝ «ձկնորսներով»:

Այդ ձկնորսների պարագլուխը հանգուցեալ Յակոբ Մելիք-Յակոբեանն էր— Բաֆֆին:

Կարգանք այն գեղեցիկ նկարագիրը, որ հանգուցեալը արել է «Մշակի» նոր նոր կազմի մասին, իր «Հայ երիտասարդութիւնը» աշխատութեան մէջ:

«Ես երբէք մոռանալ չեմ կարող,— գրում է Բաֆֆին,—1872 թւականը, երբ սկսեցաւ հրատարակել «Մշակ» լրագիրը: Ի՞նչ կեանք էր տիրում այն ժամանակ Թիֆլիզում. ի՞նչ գրութեան մէջ էր գաւառների վիկակը:

«Ամեն տեղ,—պատասխանում է ինքն իրեն Բաֆֆին,—տիրում էր մի տեսակ անշարժութիւն, մի տեսակ թմրութիւն, մի տեսակ մեռելութիւն: Յանկարծ, կարծես մի դիրքակաւ գաւազանի հարածից գաւրեցաւ կեանք»): Ոչ ոք չէր հաւատում, թէ այսպէս կարող էր լինել: Հաւատում էր միայն երիտասարդների մի փոքրիկ խումբ: Ես յիշում եմ այն գեղեցիկ տարիները, այն հրաշալի գի-

*) Ընդդռուները միշտ իմն են:

շերները, երբ այդ խումբը հաւաքւած խումբազրատան մէջ, կարգում էին, ծխում էին և վիճում էին: Մեզանից շատերը հագներին շապիկ չունէին, մտնում էին այնպէս թոյրորովին պատռոտւած կօշիկներով. այնուամենայնիւ մենք ամենքս էլ ժուսիսի յոյսով հաւատում էինք թէ կտիրապետենք մի մեծ սպազայի: Սկզբում այս լրագրի շուրջը համախմբւեցաւ համալսարանական դիպլոմաւոր երիտասարդութիւնը: Բայց նրանք շուտով ցրւեցան, կարծես թէ գործը խորթ թւեցաւ իրենց, նրանք չհաւատացին այս լրագրի ճակատագրին: Մնացին դէպլոմից գուրկ ինքնուսուցիչները—ինքնակրթութեամբ զարգացած մանգալիս, — անյաջողութիւնների տակ ճնշւած, ամեն տեղից հալածւած, բայց դարձեալ իր վեհուրիւնը պահպանած մանկիկներ: Ահա այդ ուժերը իրենց ուսուցիչի միջոցով «Մշակի» դրօշակը:

«...Եւ այսպէս, համալսարանականները հեռանալով «Մշակից», սապարեզը մնաց հեղինակներիս:»

Այդ լրագրի խմբագիրը խիստ ճիշտ համեմատութիւն արեց, թէ նա թողեց դպիրներին ու փարիսեցիներին և իրենց շրջապատեց հասարակ ձկնորսներով—ժողովրդի յփոքացած զաւակներով: Բայց պէտք էր ցոյց տալ հասարակութեանը, թէ այդ դիպ-

լոմից գուրկ ուժերով կարելի էր կազմել մի նոր շկոյս: Գործիչների առաջ դրած էին ահագին դժւարութիւններ ահագին պարտականութիւնների հետ: Հողը միանգամայն խոպանացած էր: Աշխատանքի բաժանութիւն չկար: Ուզում եմ ասել չկային օրգաններ, որոնց իւրաքանչիւրը յանձրն առնելով մշակութեան մի ճիւղ սկսէին աշխատել...: Եւ այս պատճառով «Մշակը» ստիպւած էր իր թերթը բեռնաւորել ամեն տեսակ նիւթերով: Գործիչիսիսիս և բեղերիսիսիսիս ձեռք ձեռքի տւած էին ընթանում: Վիպարարներ նկարում էր պատկերներ ժողովրդի կեանքից, ցոյց տալով նրա տեղ աշխատակութիւնները: Տնտեսագետը (ինքնուսուցիչ արդեօք) հարւածում էր անխիղճ վաշխաւուրի և հարստահարիչ կապիտալիստի յարաբերութիւնները մշակ դասի հետ: Մտախոսը խորտակում էր այն սև նախապաշարմունքները, որ ծանրացած էին ամբոխի հողու վրայ, և մատուցանում էր բարոյական նոր սնունդ: Առողջ խօսքը բոլորում էր կինդանի աղբիւրից և տարածում էր գոյլի ամեն կողմ նոր մտքեր: Կրիտիկան գործում էր իր անխնայ անգթութեամբ: Նա մտնում էր հեղինակի կարիքները, վաճառականի խանութը, արհեստաւորի գործարանը, ծառայողի ատեանը, գիւղացու խրճիթը, մեծատան սպօնը,



վարժապետի դպրոցը, կղերի մենարանը, — մի խօսքով կեանքի բոլոր ծաղքերում պըտրտում էր նա, և խաւարի միջից դուրս էր քաշում, մերկացնում էր այն ամենը, ինչ որ տգեղ էր, ինչ որ անարժան էր: Այդ բոլորը գործւում էր այն շկօլայի մէջ, որ հիմնեց «Մշակը», ուր երիտասարդութիւնը ուսանում էր և ուսուցանում էր:

«Ես երբէք չեմ կարող մոռանալ, — շարունակում է Բաֆֆին, — այն աղմկաշից ժողովները, որ կազմւում էին այդ լրագրի խմբագրատան մէջ միքանի տարի առաջ: Եթէ ես ունեցնլ եմ մի քանի ոսկի ըոպէներ, — դրանք պատկանում են այն ժամանակին: Ժողովների մէջ ոգեւորւած եւ բարոյաբարձր վիճաբանութիւնները տեսւմ էին շատ անգամ մինչև գիշերւայ ժամի երկուսը, Փոքրիկ, բոլոր նիւթական միջոցներից դուրկ, բայց բարոյապէս հարուստ խումբը ծրագրում էր հսկայական պրօէկտներ: Այդ դօնքիշոտութիւնը, երևակայութեան այդ տենդային բորբոքումը, թէև մասաւր ծիծաղելի էր, բայց գեղեցիկ էր, որպէս մանուկի ժպիտը, որ արտայայտութիւն է նոր սկսող կեանքի: Եղեալների խորին արւեցութեան մէջ, ամեն մի երիտասարդ մոռանում էր իր վիճակի դաժանութիւնը և մտածում էր, վիճում էր հասարակաց բարօրութեան մասին: Կէս գիշերից

յետոյ նիստը վերջանում էր: Խումբը ցրիւ էր գալիս բուլվարների վրայ, երբ բոլոր հիւրանոցները փակւած էին լինում: Բայց դարձեալ խուլ և անապատացած փողոցների մէջ շարունակւում էր ընդհատւած վիճաբանութիւնը: Այն ժամին, երբ բաղդաւոր Թիֆլիզցին հանգստանում էր իր փառաւոր քնարանի մէջ, մեր կիսաւերկ շրջակիները Գօլովինսկի պրօսպեկտի սալերը դղրդելով, ֆլևուդասում էին մի նշանաւոր հասարակական հարց: Չիւնը, անձրեք, սառը քամին չէր քշում նրանց դէպի իրենց ողորմելի բնակարանները, այլ աւելի զովացնում էր և աւելի կազդուրում սախացած գրութիւնները: Նրանք բաժանւում էին միմեանցից, երբ զարկում էր առաւօտեան գանգակը. այն ժամանակ գնում էին հանգստանալու, որ միւս օրը նոր ուժով սկսեն աշխատել*):

Որքան էլ որ այս նկարագրութիւնը զարդարւած է Բաֆֆու գրչին յատուկ երևակայական թռիչքներով և բանաստեղծական չափազանցութիւններով, այնուամենայնիւ նրանում վէճ չվերցնող միակ ճշմարիտ կէտը այն է, որ «Մշակի» ոչ միայն «բելետրիստական» բաժինը, այլ նաև նրա «մօրալիստական», նրա «մօրալիստական»

*) Լէօ. Հատ. Բ. երես 13—16:

տական», նրա «կրիստիկական» բաժինները
ևս խմբագրուում էին «ինքնուսուցիչ», ճշգ-
նորաներով», որոնք «խոհաների խորիկն արե-
ցութեան մեջ» գործում, տքնում էին հայ
հրապարակախօսական ասպարիզում:

Ամենքին յայտնի է, որ մի ժամանակ,
մի խումբ ձկնորսների միջոցաւ տարած-
ւեցաւ երկրիս վրայ Աստուածային Ուսուց-
չի վարդապետութիւնը: Սակայն Գալիլեա-
ցի ձկնորսները՝ նախ քան իրենց վարդա-
պետելը՝ Երուսաղէմի վերնատան մէջ Ս.
Հոգոց ընդունեցին զանազան յեզոսներով
խօսելու շնորհքը:

Հետաքրքիր է իմանալ թէ «Մշակի»
ձկնորսները ունին և սրբան միջոցում
ընդունեցին այն զանազան գիտութիւնները, որ
Բաֆֆիի վերեւի նկարագրութեան մէջ
գուրս են բերւած:

Ի պատիւ Արծրունուն պէտք է ասած
սակայն, որ նրա սկզբնական ծրագիրը եր-
բէք նման չէր Բաֆֆիի բանդագուշանք-
ներին: Արծրունին «Մշակի» յայտարարու-
թեան մէջ անա թէ ինչ էր ասում Էդմոնդ
Աբուի խօսքերով.

«Մեզանից չեն պահանջում հրաշքներ
կատարել աշխատելու ժամանակ, բայց
ինչ և իցէ լաւութիւն թողնել, ինչ և իցէ
գործ թողնել ապագայ սերունդներին: Եւ
այն մարդիկներին, որոնք իրենցից յետոյ

ինչ և իցէ աշխատանք կամ լաւութիւն են
թողել, մենք անւանում ենք առաջադիմա-
բեան մշակներ: Այն մարդը, որը աշխատում
է առաջադիմութեան համար, անշուշտ մի
բան լաւացնելու նպատակ ունի:

«Քանի լուսաւորում է մարդկութիւ-
նը, այնքան պէտք է շատանան աշխատող-
ները, կամ ինչպէս մենք անւանեցինք՝ ա-
ռաջադիմութեան մշակներ:

«Քանի կը շատանան մարդկութեան
մէջ ուսումնականները և աշխատող մար-
դիկ, այնքան յաճախ կը հնարեն նոր օգ-
տաւէտ բաներ, և նոր գիւտի փառքը չի
պատկանի մէկին, այլ շատերին: Եւ աշ-
խատող մարդիկները անունները մեծ թը-
ւով լինելով, մեզ անկարելի կը լինի այդ
բոլոր անունները պահել և իմանալ: Ի՞նչ
փաստ: Թող յայտնի չլինի ապագայ սե-
րունդներին մեր անունները: Մեզ բաւա-
կան է, եթէ մեր աշխատած գործը օգուտ
կը բերէ հասարակութեանը: Թող կորչի ա-
նունը, — բարի գործը չի կորչի... Աշխա-
տենք»*):

Այսքան անա տարբեր էին, ուսում ա-
ռածի և ինքնուսի, ուսուցչի և աշակերտի
հայեացքներն ու ձգտումները «Մշակի»
դերի, նրա գործունէութեան մասին:

*) Լէօ. հատ. Բ. եր. 19:

Գ.

Վսեմից մինչև ծիծաղելին մի քայլ լինելն ասացածքը՝ գուցէ ամենից աւելի է սազ գալիս «Մշակի» այդ յայտարարութեանը կամ յառաջաբանին, և նրան յաջորդող խմբագրականներին:

Մտաւորականների հետ կազմւած խմբագրութեան քայքայւելն, ինչ ասել կուզի, ցաւալի էր: Բայց եղածն անցած պրծած էր: Նամանաւանդ որ քայքայումը ուղղութեան, սկզբունքի հողի վրայ էր տեղի ունեցած: Եւ ուրեմն՝ որոշ չափով օգտակար էր այդ բաժանումը և գրդիչ առիթ էր հանդիսանում երկու կողմի համար էլ, որ նրանցից իւրաքանչիւրը աշխատի ապացուցանել իր ուղղութեան գերազանցութիւնը, առաւել օգտակար լինելը հասարակութեան համար:

Սակայն ի մեծ դժբաղդութիւն հայ հասարակութեան, ոչ Արծրունին, ոչ էլ նրա հակառակորդները այդպէս չմբռնեցին իրենց դերը, իրենց կոչումը: Եւ այդ անըմբռնողութիւնում պարագլուխ հանդիսացողը ազատամտութեան դրօշակը պարզող «Մշակն» եղաւ:

Գրիգոր Արծրունին չկարողացաւ արդեօք, թէ չկամեցաւ զանազանել մասնաւորը՝ ընդհանուրից, անձնականը՝ հասարակականից, զգայնութիւնը՝ դատողութիւնից, սիրտը՝ ուղեղից, ինչպէս որ պատշաճ և վայելուչ կը լինէր մի փիլիսոփայութեան զոկտորի համար:

«Մշակի» սկզբնական առաջնորդողներից մի ամբողջ շարք ուղղւած են խմբագրութիւնից հեռացող մտաւորականների հասցէին. կամ աւելի ճիշտը՝ ի դէմս այդ մտաւորականների՝ հայ ամբողջ մտաւորականութեան հասցէին:

Արծրունին ձեռնարկեց մի խիստ ու անողորմ արշաւանք հայ մտաւորականութեան դէմ: Նրա առաջնորդողների ուղն ու ծուծը կազմում են՝ նախատինք, պարսաւանք, անարգանք, հեզնանք, նոյնիսկ հայհոյանք, բայց ոչ երբէք մի լուրջ, մի առողջամիտ դատողութիւն, որ հիմնւած լինէր գիտական, պատմական և փորձնական փաստերի վրայ:

Նոյնիսկ այդ առաջնորդողների վերնագրերը, որ գրաւիչ են, ամենալաւ ապացոյցն են իմ ասածին, թէ Արծրունին գրելիս՝ անձնաւորութիւններ աչքի առաջ ունէր գլխաւորապէս:

Ահա այդ վերնագրերը. «Մենք և դուք», «Անընդունակութեան հերոսներ», «Բարձր ուսում առած տգէտ երիտասարդութիւն», «Պառաւ երիտասարդութիւն», «Սրտտ երիտասարդներին», «Իարձած և չդարձած

երիտասարդութիւն», «Լսել են թէ Ալին մեռել է, բայց չգիտեն որ Ալին» կային:

Ըստ երևոյթին ազատամտութիւն ասելով՝ Արծրունին հասկանում էր անպատճառ մտրակել, անպատճառ հարւածել: Այդ սրա դաւանանքն էր, որ իր առաջնորդողներից մէկում բացարձակ խոստովանում էր ասելով. «Մինչև որ մտրակով չխփես, բան չի դուրս գայ»:

Առանց մտրակելու, առանց խփելու՝ Արծրունին ջրից հանած ձկան էր նմանում: Նա համոզւած էր, որ ամեն շինարարական գործ միմիայն խփելով կը շինւրի, ուստի և իբր հասարակութեան ցանկութեան արտայայտիչ՝ պնդելով պնդում էր նրա բերանից, թէ «մենք անշարժ ենք, մենք հանգիստ ենք, որովհետև մեզ հանգիստ են թողնում: Բայց լինէք խթան մեզ համար, յարձակեցէք մեզ վրայ, հայհոյեցէք մեզ—և մենք գործը կը շինենք: Հայհոյեցէք մեզ—և մենք ուսումնարան կը հիմնենք, յարձակեցէք մեր պակասութիւնների վրայ—և մենք խմբագրութիւն կը կազմենք և լրագիր կը հրատարակենք»*):

Զմոռանամ յիշել, որ Արծրունու մրտակների ենթակայ էր յատկապէս Ռուսաստանում բարձրագոյն ուսում ստացած

*) Լէօ. հատ. Բ. եր. 39:

մեր մտաւորականութիւնը: Իսկ ինչ վերաբերում էր Գերմանիայում բարձրագոյն ուսում առած մեր մտաւորականներին,— զրանք ոչ միայն զերծ և ազատ էին մնում Արծրունու հարւածներից, այլ նաև գովաբանւում և փառաբանւում էին:

Իր ծայրահեղ միակողմանիութեան մէջ՝ «Մշակի» խմբագիրը մոռացութեան էր տալիս, որ Գերմանիայի մեր մտաւորականներիցն էին նաև Աբգար Յովհաննիսեան և Սպանդար Սպանդարեան, որոնց նոյնպէս հեռացրել էր «Մշակը» իր խմբագրութիւնից:

Այսքան և այս աստիճան հարւածների հանդէպ ստոնարիւն Պետրոս Սիմէօնեանցն անգամ չզիմացաւ: Ուստի նա ևս մշակական ազատամտութիւնից հրապուրւելով իր «Մեղուի» կիճը կամ խայթոցը պարզեց և ինքն ևս Արծրունու առաջ պարտքի տակ չմնաց:

Արծրունուն էլ հէնց այդ էր հարկաւոր: Ուստի և իր կտրուկ գրչի ամբողջ թափով՝ Ետրոս Սիմէօնեանցի օձիքը բռնեց և... «գորս դու պաաւիրեցեր»:

Լրագրական այս լարախաղացութեան ժամանակ երբ հանդիսագիր ամբոխի, խուժանի հիացման առարկան Գրիգոր Արծրունին էր,—նրա թառած լարերի տակ կանգնած էր նրա «եալանչի փահլւանը»—Ռա-

Ֆին: Եւ ինչ որ Արծրունին վերեկց տտում էր, նոյնը Բաֆֆին ներքեկց կրկնում էր այլևայլ ծամածուծիւններով:

Այսպէս՝ երբ Արծրունին Ռուսաստանի հայ մտաւորականներին էր հայհոյում, Բաֆֆին էլ իր «Թաթոսներ» պարսաւագիրն — պատկզիւն էր շարադրում:

Երբ Արծրունին Գերմանիայի հայ մրտաւորականներին էր փառաբանում, Բաֆֆին էլ իր «Ռ՞վ է մեզաւոր» ներբողագիրն էր թխում:

Իսկ երբ Արծրունին իր յարձակումները մասնաւորում էր Պետրոս Սիմէօնեանցի վրայ, Բաֆֆին իսկոյն ձայնակցում էր իր ուսուցչին և նրա հայհոյանքներն համեմում ու զարդարում էր իր «Քաֆթառ և «Միջատ Չինաստանի» վերնագրեր կրող գրւածքներով, որոնց մարդիկ Բաֆֆիից դաս առնելով՝ «կեանքից վերցրած պատկերներ» էին անւանում:

Ահա այսպէս սկսեց Գրիգոր Արծրունին իր հրապարակախօսական դեքլամացի:

Ե.

Վստահ իր յարձակողական և հարւածողական ընդունակութեան վրայ, միանգամայն ապահով, որ այդ ուղղութիւնը ընդհանրապէս հետաքրքրաշարժ է, նումա-

նաւանդ տգէտ հասարակութեան համար, քաջ գիտենալով որ կրկէսների, ցերեկերի այցելուները միշտ բազմաթիւ են լինում թաարօնի այցելուների համեմատութեամբ, — հայ ազատամիտ թերթը իր սուր սրլաքները շուռ տւեց դէպի մեր հին սերունդը, մեր ծնողները:

Երբ «Մշակի» մէջ, — գրում է Արծրունին իր «Ռ՞վ մնաց» առաջնորդողում, — հրատարակեցաւ յօդւածների մի շարք, որտեղ քննութեան տակ էր ձգւում մեր ուսեալ երիտասարդութիւնը, — գուցէ շատերը ուրախացան, մանաւանդ նորա, որոնք պատկանում էին հին սերունդին:

Երիտասարդները ազդակեցին, իսկ ծերերը անշափ բաւական էին, որովհետեւ չէին սպասում, որ կրգայ նոցա հերթը:

Հերթը հասաւ և նոցա*): Եւ... դարձեալ նոյն ջուրն ու նոյն ջրաղացը:

Այ ինքներդ տեսէք: Արծրունին գրում էր.

— «Դուրսը ես ազատամիտ եմ, — տանը բռնաւոր, դուրսը առաջադէմ եմ, — տանը հնամուր, դուրսը ես բողոքում եմ ըստ ըսկզբին (սկզբունքով՝ ուզում է ասել) բռնաւորութեան դէմ, — տանը ճնշում եմ, հալածում եմ, ոչնչացնում եմ, մեռցնում

եմ ինձ շրջապատող կեանքը: Դուքսը ես համբերող եմ դէպի ամեն համոզմունք,— տանը մենակ իմ համոզմունքը, որ ճանաչում եմ,— իմ սեպհական համոզմունքս է...

Տանը ոչ ոք չէ տեսնում մեզ, ուրեմն հալածենք, ճնշենք, բռնազատենք, հայհոյենք, անձնապաշտ լինենք մինչև խելագարութիւն, հոռուական պապի պէս տանք մեր ոտերը պաշելու... ամեն անհատական միտք ոտնակոխ անենք... մեզ ոչ ոք չէ տեսնում,— մենք տանն ենք*):

Չեմ ժխտում, որ մեր ծնողների մէջ կարող են գտնուել բնաւորութեամբ դեք բռնակալ մարդիկ**): Բայց երբէք չեմ ընդունում, որ մեր ծնողները, առհասարակ, բարձրագոյն ուսում առած իրենց գաւակների (որոնց մասին է Արծրունու խօսքը) հետ այնպէս վարւէին, ինչպէս որ նկարագրել է «Մշակի» խմբագիրը:

Բայց եթէ Արծրունու գրածում, շատ կամ քիչ ճշմարտութիւն լինի էլ, այսինքն՝ եթէ մեր ծնողները, յիշուի, մի մի բռնաւոր են,— յամենայն դէպս՝ նրանց այդ

*) Լէօ. հատ. Բ. եր. 98:

**) Լէօի աշխատութիւնում դուքս բերած կենսագրական կէտերից երևում է, օրինակ, որ Գրիգոր Արծրունու պապը և հայրը «իրասածի», «բռնաւոր» մարդիկ են եղել:

բռնութիւնը արհեստական չէ, միմիայն «տանը» չէ, ինչպէս հաւատացնել է ուզում Արծրունին,— Ս.յլ գիտակցական, համոզմունքով: Շիրվանգողէի «Նամուսի» Բարխուդարը, այն, բռնաւոր ծնող է: Բայց նա իր բռնութիւնը ծածուկ գործ չի դնում, այլ ավաշկարա, ամենքի առաջ, հրապարակօրէն:

Դուք կարող էք Բարխուդարին դատապարտել իր բռնութեան համար: Սակայն դուք իրաւունք չունէք ձեր հերթում, բռնանալ նրա գաւանանքի, նրա համոզմունքի վրայ: Նամանաւանդ դուք ոչ մի հիմք, ուրեմն և իրաւունք չունէք գրպարտել նրան, դուքս բերել նրան իբրև մի մարդահաճոյ, իբրև մի երկերեսանի փարխեցի:

«Ս.յլ առակ լւարուք»:

— «Մեր ազգի մէջ,— ասում է Արծրունին,— մի որ և է բանով յայտնուել, նշանանակում է անհաճելի լինել իր հայրենակիցներին: Իւրաքանչիւր հայ իր անձնական թշնամի է համարում այն հայրենակիցին, որը հասարակական գործունէութեան ասպարէզի մի որ և է ճիւղի մէջ յայտնուում է»*):

Այստեղ ևս Արծրունին միակողմանիութեան, անձնականութեան մէջ է թար-

*) Լէօ. հատ. Բ. երևս 100:

Թափում:

Բայց մենք ընդունենք մի բոսպէ, որ, արդարև «խրատական իսկ իր անձնական քրոջնաւի ե հասարակ» հասարակական մի որ և է ճիւղի մէջ յայտնի դարձած գործիչին:

Մի բոսպէ հաշուենք Արծրունու այս տարօրինակ մտքի հետ թէ, օրինակի համար, դերասանը, իբրև մի ազգային անհատ՝ կարող է անձնական թշնամի լինել մի դերասանի այն պատճառով և եթ, որ այդ դերասանը յայտնի է դարձած: Եւ փոխադարձաբար:

Բոլորովին այլ բան է, եթէ Արծրունին ասէր թէ դերասանը դերասանին և վիպասանը վիպասանին թշնամութիւն է անում, միմիանց հանդէպ գուր են փորում: Այս երևոյթը իր միտքն ունի: Հայկական առածն ասում է «սպիտակ շունը բամբակ ծախողին փաս է»:

Հնումը այդ երևոյթը կոչւում էր նախանձ, այժմ կոչւում է սրցութիւն:

Թէ նախանձը, — եթէ նա բարի է, և թէ մրցութիւնը, — եթէ միջոցների խտրականութիւն ընդունում է, յառաջադիմութեան մի-մի զօրաւոր ազգականներ են:

Ուրեմն էլ ինչացու են Արծրունու նէյնիմները: Ես այդ նէյնիմներից այս կարող եմ եզրակացնել թէ՛ Արծրունին, առանց աջ ու ծախ նայելու, շարունակ մտրակում

վիրաւորում էր ամենքին, և մտաւորականներին, և՛ հին սերնդի ներկայացուցիչներին, — և նրանցից էլ փոխարէնը ստանում: Եւ որովհետև ինքը չէր կարծում թէ իրեն ստացածը իր վաճառած ապրանքի փոխարինութիւնն է, ուստի իբրև զիրազրզիւ մարդ՝ լսածներիցը սրտնեղելով ու վրդովելով վերցնում էր գրիչը և բոսպէի տպաւորութեան տակ գրում իբր թէ հայը պիտի «ատէ այն մարդուն, որ առաջարկում է վերանորոգութիւն, դէպի կատարելագործութեան ձգտում, և կամ մի մի նոր միտք է առաջարկում»:

Ընդհակառակը՝ ես կասեմ. հայը փոխելու, նորոգելու նորութիւն ընդունելու ձգտման, հակման մէջ ծայրայեղութեան է հասնում:

Ես հաւատացած էի և հիմա էլ հաւատում եմ, որ եթէ հայը յառաջադիմելու ձգտման մէջ, առաւել կամ նւազ գիտակցութիւն ցոյց տար, եթէ նա իր համակրութիւնների և հակակրութիւնների մէջ փոքր ի շատէ շափ ու սահման ճանաչէր, այն ժամանակ մեր կեանքը այն չէր լինիլ, ինչ որ այժմ:

Իզուր չէ ասած՝ «ոչ որ փասի, եթէ ոչ յինքննէ»:

2.

Խոսք քաշելով հայ մտաւորականու-

թեան և հին սերնդի վրայ՝ Արծրունին կանգ առաւ ժողովրդի վրայ, որ փչացած չէ, պիտանացու է և նրանով կարելի է գործ կատարել, — գրում էր «Մշակը» և յետոյ աւելացնում, բայց «մեզ չէ հասկանում ժողովուրդը, որովհետև նա պատրաստած չէ, չունի կրթութիւն: Մեզ ժողովրդի հետ կապողը պիտի լինի տարրական դպրոցը: Առանց այդ միջնորդի՝ մամուլը կը մնայ ժողովրդի համար «ձայն բարբառոյ յանապատի»: Ո՞վ են, ո՞ւր են ժողովրդական ուսումնարանի ուսուցիչները: Պէտք է ուսուցիչներ պատրաստել: Իսկ ո՞վ կարող է նրանց պատրաստել: Ներսիսեան դպրոցը Թիֆլիզում պիտի հասկանայ վերջապէս, որ նրա նշանակութիւնն է պատրաստել ժողովրդի համար ուսուցիչներ — այսինքն՝

կրթեալ քահանաներ:

Եւ ծխական ուսումնարանների համար վարժապետներ»*):

Արծրունու այս միտքը, որ նա նույնութեամբ վերցրել է Ներսիսեան դպրանոցի կանոնադրութիւնից, միանգամայն ճշմարիտ է:

Ճշմարիտ լինելուցն էլ աւելի պարզ է այդ միտքը: Հետևաբար Ներսիսեան դրպ-

ոցի դեկավար կամ տեսուչ միմիայն այն անձը կարող է լինել, ով իր կրթութեամբ և ուղղութեամբ համապատասխանում է կանոնադրութեան պահանջին և նրա առաջ տանելու ընդունակ կը գտնւի:

Բայց մեր մէջ կային արդեօք այդպիսի մարդիկ:

Իհարկէ կային, բայց նրանց վրայ մատնացոյց անողը, նրանցից մէկին կամ միւսին ընտրողը՝ Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնն էր լինելու:

Իր հերթում ինքը՝ հոգաբարձութիւնը կա՛նախապէս պատգամաւորներից պիտի ընտրէր: Դատգամաւորներն էլ՝ Թիֆլիզի եկեղեցիների ծխականներից պէտք է ընտրւէին:

Ուրեմն՝ գործի յաջողութիւնը իսկապէս ծխականներից, ժողովրդից, նրա գիտակցութիւնից էր կախած:

Սակայն Արծրունին էլ, մենք ամենքս էլ շատ լաւ իմանում էինք, որ «ժողովուրդը պատրաստած չէ, չունի կրթութիւն»:

Եւ ուրեմն, կամայ թէ ակամայ, նա գործիք է լինում սրա ու նրա ձեռքին:

Յոյ ցաւալի երևոյթը Արծրունին ինքըն էլ էր հատաառում ասելով «ամեն ժողովուրդ, ամեն տեղ սովորութիւն ունի հաւատ չընծայելու իր սեփական ոյժերին,

*) Լէօ հ. Բ. եր. 126.

դիմել իրենից բարձր դասերին պատկանող մարդիկներին, որոնցից մի քանիսը հարստութիւն կամ աստիճաններ ունին, միւսները գիպում: Նշանակութիւն ունեցող մարդիկը իրենց կողմից օգուտ քաղելով ժողովրդի ազիտութիւնից, հաւատացնում են նրան թէ առանց այս ինչ հաստափոր վաճառականի, այսինչ հաստագլուխ աղաջի, այսինչ զատարկազուխ բարձր ուսում աւարտածի, ինքը, ժողովուրդը ոչինչ չի կարող անել *):

— «Խեղճ ժողովուրդ, — շարունակում է Արծրունին — պէտքէ բաց անել ժողովրդի աչքը, սթափեցնել, արթնացնել նրան, — այն, խեղճ ժողովուրդ, որքան խաբում են քեզ, և դու այդ բանը չես նկատում: Շատ անգամ դու կարդում ես լրագիրը և կարծում ես, որ նա իմաստութեամբ լի է, բայց վերջը տեսնում ես, որ ոչինչ չես հասկանում տպածիցը և մի կողմ ես դնում թերթը, քեզ ու քեզ ասելով. «երևի այնքան խելօք բան է, որ ես չեմ հասկանում»: Բայց խեղճ, դու չդիտես, որ այն մարդն էլ, որ գրել է յօդւածը, նա էլ չի հասկանում թէ ինչ է գրել, որովհետև նա ինքը չէ շարունակում իր սեփական մտաւոր զարգացման վրայ հոգալ... որովհետև...

*) Լէօ Հատ. Բ. երես. 134:

ժամանակ չունի... իսկ քեզ սովորեցնել է յանդգնում» *):

Առանց իմ ասելուն էլ ընթերցողը անշուշտ գլխի բնկաւ, որ «Մշակի» վերջին պարբերութիւնը «Մեղուին» է ուղղւած:

Բայց բանը դրանումը չէ: Այլ նրանում, որ ժողովրդին մինչև օրս խաբում էին՝ թէ «հաստափոր վաճառականը», թէ թէ «հաստագլուխ աղան» և թէ «զատարկազուխ բարձր ուսում աւարտածը»:

Այժմ վերջապէս սրտացաւ, իսկապէս ժողովրդատէր, միանգամայն ժողովրդի շահերին նւիրւած մի անձն է երևացել, որ ուզում է պաշտպան հանդիսանալ այդ շահերին:

Այդ անձը, ընթերցող, Գրիգոր Արծրունին է, որ ահա այս կոչն էր ուղղում Թիֆլիզի հայ հասարակութեանը՝ «ամբողջ հայութիւնը նայում է մեզ վրայ. ցոյց տանք, որ մենք արժանի ենք մեզ ընծայած հաւատարմութեան: Թոյլ շտանք ոչ ոքին ասել, որ մենք անհող ենք ազգային գործերի վերաբերութեամբ և արժանի չենք նոցա:

Թիֆլիզի ժողովուրդ, քեզանից և միմիայն քեզանից կախւած էր ընտրել այնպիսի պատգամաւորներին, որք ապււարար

*) Լէօ. հատ. Բ. եր. 135:

կը լրացնէին իրենց պարտքը, քեզանից կախած է ընտրել այնպիսի մարդիկներին, որք իրենց անձնական օգուաները և հակումները թողած, իրենց աչքի առաջ ունենային միմիայն ընդհանուր օգուտը»*):

Արծրունու այս կոչը՝ Բաֆֆի բառերովը խօսելով, «դիւթական գաւազանի մէկ հարւածով» ժողովրդին խելքի բերեց, որ և փութաց և Արծրունու նախօրօք տպել տւած ու ցրւած ցուցակում նշանակւած մարդկանց՝ պատգամաւոր ընտրեց: Եւ որպէսզի սրանք ևս, անսպասելի պատահականութեամբ, գործիք չդառնան «այսինչ հաստափոր վաճառականի», «այն ինչ հաստազուխ աղայի» և «այսինչ դատարկազուխ բարձր ուսում աւարտած», — Արծրունին իր կոչի վերջաբանը ուղղում էր այդ պատգամաւորներին ասելով. «մի՞թէ մեր մէջ չի գարթնի ինքնասիրութեան զգացմունքի նշոյլը, մի՞թէ մենք ևս այս անգամ ընդհանուր դործի մէջ առաջւայ տարիների պէս մեզ անընդունակ կը յայտնենք:

— «Ոչ, այդ լինելու չէ: Մենք պիտի ցոյց տանք, որ մենք գիտենք ուղղել մեր սխալները և անկեղծ սրտով խոստովանելով նոցա, չենք ընտրելու այն տեսակ

*) Լէօ հ. Բ. եր. 137:

մարդիկներին, որոնց առաջ ընտրում էինք, այլ կընտրենք ընդհանուր գործը առաջ տանելու ընդունակ անձերին, նոր ոյժերով, նոր մարդիկներին, ժողովրդին և ժողովրդական գործին անկեղծ համակրող մարդիկներին»*):

«Իւլթական գաւազանը» այս դէպքումն էլ իր ներգործութիւնն ունեցաւ և ընտրւեցան «նոր ոյժերով, նոր մարդիկ», նրանց թւում և ինքը Գրիգոր Արծրունին: Նորընտիր հոգաբարձութիւնն էլ, իր հերթում, մի նոր ոյժ, նոր մարդ տեսուչ ընտրեց: Դա Անդրէաս Արծրունին էր, Գրիգորի եղբայրը:

է.

Անդրէաս Արծրունու մասնագիտութիւնը քիմիան էր, որ նա սովորել էր Գերմանիայում:

Ճշմարիտ է՝ նա նոր մարդ էր, նոր ոյժ էր: Բայց թէ որքան օգտակար կարող է լինել այդ ոյժը դպրոցի ծրագրին, նպատակին, որին «Մշակն արդէն հաւանել և ընդունել էր:

Փոյթ չէ, որ Գրիգոր Արծրունին կուսակցութիւն էր կազմակերպել, գորեղ ազիտացիա էր մղում, և եթէ հաւատանք

*) Լէօ, հատ. Բ, եր. 138:

«Մեղուին», միջոցների մէջ էլ խտրութիւն չէր դնում: Այդ ամենը ներելի է և անխուսափելի մի ժողովրդի համար, որի 99 տոկոսը անգարգացած և անգիտակից անհատներէն է բաղկացած: Բայց այդ անգիտակից ամբոխին ղեկավարելու յաւակնութիւն ստանձնող գիտակից անհատները՝ գործն այնպէս պէտք է տոաջ տանեն, որ հասարակութեան, ընդհանրութեան շահերը չտուժեն: Գիտակից և ազնիւ հասարակական գործիչի խօսքն ու գործը համապատասխան պիտի լինին միմեանց: Ապա թէ ոչ՝ շատ դժւար կը լին գանազանութիւն գտնել այդ տեսակ գործիչի և «հաստափոր վաճառականի» ու «հաստազլուխ աղայի» մէջ:

Եթէ բացի քիմիկոս Անդրէաս Արծրունուց՝ մեզանում չլինէր մի ուրիշ «նոր ոյժ և նոր մարդ» — յանյդէպս նրա ընտրութիւնը գուցէ անքան էլ աչք չծակէր:

Մակայն մեզանում, նոյնիսկ Թիֆլիզում, հոգաբարձութեան բթի առաջ կանգնած էր Սեդրաք Մանդինեանը, որ, իբրև տեսչացու, անհամեմատ բարձն էր Անդրէաս Արծրունուց: Մանդինեանը մասնագէտ մանկավարժ էր և գերմանական յայտնի մանկավարժ Հերբարդի աշակերտը:

Ուրեմն ի՞նչ խելքով և խղճով ներսիսեան զպրոցի հոգաբարձութիւնը արհամար-

հեց և զանց արաւ մի այնպիսի «նոր ույժ» մին, նոր մարդուն»: Բայց ինչ որ հոգաբարձութիւնը պարտական էր անել և դժբաղդաւար չարաւ, այն արաւ Արծրունու շհաւանած կղերի ներկայացուցիչը:

Անդրէաս Արծրունու ընտրութեան նիստին Մակար արքեպիսկոպոսը ներկայ չէր եղել: Ընտրութեան հետևանքը լսելով նա հոգաբարձական նոր ժողով նշանակեց, ուր ասաց, որ ինքը, իբրև թեմակալ առաջնորդ, համաձայն չէ Անդրէաս Արծրունու ընտրութեանը: Եւ առաջարկեց ընտրել Սեդրաք Մանդինեանին: Հոգաբարձութիւնը համակերպւեցաւ թեմակալ առաջնորդի առաջարկութեանը: Սեդրաք Մանդինեանը ընտրւեցաւ և հաստատուեցաւ կաթողիկոսից: Թող այժմ ընթերցողը ինքը վկայէ՝ ո՞վ աւելի ժողովրդի շահերն էր պաշտպանում, եպիսկոպոսը թէ հրապարակախօսը:

Ինչ ասել կուզի, որ Մակար արքեպիսկոպոսի վարմունքը կօլեգիալ հիմնարկութեան իրաւունքի խախտումն էր: Մակայն Մակարը իբրև թեմակալ, զպրոցի կանոնադրութեամբ, ինչ-ինչ արտօնութիւններ վայելում էր, որոնց և, հարկը պահանջած ժամանակ, գործադրելու քաղաքացիական քաջութիւն ունէր միշտ:

Եթէ հոգաբարձութիւնը նախանձախըն-

դիր էր իր իրաւունքներին, թող նա այդ իրաւունքները ի չարն չգործադրէր, թող թայֆայականութեան չդիմէր, մասնագէտ մանկավարժին թողած՝ թող քիմիկոսին հոգևոր դպրանոցի տեսուչ չընտրէր:

Այսպէս թէ այնպէս՝ տեսչական հարցը պէտք էր փակւած համարել և թոյլ տալ, որ նոր տեսուչը ձեռնամուխ լինի իր պատասխանատու գործին:

Սակայն մի անգամ ևս յայտնի եղաւ, որ Գրիգոր Արծրունուն ղեկավարողը դրպրոցի շահը չէ, այլ իր կիրքը, իր եսականութիւնը, գուցէ և անձնական, եղբայրական հաշիւը:

Մանդինեանցը նոր էր ստանձնել իր պաշտօնը, որ «Մշակը» իր սովորական արշաւանքը սկսեց նրա ղէմ: Եւ միանալով Մուշեղ քահ Տէր-Ղևոնդեանց հոգաբարձի հետ, երկուսով միասին բողոք տւին, պահանջելով, որ Մանդինեանցը հեռացւի դպրոցից:

Առաջնորդը, ի հարկէ, այդ բողոքը առանց հետևանքի թողեց: Եւ առաջնորդի վճռին համամիտ գտնւեցան միւս հոգաբարձուները ևս: Բայց Արծրունին և Տէր-Ղևոնդեանց չվհատեցան:

Միքանի օր յետոյ, — յայտնի չէ թէ ո՛ւմ աշխարայ դրոյմաւը, — դպրանոցի աշակերտներից 14 հոգի տեսչի ղէմ բողոք

ներկայացրին: Հոգաբարձութիւնը քննելով բողոքը՝ բողոքարկուներին արձակեց դրպրոցից:

Ուրեմն Մանդինեանի հակառակորդներին դարձեալ չժպտաց բաղբը: Մրանք տեսնելով, որ ներսից չեն կարող տեսչին տեղահան անել, սկսեցին դրսից, «Մշակի» էջերից քարկոծել և տեսչին, և հոգաբարձութեանը, և թեմակալ առաջնորդին: Եւ այդ ամենը յանուն ժողովրդական շահերի:

Ուղիղ էր բացականչում Արծրունին իր կոչի մէջ — «խեղճ ժողովուրդ»:

Որովհետև «Մշակի» յօդւածների մի մասը Տէր-Ղևոնդեանց Մուշեղ քահանայի ստորագրութիւնն էր կրում, ուստի Մակար արքեպիսկոպոսը հեռացրեց այդ քահանային հոգաբարձութեան անգամակցութիւնից և ժամանակաւորապէս գաղարեցրեց նաև քահանայագործութիւնից:

Չգիտեմ ընթերցողս, ոտկայն ես այն կարծիքի եմ, որ փոքր ի շատէ պարտաճանաչ իշխանաւորը ուրիշ կերպ չէր կարող վարւել: Որտեղ տարրական կարգապահութիւնն անգամ չէ պահւում, այնտեղ ոչ մի գործ չէ կարող առաջ գնալ: Եւ իմ կարծիքով նոյնիսկ աւելի լաւ է վատ իշխանութիւնը, քան լաւ անիշխանութիւնը: Նամանաւանդ մեզ պէս մի թշուառ ժողո-

վրդի համար, որի մէջ՝

Кто палку взялъ,
Тотъ и капралъ.

Ինչ եղանակով էլ որ լինի՝ Սեղրաք Մանգինեանը առաջնորդից և հոգաբարձութիւնից ընտրւած էր և ամենայն հայոց կաթողիկոսից հաստատւած: Եւ եթէ նա Անգրէաս Արծրունուց լաւ տեսուչ չըլինէր, վատ բնաւ չէր լինիլ:

Բայց անա երկու անհատներ անպատճառ ուզում են իրենց կամքը, իրենց ետր առաջ տանել: Եւ իրենց այդ տգեղ վարմունքը քողարկում են զանազան խոշոր, մեծ-մեծ բառերի, այն, միմիայն բառերի տակ:

Եւ անա մի կողմից այդ մեծ-մեծ բառերը, միւս կողմից մեր իշխանաւորների անգունութիւնը, կամ ամեն տեսակի գունաւորութիւնն է գլխաւոր պատճառը, որ մեր դպրոցական կեանքը այն վիճակին է հասել այսօր, որին շատ սազական է գալիս վրացական այն առածը թէ՛ «անտէր եկեղեցուն սատանաներն են տէր զանում»:

Բայց՝ reverons a nos moutons,—մեր ոչխարներին դառնանք:

Ը.

Եթէ Արծրունու տարօրինակ վարմուն-

քը միմիայն ներսիսեան դպրանոցի տեսչի հարցով վերջանար, գուցէ չարժէր այդ հարցով զբաղեցնել ընթերցողներին: Բայց չնայած «Մշակի» խմբագրի հաւատարմութեան, թէ նա ինքն իրեն բոլորովին ժողովրդական շահերին է նւիրած,—ընդհակառակը՝ միշտ ժողովրդական շահերին հակառակ դիրք է եղել բռնած: Միշտ աշխատել է վտանգել այդ շահերը:

Այ, ինքներդ քննեցէք: Մի ժամանակ Արծրունին իր հայրենական քարւանսարայի մէջ մի թատրոն շինեց վարձով տալու: Վարձողների թւում կար և հայոց թատրոնական կօմիտեար՝ իշխան Նապօլէօն Ամատունու նախագահութեամբ: Կօմիտեարի անդամներից մէկն էլ ինքը՝ Գրիգոր Արծրունին էր:

Պատճառը և մանրամասնութիւնները չեմ յիշում, բայց լաւ յիշում եմ, որ կօմիտեար Արծրունու թատրոնը վարձելու իր դիտաւորութիւնը փոխեց: Գուցէ կօմիտէտը վատ բան արաւ, գուցէ նա թատրոնի տիրոջը նիւթական վսաս հասրեց և այլն:

Բայց կօմիտեարի վատութեան համար, եթէ իրօք այդպիսի բան կար,—հայոց ներկայացումներն ու դերասանական խումբը պատասխանատու չէին Արծրունու առաջ:

Արծրունին կարող էր իր ամենատե-

սակ պահանջները կօմիտէից անել ընդունւած կարգ ու կանոնով, — բայց նա երբէք իրաւունք չունէր հայ թատրոնը տապալելու չափ վարկարեկ անել հասարակութեան առաջ:

Բաւական չէր, որ Արծրունին կօմիտեաից հեռացաւ, այլ նաև Յ տարի շարունակ «Մշակի մէջ մի անմիտ արշաւանք սկսեց թէ կօմիտեաի և թէ դերասանական խմբի գէմ, — մի խումբ, որ այնքան բարձրացրեց հայ բեմի նշանակութիւնը և որի միջից Ազամեանի, Սատղիկի և Սիրանոյշի նման տաղանդներ դուրս եկան:

Եթէ «Մշակը» քննադատէր կօմիտեաի գործունէութիւնը և նրա պակաս կողմերը ցոյց տար, եթէ նա քննադատէր դերասանների խաղը և նրանց պակասաւոր կողմերը դուրս բերէր, — հարկաւ նրանից միմիայն շնորհակալ կը լինէին մարդիկ և նոյնիսկ դերասանները: Բայց Արծրունին այդ չէր անում, այլ խժբժում, խայթում, նւաստացնում, վարկարեկում էր խմբին էլ, կօմիտեաին էլ:

Ժամանակ անցնելուց յետոյ, այլ երբ «Մշակը» տեսաւ, որ իր խժբժանքը ընդհացուր դժգոհութեան առիթ է տալիս, — սովետութեան դիմեց և նրանով էր ուզում արգարանալ, որ հայ բեմի վրայ դրւած Փրանսիական մելօդրամները վնասա-

կար են, մի միտք, որ, ինչպէս ասում են, շաա ջուր էր վերցնում այն ժամանակ:

Միևնոյն անմիտ և խիստ արշաւանքը սկսեց «Մշակը» նաև Հրատարակչական Ընկերութեան գէմ, որովհետև քնկերութեան նախագահ ինքը շրնտրեցաւ, այլ Արզար Յովհաննիսեանը:

Միևնոյն արշաւանքն ու հակառակութիւնը սկսեց «Մշակը» 1879 թւականին Ռուբինեան Արրոսիոս վարդապետի գէմ, որ Տաճկաստանից Կովկաս գալով՝ ձեռնարկել էր դրամ հանգանակելու Տաճկահայաստանում երկրագործական դպրոց հիմնելու համար Արզար Յովհաննիսեանի աշակցութեամբ, որ և «Փորձի» մէջ պարբերաբար տպագրում էր հանգանակած փոդերի հաշիւը:

Տակաւին ուսանող ժամանակը՝ Եւրպայից գրած յօդւածներից մէկում Արծրունին գտնում էր, որ Կովկասում բարձրագոյն դպրոց բանալը, — որի առթիւ Թիֆլիզում հարց կար, — չէ կարող օգտակար լինել ժողովրդին: Գիտէ՞ք ինչի համար:

— Նրա համար, որովհետև տեղական ժողովուրդը, ծնողները իրենց ազիտութեամբ, իրենց նախապաշարմունքներով խոչնդոտ կը լինեն ուսանողների դարգացմանը: Արծրունու կարծիքով Կովկասեան ուսանողը տեղական շրջապատի ազդեցու-

Թիւնից զերծ մնալու համար պէտք է որ իր բարձրագոյն ուսումը հայրենիքի սահմաններից դուրս ստանայ: Կարճ ասած՝ անբարեյուսութիւն: Միայն թէ՛ ոչ-քաղաքական, ինչպէս այժմ պնդում են Պետրոգրադում Կովկասեան բարձրագոյն դպրոցի հակառակորդները, այլ այսպէս ասած՝ մտաւորական անբարեյուսութիւն:

Բայց ուսանող Արծրունու այս ինքնուրոյն միտքը յիշելով՝ ես նրա վրայ չէի ուզում կանգ առնել, այլ միայն այս էի ուզում ասել, որ Կովկասում բարձրագոյն դպրոցի գոյութիւնը փաստակար գտնող ուսանող Արծրունին, վերջերում, երբ արդէն յայտնի հրապարակախօս էր դարձել՝ շատ օգտակար էր գտնում, որ Ազգային Երեսփոխանական ժողովը՝ Կ. Պօլսից Փոքր-Ասիայի քաղաքներից մէկը փոխադրւի, — Արծրունու, իրեն կարծիքով՝ յօգուտ տանկահայերին, իսկ իմ կարծիքով՝ յօգուտ հարևան տէրութիւնների քաղաքական շահերին:

Առհասարակ Արծրունու «Մշակը» չափազանց հարուստ էր հակասական մտքերով, որոնց կարգալիս ընթերցողը շարած էր մնում թէ այդ մտքերից ո՞րն է ուղիղը:

Օրինակ Արծրունին մի կողմից կուսակրօնութեան վերացումն էր պահանջում, — միւս կողմից՝ գաղափարի ծառայող

յող երիտասարդութեանը՝ անպսակ մնալ էր առաջարկում, առանց մտածելու, որ կուսակրօնութիւնն էլ հէնց գաղափարի ծառայելու համար է եղել սահմանւած:

Ուրիշ բան է, եթէ կուսակրօնութեան, իբրև կրօնական գաղափարի ծառայող մի դասակարգի, վերացումը պահանջէր Արծրունին՝ չհամակրելով այդ գաղափարին: Բայց նա այդ չէր ասում, այլ այն, որ կուսակրօնութիւնը անբնական դրութիւն է:

Համաձայն եմ: Բայց մի՞թէ անբնական դրութիւն չէր լինի և այն երիտասարդներինը, եթէ որ նրանք մի ոչ-կրօնական գաղափարի ծառայելու համար անպսակ մնային:

Ուրիշ օրինակ:

Մենք տեսանք, թէ Արծրունին նրբան վրդովեցաւ, որ Մակար արքեպիսկոպոսը կօլեզիալ հիմնարկութեան սկզբունքը խախտեց՝ Անդրէաս Արծրունու տեսչութիւնը բեկանել տալով:

Այստեղ պէտք է ես իմ ընթերցողներին հաղորդեմ, որ Արծրունին ամենամեծ պաշտպանն ու ջադագօփն էր անհատական իրաւունքի և ազատութեան: Այդ մտքով նա մի շարք յօեւածներ ունի գրած: Բայց ահա մի այսպիսի դէպք:

Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւ-

նր չզգիտեմ ինչ պատճառաւ, և ևետիք
 Արասխանեանց ուսուցչին արձակել էր:
 Վերջինս գժգոճ մնալով հոգաբարձական
 որոշումից՝ դիմել էր կաթողիկոսին, և վե-
 րաքննութիւն պահանջել:

Կարծում եմ, որ ոչ հոգաբարձութեան
 և ոչ Արասխանեանցի վարման մէջ մի ա-
 ռանձին բան չկայ: Ամեն մի կօլեգիալ
 հաստատութեան էական կանոնն է— թոյլ
 տալ, որ գժգոճը բողոքէ բարձր հաստա-
 տութեան առաջ, որովհետև միմիայն այդ
 ճանապարհով կարելի է ապահոված հա-
 մարել ամեն մի անհատի իրաւունքն ու
 ազատութիւնը:

Բայց զուք թերթեցէք այդ սովորական,
 այդ միանգամայն իրաւացի և արդար
 զատի առթիւ Արծրունու գրածներն ու
 զարմանալով կը զարմանաք ազատ Եւրո-
 պայում մեծացած՝ հայ ազատամիտ թեր-
 թի խմբագրի հրապարակախօսական ձիր-
 քերի վրայ:

«Մշակը» պնդելով պնդում էր, որ ու-
 սուցիչ Արասխանեանցը իրաւունք չունի
 հոգաբարձութեան վճռի դէմ բողոքելու:
 Իր հերթում՝ կաթողիկոսն էլ իբր թէ իրա-
 ւունք չունի հոգաբարձութեան ներքին
 կարգադրութիւններին միջամտելու:

Էլ չեմ խօսում այն մասին, որ քա-
 հանա յագործութիւնից զազարեցրած Յով-

հաննէս քահանային, իբրև իր ծխականին,
 Արծրունին աշխարայ հրաւէր էր կարգում
 «Մշակի մէջ, միանգամայն արհամարհելու
 բարձրագոյն հոգևոր իշխանութեան կար-
 գադրութիւնը և շարունակելու իր քահանա-
 յագործութիւնը. և գնալ ու օրհնել «Մշա-
 կի» խմբագրատունը:

Էլ չեմ խօսում այն մասին՝ որ մի ազ-
 դեցիկ եպիսկոպոսին Արծրունին «օրիորդ»
 էր անւանում, Ղազարոս Աղայեանցի գլը-
 ւածքներին միմիայն «վատերկլօգէթի»
 յարմար էր համարում: Եւ այլն, և այլն:

Մտրակելու ուղղութեամբ այն աստի-
 ճան զմայլած էր Արծրունին, որ նոյնիսկ
 ոչ մի անձի և ոչ մի հաստատութեան հետ
 կապ չունեցող, այլ բոլորովին ընդհանուր
 — կարելի է ասել՝ օդի մէջ շրջող — մի
 հարցի մասին գրելիս՝ չէր կարողանում
 ինքն իրեն զսպել: Այդպիսի հարցերիցն էր,
 օրինակի համար՝ դիակներն այրելու հար-
 ցը և նրա պաշտպանութիւնը, որ Արծրու-
 նին կարծում էր թէ առաջին անգամ ինքն
 է զարթեցնում մեր մէջ: Մինչդեռ այդ
 հարցի սկզբնական շարժիչը «Հայկական
 Աշխարհն» էր կարծեօք:

Բայց աւելի լաւ է մենք թողնենք այս
 մանր-մունք, աննշան կէտերը և դառ-
 նանք խոշոր, նշանաւոր հարցերին, որոնց

մէջ, իմ կարծիքով, առաջնակարգութիւնը պէտք է դպրոցին տալ:

Թ.

Ինչ ուղղութիւն որ Արծրունին բռնած էր դէպի մտաւորականութիւնը, դէպի հին սերունդը, դէպի հայ բեմը,—նոյ ուղղութիւնը շարունակեց նաև դէպի հայ դպրոցը,—այսինքն յարձակել, նախատել, վարկաբեկ անել:

Արծրունին նման էր այն մարդուն, որ միմիայն գիշերները շրջելով՝ ամեն բան մութ ու խաւար է տեսնում:

Նա այն համոզմունքին էր, որ «աստիկ եւ անտրու» անձնաքննութիւնը թէ զբրականութեան, թէ բեմի և թէ ուսումնարանի մէջ, նշան է, որ ազգը ընդունակ է փոխել, հրաժարել իր պակասութիւններից, առաջագիմութիւն անել»*):

Եկեղեցու հայրերից մէկն ասել է՝ «ինչպէս որ կրակը կրակով չի հանգչիլ, այնպէս էլ շարիքը շարիքով չի յաղթահարւիլ, այլ սիրով»:

Հարկաւ Արծրունին այս մտքի հետ չէր կարող համակերպիլ: Եւ մեր կեանքում նկատած շարիքները վերացնելու իր սէրը՝ քննադատութեամբ կեթ էր արտա-

*) Լէօ Ն. Բ. Կր. 193:

յայտում: Սակայն այդ քննադատութիւնը ինչո՞ւն էր կայանում:

Արդեօք նա հետադոտում և ապացուցանում էր, օրինակի համար, որ մեր դպրոցների շինութիւնները հակառողջական են, որ մեր ուսուցիչները այս ու այն թերութիւնները ունին, որ մեր դպրոցների նիւթական վիճակը՝ խախուտ է, որ նրանք հաստատուն ծրագիր չունին, որ մեր հոգաբարձական մարմինը օգտակար թէ վրնասակար ինիստիտուտ է և այլն և այլն: Եւ այդ ու դրանց նման՝ դպրոցային հարցերը հետազոտելից յետոյ՝ ցոյց տալիս էր արդեօք այո ու այն միջոցը, եղանակը, հնարաւորութիւնը՝ նկատուած շարիքները վերացնելու և դպրոցը իր կոչման բարձրութեանը հասցնելու:

— Քնն լիցի, երբէք: Եւ կամ շատ հազիւ, այն էլ կողմնակի, հարևանցի կերպով ասել ու անցնել:

Արծրունու յայտնած նոր մտքերից մեր դպրոցների նկատմամբ առանձին ուշադրութեան արժանացաւ այն ժամանակ՝ նրա այն միտքը, որ հայոց եկեղեցական-ծխական դպրոցների դոնները բաց պէտք է լինին կովկասի բոլոր ազգերի մանուկների համար, որ, ինքնըստինքեան, հարկաւ, դապարտելի միտք չէ: Բայց թէ՛ ի՞նչ նպատակաւ,

ինչ եղանակաւ, ինչ միջոցներով իրագործել այդ միտքը, — Արծրունին ոչինչ չսասաց այդ մասին:

Նա մի ազատ միտք յայտնեց և լռեց*): Բայց այդ միտքը հրապարակի վրայ նետելը՝ ոչ միայն անհիմն էր, այլ նաև բոլորովին անժամանակ:

Այդ այն ժամանակն էր, որ կառավարութիւնը մեր եկեղեցական-ծխական դպրոցները մեզնից վերցնելու հրաման էր արձակել: Մասամբ էլ արդէն վերցրել էր: Եւ եթէ հոգելոյս Գէորգ Դ.-ը կաթողիկոսի ազդու միջնորդութիւնները չէին եղել, — այսօր մենք ծխական դպրոցներ չէինք ունենալ:

Ազատարար կայսեր վեհանձնութեան շնորհիւ դպրոցներ բանալու և պահելու

*) Արծրունու այս միտքը վաճուճ իրագործեց: Եւ «Արարատեան» ընկերութեան այնտեղ հիմնած ուսումնարանում, մի ժամանակ, ընդունեցան թիւրքերէրդ և նեստորական աշակերտներ ևս: Այդ ուսումնարանի և նրա նպատակի համար ահա թէ ինչ է գրուում Ահոն:

«Ափսոս, որ վարժապետանոցը երկար գոյութիւն չունեցաւ, որպիսցի կարելի լինէր տեսնել թէ որքան կենսունակ էր այդ միտքը, — մի միտք, որ հեշտ է երևում միայն իբրև թղթի վրայ գրւած թէօրիա կամ Բաֆֆիի վէպերի մէջ ֆանտաստիկական գրուչութիւն ստացած ուսուցիչաւ: (Ահօ, հատ. Գ. եր. 102):

իրաւունքը վերստին ստանալով Գէորգ Դ. ծխական դպրոցների համար՝ թեմական տեսչութիւն սահմանեց. միջնակարգ դպրոցների և ծեմարանի համար հաստատուն ծրագիր մշակելու ձեռնարկեց և այլն:

Սակայն կաթողիկոսի այդ շինարարական, այդ վերին աստիճանի կարևոր գործունէութեանը հայ մամուլը և յատկապէս «Մշակը», օգնեց արդեօք, և ինչո՞վ, — ինձ յայտնի չէ, չեմ յիշում:

Այսքանս միայն լաւ յիշում եմ, որ Գրիգոր Արծրունին սկզբից մինչև վերջը հալածում էր Գէորգ Դ.-ին: Հալածում էր նոյնիսկ այն ընդէին, երբ ծերունի Հայրապետը մահւան անկողնումն էր գտնւում:

Իսկ երբ նա հոգին աւանդեց, «Մշակը» այդ մասին միմիայն մի փոքրիկ լուր հաղորդեց իր ներքին լուրերի բաժնում:

Կարծես թէ Սմեճայն Հայոց կաթողիկոսի մահը աւելի նւազ նշանակութիւն ունէր, քան մի գերմանացի ուսանողի մահը, որ մի երկու յօդւածներ էր գրել «Մշակի» համար: Ուստի և ոչ միայն մեծ սև շրջանակի արժանացաւ, այլև յատուկ առաջնորդողի:

Իսկ երբ մարդիկ այդ անտեղութիւնը նկատել տւին, Արծրունին վերկացաւ և հանդիսաւոր կերպով յայտարարեց, որ «Մշակը» կրօնական թերթ չէ, որ հայ ազգ

ասելով նա ընդունում է և լուսաւորչա-
կան հային և կաթողիկ հային և յունադա-
ւան հային և բողոքական հային և մահմե-
դական հային: Հետևաբար Լուսաւորչական
եկեղեցւոյ պետի մահը՝ ամբողջ հայ ազ-
գին չէ կարող սուգ պատճառել:

Յայտարարեց, որ «Մշակը», իբրև ա-
զատամիտ թերթ կրօնի և կրօնականի վե-
րաբերեալ խնդիրներում, ոչ մի խտրու-
թիւն չէ դնում Լուսաւորչական և այլա-
զաւան հայերի մէջ, և թէ համանման
խնդիրներում ինքը բոլորովին անտարբեր
է, անխտրական:

Այժմ տեսնենք թէ որ աստիճան հե-
տևողական գտնւեցաւ «Մշակը» այս մտքի
նկատմամբ:

Մի ժամանակ կարգալով, որ եւրոպա-
ցի միսեօներները սկսել են հայերին որ-
սալ, Արծրունին պահանջում էր, որ մենք
ևս «կազմակերպւենք, պրօպագանդային
հակադրենք պրօպականդա. օտար միսեօ-
ներների դէմ հանենք մեր միսեօներնե-
րին, որոնք քարոզեն, թոյլ չտան կրօնա-
փոխութիւն»*):

Կարծում եմ, որ կրօնների մէջ խըա-
րութիւն չդնող մի թերթի ազատամտու-
թեանը՝ անպատշաճ էր այս կոչը:

*) Լէօ. հատ. Բ. էր. 317.

Իսկ եթէ այս կոչը լինում էր ազգու-
թեան տեսակէտով, — ապա ուրեմն միան-
գամայն անտեղի էր կրօնական խնդիրնե-
րում անխտրութիւն, չէղորութիւն քարո-
զելը:

Ընդհակառակը պէտք էր քարոզել, հաս-
կացնել մարդկանց, որ ի սէր ազգային
միութեան՝ նրանք չհեռանան մայրենի ե-
կեղեցուց, որ դարերից ի վեր, միակ ֆակ-
տօրն է մնացել օտարների աչքում՝ ազգա-
յին ինքնուրոյնութեան նկատմամբ:

Ես չգիտեմ թէ երկրագնդիս ո՞ր ան-
կիւնումն էր գտել Գրիգոր Արծրունին մահ-
մեդական և յունադաւան հայերին, բայց
եթէ դրանք այժմ էլ կային, կամ կան, —
ինչո՞վ արդեօք ցոյց տւին իրենց հայ լի-
նելը: Փալով կաթողիկ և բողոքական հայե-
րին, կամ աւելի ճիշտը, նրանց մնացորդ-
ներին, որոնց վերջնական ձուլումը իրենց
զաւանսած օտար եկեղեցիների հետ՝ եթէ
տակաւին տեղի չէ ունեցել, — անշուշտ մի
օր պիտի ունենայ, — դրանք արդեօք ե՞րբ
և ո՞ր ազգային հարցում միացան մեզ հետ:

Ահա դրած է «Մշակը» սեղանիս վրայ
և ես կարդում եմ նրանում թէ՛ վիէննա-
յի Միթիթարեանները չեն կամենում հայ
տառերի գիւտի և տպագրութեան յօբել-
եանին մասնակցել, որովհետև հանդէսը
էջմիաձնումն է կատարւելու:

Դէն հիմի արի ու հաւատա, որ «հայ եկեղեցուց դուրս հայութիւն չկայ» ասացածը հին կոշմար է, որ վաղուց ջարդուած է, վաղուց դադարել է ազգային ազէտ լինելուց*):

Շարունակելով խօսքս Անխորականութեան մասին կրօնական հարցերում, ես պէտք է յայտնեմ, որ այդ մտքի ճեղինակը մի ժամանակ, — 1885 թւին, — այնպիսի թափով ու եռանդով խառնուրդ կաթողիկոսի ընտրութեան գործին, որ միմիայն կրօնամոլներին կարող էր ներելի համարել:

Եթէ դուք Արծրունու այդ վարմունքը կրօնական տեսակէտով չէք մեկնում, այլ ազգային, կուլտուրական, բարոյական վերածնութեան տեսակէտով, և ես համաձայն եմ ձեզ հետ, — ապա ուրեմն դուք պէտք է ընդունէք, որ Ամենայն Հայոց կաթողիկոսի մահը՝ իբրև մանր լուր հազորդելով, դուք ժխտում, ուրանում էք նրա նշանակութիւնը, ոչ միայն ըստ կրօնականին, այլ նաև ըստ ազգայնութեան:

Բաւականանաք Արծրունու վերոյիշեալ անյաջող, կրքի ազդեցութեան ներքոյ գրւած դարձածքի վրայ այնքան խօսելով, և դառնանք նրա հոգևորականութեան մասին յայտնած մտքերին:

*) Լէօի յօդածը «Հորիզոն» 1912 թ., № 141.

Փ.

Հայ մատուորականութեանը, հայ հին երևոյթին, հայ բեմին, հայ զպրօցին և Հայոց կաթողիկոսին շինայող, նրանցում ոչինչ արժանիք, ոչինչ միտքարական բան չգտնող Գրիգոր Արծրունին, շատ բնական է, որ չէր կարող խնայել հայ ընդհանուր հոգևորականութեանը ևս առհասարակ: Եւ գտնում էր որ մեզանում հոգևորականութիւնը, ինչպէս կուսակրօնը, նմանապէս և աշխարհիկը — ամուսնացածը, — «բնութեանը համեմատ ընտանեկան կիւնքից ճեռու, ժողովրդական փողերը փառնող, խռովութիւն գցող, ինտրիգներ վարող, փառքի պատւանշաններին հետևող, անգործ, անշարժ, տգէտ, մոլեռանդ (??), ժամանակակից գիտութիւնից և ճշմարտութիւնից յետ մնացող, ժողովրդական կրթութիւնը խօսքով քարոզող, բայց գործով նրա զարգացմանը արգելող, ամեն նորութեան և լուսաւորութեան ընդդիմադրող է:

«Եւ զարմանալի չէ, — շարունակում է մեր ազատամիտ թերթը, — որ քանի գնում է, հայոց եկեղեցւոյ ծոցից, սուրբ Լուսաորչի ջանքերով մաքուր հիմնած, բայց մեր աբեղաներով և քահանաներով սկզբնական մաքրութեամբ չպահպանուած եկեղեցուց, անդադար անջատուում են և թշնամանում

մեր եզրայրները. մինք բողոքական է դառնում, միւսը կաթոլիկ*):

Այս հատուածի առաջին մասի վրայ առայժմ կանգ առնենք: Որովհետև Արժրուհու գրչին յատուկ և սովորական այդ բաների մեծագոյն մասը, ոչ միայն շափազանցութեան, ոչ միայն ծայրահեղութեան արդիւնք է, այլ նաև բացարձակ ստույգութեան և զրպարտութեան:

Բայց եթէ զրանք ամենքը զուա ճրջմարտութիւն անգամ լինէին, — այնուամենայնիւ հրապարակախօսը չպէտք է բաւականանար լոկ զրանց թւելով, այլ նաև պիտի հետազօտէր այդ ախտերի ծագումը, աղբիւրը գտնէր և զրանց վերացնելու, զրանց արմատախիլ անելու այս ու այն միջոցը ցոյց տար:

Միթէ լրագրութիւնը փողոց է, հրապարակախօսութիւնը՝ սրիկայութիւն, որ մարդիկ վեր կենան և ամեն տեսակ ափեղցիեղ բաներով մէկզմէկու հայհոյեն փողոցային, փչացած երեխաների նման և պարծենան, թէ յաղթեցին:

Հապա էլ ուր մնաց գործունէութեան առաջին տարիներում Արժրուհու այն զրբածներն թէ՛ «զրագէտից, լրագրի խմբագրից պիտի պահանջեն, որ նա հետազօտի

*) Լէօ Հատ. Բ. երես. 314:

հասարակական հոգը, քննի նրան կազմող մասերը, զարթեցնի քնած մտաւոր գործութիւնը:*)

Բժիշկ չէ, առհասարակ, նա որ հիւանդութեան տեսակները մի առ մի անւանում է, իսկ ցաւերի կենտրոնը չէ գտնում, դիագնոզ զնել չի կարողանում, ոչ էլ հիւանդին այս ու այն ճարր, դեղը գրում:

Հոգևորականութեան վրայ այդ աստիճան և այդպիսի լեզուով յարձակելը ոչ միայն անարդարութիւն էր և աննպատակ, այլ նաև անտակտութիւն էր և անտեղութիւն:

Որովհետև այդ ժամանակներումն էր, որ գրաքննական կօմիտէտը գազանի խորհրդական Մարսիմովի նախագահութեամբ, հայոց լրագիրներին հրաւիրելով իր ատեանը, անպաշտօն հրահանգ և խորհուրդ էր տալիս նրանց, որ հոգևորակարութեանը չինայեն, նրանց արարքները ուժգնութեամբ քննադատեն, որպէսզի ժողովրդի աչքը բացւի և նա իմանայ, որ հոգևորականութիւնը մի աւելորդ և ծանր բեռ է իր վրայ:

Նախընթացաբար եղած որոշման համաձայն «Մեղու Հայաստանի» խմբագրին էր յանձնւած, իբրև սուղի, պատասխան

*) Լէօ. հատ. Բ. եր. 164:

նել Մաքսիմովին, մնացեալ խմբագիրներին կողմից:

Եւ Պետրոս Միմէօնեանց պատասխանեց ասելով, որ, ինչպէս ուրիշ շատ հոնգամանքներում, նոյնպէս և ներկայ դէպքում, հայերս օրինակ ենք վերցնում ուսուներից:

Արդ՝ եթէ ժողովրդական կրթութեան գործը առաջ մղելու համար՝ անհրաժեշտ է համարուում հոգևորականութեան ձեռքից վերցնել նրանց ցարդ վայելած իրաւունքն, եթէ հարկաւոր է համարուում շլատել հոգևորականութեան ազգեցութիւնը ժողովրդի վրայից, — ապաքէն թող գրա առաջին օրինակն մեզ տան ուսուաց թերթերն:

— Ի հարկէ, ի հարկէ, պիտի տան, և կուտան, ես մեր խմբագիրներին էլ այս խորհուրդը տալու եմ, — ասաց Մաքսիմովը և ժողովը ցրւեցաւ:

Շաբաթներ անցան, ամիսներ անցան, և ուս մամուլը լուռ էր: Մի սող անգամ չէր գրում ուս հոգևորականութեան մասին:

Առ ժամանակ մեր հայ թերթերն ևս լուռ էին:

Նրանք սպասողական դրութեան մէջ էին գտնուում:

Սակայն Արծրունին անհամբեր զրանւեց, պաշտօնակիցներին տւած խօսքից

յետ կանգնեց և, իրրև «ագատամիտ ու յառաջագիմական» թերթ, ձեռք առաւ հայ հոգևորականութեանը:

Եւ Արծրունու այդ ագատամտութեան և յառաջագիմութեան հեռանքը և շարունակութիւնն է այն անմիտ, կատաղի, միևնոյն ժամանակ, անարդար, անհիմն յարձակումը հոգևորականութեան վրայ, նրա վարկաբեկումը ժողովրդի առաջ, որին ցայսօր մենք ականատես և վկայ ենք լինում հայ լրագրութիւնում:

Եւ եթէ հայ լրագրութիւնը այդ ձեռով ևս այդ յեզուով կը շարունակէ իր «ագատամտական յառաջագիմական» ուղղութիւնը հայ եկեղեցւոյ և եկեղեցականների նկատմամբ, — ապա շատ մօտիկ ապագայում մեզ վրայ կարդարանայ վրացական այն առածը, որ ասում է՝ «մուկը ծակը փորեց, փորեց, յանկարծ կատուին հանգիպեց»:

Վերջացնելով խօսքս Արծրունուց արտագրած հատւածի առաջին մասի վերաբերութեամբ՝ ես պէտք է ասեմ, որ այդ հատւածի մէջ միակ և անպայման ճշմարիտ մեղադրական կէտը, որից և կախում ունին մնացեալ կէտերից շատերը, — դա հայ հոգևորականութեան տգիտութիւնն է:

Իայց գրանում ևս մեղաւորը ինքը չէ գարձեալ:

Այլ ժողովուրդը, որից ծնած, սնած և

ընտրւած է այդ հոգևորականութիւնը:

Մեր հոգևորականութիւնը և մասնաորապէս ամուսնաւոր հոգևորականութիւնը, մեր ժողովրդի զարգացմանը, նրա բարոյականութեանը ամենաճիշտ և ամենակատարեալ ծանրաշափն է, աստիճանացոյցը:

Եթէ ուսաց համար ճիշտ է այն առածը թէ՛ «каковъ попу, таковъ и приходъ», — հայերիս համար էլ անշուշտ ճիշտ կըլինի ասել թէ՛ «каковъ приходъ, таковъ и попу»:

Ունենք չունենք մի քանի զպրանոցներ ունենք, որոնցից մէկ-երկուսը միայն տպահով են նիւթապէս: Իսկ մտաւորապէս և բարոյապէս խաղազունտ են զարձել հոգաբարձութիւնների ձեռին:

Ունենք մի ձեմարան, որի գլխին ամեն մի գրիչ բռնող մարդ կակալներ է, որ կտորում է անզաղար:

Եւ առաջին կակալ կտորողը, ձեմարանի վրայ առաջին անգամ քար գցողը հէնց ինքը Գրիգոր Արծրունին եղաւ, որ Գէորգեան ձեմարանի առթիւ, մի ժամանակ ասա թէ ինչ էր գրում.

«Կղերականութիւնը ի բնէ և սկզբունքով թշնամի է բարձրագոյն կրթութեան, բայց երբ որ տեսնում է թէ քահանայութեան մէջ զարթնում է իր իրաւունքների

հասկացողութիւնը, սխում են բազմանալ նրա մէջ կրթւած մարդիկ, — կղերական կուսակցութիւնը իսկոյն շտապում է ինքըն հիմնել մի հոգևոր աստուածաբանական դպրոց*): բարձրագոյն ընթացքով (որ ինքն սկզբունքով սրտի խորքից ասում է), որպէսզի ներգործութիւն ունենայ քահանաներ պատրաստող երիտասարդների զարգացման վրայ, ձեռն նրանց ուղեղը սահմանափակ կրաւորական կերպով, ինչպէս որ ինքն է ուզում: Եւ քանի լուսաւորում է կղերականութիւնը, այնքան նա աւելի ճարպիկ է լինում այդ տեսակ գործերում: Միայն տգէտ կղերական կուսակցութեան մէջ լու չեն որոշւում կղերական ձգտումները, կամ շատ անշնորհ և անվտանգ են երևում, որովհետև նա տգէտ է: Հէնց որ նրա մտաւոր զարգացման աստիճանը կը բարձրանայ, նա աւելի և աւելի վտանգաւոր կը լինի**):

Փրիխտիայութեան դոկտորի այս դատողութեամբ դուրս է գալիս ուրեմն, որ տգէտ հոգևորականութիւնը նախապատիւ պէտք է համարել, քան զարգացած հոգևորականութիւնը:

*) Ահօն ասում է «Արծրունին այստեղ ի նկատի ունի Գէորգեան ձեմարանը»:

***) Ահօ, հատ. Բ, եր. 438:

Եթէ այդպէս է, հապա էլ ինչի գան-
գատաւոր էք մեր հոգևորականութիւնից:

Նա ձեր ցանկացածն է: Գոնէ ձեզ հա-
մար, համեմատաբար, նա պէտք է որ տա-
նելի լինի:

Բայց խօսքը մեր մէջ մնայ, Արծրու-
նին ինքն էլ չէր իմանում յաճախ թէ ինչ
ասում:

Եւրոպայումն էլ, մեզանումն էլ եղել
են, այժմ էլ կան մարդիկ, կուսակցու-
թիւններ, որոնք սկզբունքով եկեղեցւոյ և
եկեղեցականութեան դէմ են: Չեն ընդու-
նում:

Եթէ Արծրունին այդ սկզբունքի դա-
ւանողներէցը լինէր, — ոչ որ իրաւունք չու-
նէր նրա հետ վիճել:

Բայց Արծրունին թէ եկեղեցի էր ըն-
դունում և թէ եկեղեցականութիւն:

Եւ ընդունելով եկեղեցականութիւն,
հոգևորականութիւն, նա մեծ դժգոհութիւն
և զայրոյթ էր յայտնում, որ այդ հոգևո-
րականութիւնը տգէտ է: Բայց երբ որ մար-
դիկ հոգևոր դպրանոցներ և ձեմարան են
բաց անում որպէսզի կրթւած, զարգացած
հոգևորականութիւն պատրաստեն, — Արծ-
րունին մեծ դժգոհութիւն և զայրոյթ էր
յայտնում նմանապէս, ասելով որ զարգա-
ցած, կրթւած հոգևորականութիւնը «աւե-
լի վտանգաւոր կը լինի»:

Ասում էր որ «կայ տգէտ, բայց կա-
և քաղաքակրթւած կղերականութիւն»:

Դժբաղդաբար, — աւելացնում է Արծ-
րունին, — մինը միւսից վտանգաւոր»:

Դառնալով Արծրունու հատւածի վեր-
ջին մասին, — ես միայն այսքանս կասեմ,
որ նրանով «Մշակի» հիմնադիրը պարզ ցոյց
տուեց, որ ինքը միանգամայն բոբիկ է ազ-
գային պատմական դէպքերի, ինչպէս հնա-
րի, նմանապէս և նորերի, գիտութեան
մէջ:

Որովհետեւ, ինչպէս ընթերցողը տեսաւ
ըստ Արծրունու դուրս էր գալիս, որ կրօ-
նափոխութեան առիթ տուողը մեզանում,
իբրև թէ հոգևորականութիւնն է եղել դար-
ձեալ:

Մինչդեռ ազգային կեանքին փոքր ի
շատ է ծանօթ ամեն մի մարդու համար
էլ պարզ է, որ կրօնափոխութիւնը մեզա-
նում հետեանք է լինում երբեմն անտեսա-
կան ճգնաժամերի, երբեմն քաղաքական
ճնշում ու հալածանքների, երբեմն զիւա-
նագիտական խաղ ու հաշիւների, երբեմն էլ
աշկարայ կաշառքի:

Եւ երբեմն էլ նաև անձնական, ետա-
կան կրքի ու թշնամութեան:

Պատմական և ժամանակակից քանի
 փաստեր կան թէ Տաճկաստանում և թէ
 մեզանում, երբ այս ու այն պատրիարքը
 եպիսկոպոսը, վարդապետը, երբեմն նաև
 քահանան, աքսոր են քշել, բանտերն են
 ձգել պաշտօններից են զրկել միմիայն
 այն պատճառաւ, որ աշխատել իրանց մո-
 լորւած ոչխարներին յետ կանգնեցնել ի-
 րանց մաադրութիւնից—կրօնափոխութիւ-
 նից:

ԺԱ.

Հայ ժողովրդի կրօնափոխութեան առ-
 թիւ՝ Արծրունու յօդւածը վերջանում է մի
 գեղեցիկ բարեմաղթութեամբ, որ ես ու-
 բախութեամբ արտագրում եմ: Եւ հաւա-
 տացած եմ, որ ամեն մի հայ հոգևորական
 ի բոլոր սրտէ կը ձայնակցի այդ բարեմաղ-
 թութեանը, միայն թէ շեշտելով, որ նրա-
 նում հոգևորականութեան հասցէին ուղ-
 դած բառերը նա իր վրայ չէ ընդունում
 և նրանց համարում է Արծրունու զրպար-
 թեան և ազիտութեան արդիւնք ուրիշ ո-
 չինչ:

—«Աստուած տայ,—բարեմաղթում է
 Արծրունին,—որ ժողովուրդը այնքան զար-
 գանայ, որ հասկանալով ձեր (հոգևորակա-
 նութեան) անիրաւութիւնները և հարստա-

հարութիւնները, մեղադրի միայն ձեզ,
 պաշտօնեաներիդ, բայց ոչ թէ իսկոյն անջա-
 սի, գնայ բողոքական կամ կաթոլիկ դառ-
 նայ*) վրէժխնդիր լինելու ձեր ճնշող
 վարմունքից որ լուսաւորելով՝ սովորի
 զանազանել սկիզբը (սկզնունքը ուզում է
 ասել) գործարարի ևից, սովորի պաշտել մեր
 եկեղեցաւ մախար հիմքը հոգևորականների
 անմաքուր վարմունքից»**):

Ինչպէս այս հատուածի վերջում նմա-
 նապէս և «Մշակի» շատ տեղերում, Արծ-
 րունին յաճախ յիշում է ս. Լուսաւորչին
 և զմայլմամբ գովում է հայ նախնի եկե-
 ղեցին ու եկեղեցականներին:

Շուտով մենք կը տեսնենք թէ ինչու մն
 է կայանում Արծրունու գովքը նախնի ե-
 կեղեցուն և եկեղեցականներին:

Առայժմ ծանօթանանք Արծրունու
 ցարդ ցոյց տւած գործունէութեան ան-
 փոփմանը, որ նա ինքը արել է իր ա-
 ռաջնորդնորից մէկում «Մշակի» հրատա-
 րակութեան երրորդ տարին:

—«Մենք սկսեցինք,—գրում է Արծրու-
 նին,—հրատարակել մեր թերթը, սկսեցինք
 ամենքին մեր կարծիքը ուղիղ երեսին ա-

*) Ընդգծւումներն իմն են:

**) Նոյնը Բ 315:

սել: Հին և նոր սերունդ, հոգևորականներ, կանայք, մանկավարժներ, գիւղացիներ, — ամէնքը անցան մեր գրչի տակով:

«Մի՞թէ սպասում էին որ մենք լրագիր ենք սկսում հրատարակել այն նպատակով, որ շողոքորթենք:

«Մեր այդ բոլոր հասարակական տարրերից երեք ամենաուժեղ, ամենանշանաւոր տարրեր մեզ ատելով ատեցին, դարձան մեր անհաշտ թշնամիներ...»

«Հին սերունդ՝ ասորյակաւորեան և ևերկայացուցիչ: Նոր սերունդ, ուսումնական երիտասարդութեան՝ գիտութեան և ևերկայացուցիչ:

Հոգևորականներ՝ կրօնի և ևերկայացուցիչ:

Այդ երեք, մեր հասարակութեան մէջ ամենանշանաւոր, ամենամեծ հեղինակութիւն ունեցող գործիչները, ինչպէս վարեցին մեզ հեա...

Սուաշիւր սկսեց բերանացի անէծքներ թափել մեր գլխին:

Երկուրդը որ առաջ երբէք չէր մտածում կարգալու, գրելու և մտաւորապէս պարապելու, կազմեց մեր դէմ մի հակալրագիր, որ ամէն շարժմունք, ամեն մի խօսք լրտեսելու և աղաւաղած կերպով ներկայացնելու համար:

Երրորդները փորձեցին հանդէս դուրս գալ, ինչպէս նրանց սովորութեանը վայել է, մասամբ գրականութեան մէջ, մասամբ զանազան այլ գայտի միջոցներով... *):

— «Արդեօք վախեցա՞ք, արդեօք կատուղեցի՞ք, արդեօք վրդովեցա՞ք...»

«Չգիտենք, — պատասխանում է Արծրունին ինքն իրան, — բայց գիտենք թէ սատիկ ատեցիք երեքդ էլ...»

«Ինչ էր պատճառը:

*) Արծրունու վերջին բառերը, որ դիտմամբ զմեցինք, մեզ շատ տարօրինակ է թւում և անհասկանալի: Եւ այդ ոչ այն պատճառաւ, որ նրա դէմ հանդէս եկող հոգևորականները մէջ չէր կարող մի անպիտան մատնիչի մէկը գտնուել: Բայց եթէ, իրաւի, մի այդպիսի անձն գտնուել է, պէտք է խոստովանել, որ նա ծայրայեղ ապուշին մէկն է եղել, որ կարծել է թէ ինքը կարող է մազաչափ քիսս հասցնել այն խումբագրին, որ թիֆլիզի կառավարչական բարձր շրջաններում միշտ ընդունւած և յարգուած էր իբրև ազատամիտ թերթի խմբագիր, որի թերթը գաւառապետներն ու տանուտէրներն էին տարածում, որի 25-ամեայ յոբելեանը շնորհաւորելու փութացել էին՝ կառավարչապետի ներկայացուցիչը, նահանգապետը, ցենզուրական կոմիտետի, նահանգական դատարանի նախագահները և ուրիշ պաշտօնեաներ» (1էօ հատ. Բ. էր. 375. ծանօթութիւն):

(Ծանօթ. յօդ.

Արդեօք ձեզ կատարեցրեց մսկերի և ուրախ խօսերի ճշմարտաբանը կամ գաղութարևերի ազատաբանը *):

Եւ այս ամէնը, սիրելի ընթերցող, կոչում էր... հրապարակախօսութիւն, կոչում էր ազատամտութիւն...

Միքանի տարի՝ ճակատն ի քիրտ՝ մարդն աշխատում էր ոչ թէ հասարակութեանը ծառայել, այլ հասարակութեանը իրան ծառայեցնել, որի գործունէութեան գլխաւոր նշանարանը՝ աջ ու ձախ նախատելն ու հայտնելն էր, որ իր պահանջած թւով բաժանորդ չունենալու պատճառաւ հասարակութեան երեսն ու վեր կանչում էր՝ «հայեր, դուք ոչ ազգ եք, ոչ էլ հասարակաբան» եր. 287), որի կարծիքով «հայի կատարելապահեցողը, նրա իրեայք երկու բանն են, որ կեանքի ամեն խնայախոխում նրա միակ չափ ու կշիռն են՝ մի սուղիւ եւ մի ուրախ...» (եր. 357),—այո հէնց այս հրապարակախօսը երբ տեսաւ, որ հայ հասարակութիւնը սկսեց երեսը շուռ տալ իրենից, թուլացաւ, վհատացաւ և մի ծայրայեղութիւնից դէպի միւսը գոլորելով, սկսեց յուսահատական մտքեր յայտնել, թէ՛ «հայ երիտասարդները սխալւեցան, որ գնացից Եւրոպա գիտութիւն սովորելու:

*) Լէօ հատ. Բ. եր. 324

Նրանք պէտք է նախ գնային արհեստներ սովորելու, որպէսզի վերագառնալով Եւրոպայից սկսէին կամաց-կամաց պատրաստել հասարակութեանը»:

«Ուսում ասած գիտնական երիտասարդներ չէին հարկաւոր մեզ, այլ նախ և առաջ՝ կօշկակարներ և այլ արհեստաւորներ: Մենք ոչինչ չկարողացանք սովորացնել,—խոստովանում էր Արծրունին,—մեր գրեթէ ամբողջը ոչինչ չփոփոխեցին մեր կեանքի մէջ, այսպիսի հասարակութեան վրայ մենք յոյս չունինք *):

— Լոյս գառնայ Գօգօլի և նրա ենթասպայի կնոջ (унтеръ офицера) հոգին թող ասենք, ընթերցող:

Եւ միևնոյն ժամանակ չմոռանանք, որ միևնոյն այս Արծրունին էր, որ մի տարի առաջ ինքն իրան հրատարակում էր այնպիսի հրապարակախօս, որ գիտէ «ճանաչել ծնող տաղանդ, հետազօտել հասարակութեան մէջ քնած հարստութիւն շրջապատել իրեն ընդունակ մարդիկներով ուղղութիւն տալ ամենքին հասկացնել վերջապէս իրենց ընդունակութեան յարմարեղ գրական ստեղծածի ձևը» **):

*) Լէօ Հատ. Բ. երես. 326:

***) Նոյնը եր. 165.

կարծում ենք, որ կոմենտարեաները աւելորդ են:

Ուստի դառնանք այն բանին թէ՛ ինչումն էր կայանում Արծրունու գովաստանութիւնը նախնի եկեղեցու և եկեղեցականների վերաբերմամբ:

— «Միթէ եկեղեցին նոյնն է, որ Լուսաւորչի ժամանակն էր, — գրում էր Արծրունին: — Միթէ մեր այժմեան հոգևորականները նոյն խորին յարգանք և պատիւունին ժողովրդի մէջ, ինչպէս հինգերորդ դարի հայ հոգևորականները, որք առաջնորդում էին իրենց հզօր ձեռքով ժողովրդական շարժմանը Զրադաշտի հետևողներին դէմ...: Միթէ նրանք ժողովրդական են, ինչպէս առաջ»:

Թէպէտ և կրօնական խնդիրներում կատարեալ անխտրականութիւն, չէզոքութիւն քարոզող մի ազատամիտ թերթի էջերում այդպիսի տողեր կարգալը զւարճալի է և ծիծաղելի, բայց և այնպէս այդ տողերից հեռուում է ուրեմն, որ նախնի, հինգերորդ դարի հոգևորականներից գոհ էր Արծրունին մասնաւորապէս այն պատճառաւ, որովհետև նրանք ժողովրդական շարժումներին պարագլուխ էին հանդիսանում:

Եւ պարագլուխ հանդիսանալով ժողովրդական շարժումներին, — պատասխանում եմ ես Արծրունուն, — հինգերորդ դարի հոգևորականները փրկում, ազատում էին այդ ժողովրդին և նրա ինքնուրոյնութիւնն ու կրօնը օտարի լծից, նրա ձեռքի տակ գերի լինելուց, նրա հետ ձուլելուց նրա զանգուածում իր ինքնուրոյնութիւնը կորսնցնելուց, իր անկախութեանն ու ազատութեանը վրայ խաշ դնելուց:

Իսկ այժմեան շարժումները, — այս պէտք է լաւ իմանան մեր հին և նոր Արծրունիները, — ժողովրդական շարժումներ չեն, այլ քաղաքագիտական խաղեր, արհեստական խլրտումներ, խորամանկ ձեռնածութիւններ, որոնց նպատակը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հէնց ժողովրդի՝ իրեն ձեռքով իր տունը քանդել, ոտով-գլխով ինքնիրան ձգել իր աջակցութեամբ սարքած թալակի մէջ, իր ձեռքով իր գերեզմանը փորել, իր ձեռքով իր պատանը կարել, պատրաստել:

Այս այսպէս լինելով, շատ հասկանալի է, որ ներկայ ժամանակի հոգևորականութիւնը չի կամենալ իր հարազատ զաւակների ինքնասպանութեան անմիտ գործին մասնակից և մեղսակից դառնալ: Եւ եթէ եղան ոմանք, որոնք կամայ թէ ակամայ, փորձութեան չգիմացան, — նրանք էլ վերջ

ի վերջոյ անշափ գղջացին և խղճի խայթով և հառաչանք ու լացով գերեզման իջան:

Էլ չեմ խօսում այն մասին, որ նախնի եկեղեցականների գնահատելի ծառայութիւնը միմիայն ժողովրդական շարժումներին պարագլուխ կանգնելը չէր, այլ ուրիշ և աւելի էական ծառայութիւններ, առանց որոց ժողովրդական շարժումները չէին էլ կարող տեղի ունենալ: Եւ եթէ ունենային էլ—կը վիժէին ինչպէս որ վիժեցին առանց ժողովրդի մասնակցութեան և հակառակ նրա ցանկութեան սկսած արհեստական շարժումները, քաղաքագիտական խաղերն ու ձեռնածութիւնները, որոց այնքան սիրահար գտնւեցաւ հայ ազատամտութիւնն առհասարակ:

Եւ դեռ այսօր էլ, աւաղ, դեռ չէ դադարում սիրահար լինելուց:

ԺԲ

Եկեղեցւոյ վերանորոգութեան հարցը մեր մէջ առաջին անգամ զարթեցրել է «Հիւսիսափայլի» խմբագիրը, Ստ. Նազարեանց:

Նրան հետևեցաւ քառորդ դար յետոյ և «Մշակ», որ վերանորոգութեան առթիւ

շատ անգամ գրել է: Արծրունու այդ գրածների համառօտ բովանդակութիւնը այս է, ըսաւ Լէօի:

— «Վերագառնանք, — ասում է Արծրունին, (գրում է Լէօն) մեր եկեղեցու նախնական պարզ ձևին, վերակազմենք մեր եկեղեցին այնպէս, ինչպէս նա գոյութիւն ունէր քրիստոնէութեան առաջին դարերում, թող չլինի կուսակրօն հոգևորականութիւն, թող եպիսկոպոսները, վարդապետները ամուսնացած մարդիկ լինին, ինչպէս ամուսնացած էին Գրիգոր Լուսաւորիչը և նրա ժառանգները» *):

Դեռ առաջ փոքր ինչ խօսենք այս հատւածի առաջին տողերի մասին, ապա դառնանք վերջին տողերին:

Դնելով եկեղեցւոյ վերանորոգութեան հարցը և բազմիցս կրկնելով Արծրունին ոչ մի անգամ և ոչ մի խօսքով չյայտնեց նախ՝ թէ ինչ ձևով, ինչ եղանակով կատարենք եկեղեցւոյ վերանորոգութիւնը, և ապա՝ թէ ինչ օգուտ է սպասում նա ազգի համար՝ եկեղեցւոյ վերանորոգութիւնից:

*) Նոյնը Բ 316.

Իսկ առանց այդ հարցերին պատու-
խանելու, և կամ առանց այդ հարցերը
նախապէս որոշած ու վճռած լինելու, ա-
մեն մի միտք, ամեն մի առաջարկ որքան
էլ որ ինքնըստինքեան, լաւ, գեղեցիկ, օգ-
տակար լինի,—կը դառնայ ժամավաճա-
ռութիւն:

Բանը միտք յայտնելն, առաջարկ ա-
նելը չէ, այլ այդ առաջարկութեան իրա-
կանացնելու ճանապարհ գտնելն է:

Եթէ ս. Գրիգոր Լուսաւորիչը կարողա-
ցաւ հայ հեթանոս եկեղեցին վերանորոգել
և հեթանոս հայերին քրիստոնեայ դարձ-
նել,—դա նրանցից էր, որ հեթանոսութիւ-
նը հայերի մէջ իր հմայնքը շատ և շատ
կորցրել էր, եթէ ոչ ամբողջ ժողովուրդը
գոնէ նրա մեծագոյն մասը, հեթանոսու-
թեան ոչնչութիւնը զգացել և ըմբռնել էր:

Յետոյ՝ ս. Լուսաւորիչը իր քարոզնե-
րին, իր բարոյական ուժին նիզակակից
ունէր նաև նիւթական ոյժ, Տրգատ թա-
գաւորին և նրա դորքերին:

Եւ յետոյ՝ ժողովրդին քրիստոնէական
արարողութեամբ մկրտելուց յետոյ՝ ս.
Լուսաւորիչը իսկոյն և եթ ձեռնարկեց
դպրոցներ թացման, որոց մէջ զրօսից բեր-

ւած և հրաւիրւած վարդապետներն ու
քահանաները մեծ եռանդով սկսեցին քրի-
ստնէութիւնը աւանդել մասաղ սերնդին:

Լուսաւորչից յետոյ՝ եկան ուրիշ հայ-
րապետներ, որոնք էամանակի պահանջ-
ման համեմատ՝ ընդարձակեցին եկեղեցւոյ
կարգերը, ծէսերը, արարողութիւնները:

Եւ ուր ուրեմն՝ հազար վեց հարիւր
տարիներ ընթացքում հետզհետէ զարգա-
նալով հայ եկեղեցին մեր ձեռքը հասաւ
իր այժմեան կազմակերպութեամբ:

Եւ դա այն եկեղեցին է «որով դարեր
շարունակ մխիթարուում էր մահմէդակա-
նութեամբ շրջապատւած ժողովուրդը,
դէպի նրան էր գնում հայի փողը, մտա-
հոգութիւնը:

Նրա շուրջն էին պտտում բանաստեղ-
ծութիւնն ու երգը,—շարականները, որ
երգում են որդւոց որդի, մեղեգիները, որ
հնչում են կիսակործան կամարների, տակ
աղօթքները, որ մրմնջում են ձեր ու շա-
հել, աշխարհական ու կրօնաւոր,—բոլորն
էլ ծնունդ սեփական ցաւերի, արգիւնք
հայկական մտքի և երևակայութեան:

«Փարած նրա պատերին ու կարգերին
հայ ժողովուրդը, այդ քաղաքական անկա-

խութիւնը Փոքր Ասիայի մէջ, տանջւեց իր եկեղեցւոյ համար, մաշւեց նրա վշտերով, քանդւեց նրա պահպանութեան համար: *)

— «Նրա այդ տանջարանի (հայերի դարաւոր հալածմունքների) մէջ, որ կոչւում է հայկական իրականութիւն, կանգնած է մի կիսաւեր տաճար, կառուցւած հայերի ձեռքով, արիւնով ու քրտինքով, միակ վայրը, ուր հալածական հայր իրան զգում է իր տանը, հեռու թշնամու աչքերից, ազատ օտար միջամտութիւնից, այն փարախը, ուր ընթացիկ տանջանքներով յոգնած, աղաւաղւած ամբոխը մուտք է գործում հանգիստ առնելու, մրմնջալու իր աղօթքը, — սիոփանքը թշւառների, բանալու իր վշտոտ սիրտը, տանջւած հոգին. մի հատիկ տեղ, ուր նա աղօթում է իր լեզւով, իր ձեռով, իր ստեղծած ծէսերով, միակ անկիւնը, ուր նա իր տէրն է. ազատ, անկախ, ինքնիշխան **):

Այժմ վեր են կացել Ստ. Նազարեանց, Գրիգոր Արծրունի և Երւանդ Տէր-Մինասեանց և պահանջում են, որ վերանորոգենք

*) Կովկասի վերքեր եր. 62.

***) Նոյնը եր. 63-64.

եկեղեցին, այսինքն՝ ստիպենք ժողովրդին որ «իր ձեռով և իր ստեղծած ծէսերով» եկեղեցին՝ վերածէ գերմանական, և կամ այս ու այն եւրոպացի ազգի եկեղեցուն համեմատ:

Բայց ով պիտի ստիպէ ժողովրդին, կաթողիկոսը արդեօք:

Սակայն նա այդ իրաւունքը չունի: Եւ եթէ ունեցաւ էլ, ժողովուրդը նրան չի լսի:

Եթէ կաթողիկոսը կամեցաւ ոյժ գործ դնել, — նախ և առաջ՝ պէտք է դեռ այդ ոյժը գտնի, ճարէ: Իսկ եթէ գտաւ, ճարեց — այն ժամանակ ժողովուրդն էլ իր ոյժը հրապարակ կը հանէ:

Յետոյ: Յետոյ եկեղեցին կը վերանորոգւի՞ արդեօք թէ քարուքանդ կը լինի: Եւ երբ քարուքանդութիւնը սկսւի՞ Արծրունու հաւանած բողոքական, կաթոլիկ, մահմէդական և յունաղաւան հայերը, նրանց Ամիրխանեանները, Հասունեանները ի՞նչ կանեն արդեօք:

Ես ընդունում եմ, որ մի քանի, կամ մի քանի տասնեակ Նազարեանների, Արծրունիների և Տէր-Մինասեանների համար մեր եկեղեցին իր հմայնքը կորցրել է, որ

նրանք՝ հակառակ իրանց ցանկութեան՝
չեն կարող մեր եկեղեցին յաճախել, նրան
սիրել:

Մակայն նազարեաններն, Արծրունիներն
ու Տէր-Մինասեանները իրանց հետև-
որդներով՝ գեռ հայ ժողովուրդ չեն կազ-
մում: Եւ եթէ ինձանից չեն վշտանայ ես
կասեմ, որ նրանք ոչ մի եկեղեցի չեն յա-
ճախիլ, չեն կարող իրենց սիրելի լինել այդ
եկեղեցին նախնի թէ այժմեանը:

Կրօնական խնդիրները այնպիսի խըն-
դիրներ չեն, որտեղ գեռ խաղացողները՝
փոքրամասնութիւնն է լինում:—Ոչ: Եթէ
ընդունում էք, որ մեր եկեղեցին ժողո-
վրդական եկեղեցի է,—ապա թողէք, որ
ժողովուրդը ինքը իր եկեղեցին վերանո-
րոգէ:

Այն էլ՝ երբ ինքը հարկաւոր կը հա-
մարէ:

Նազարեանց, Արծրունի և Տէր-Մինասե-
անց եկեղեցւոյ վերանորոգութիւնը պա-
հանջելով՝ անշուշտ նպատակ ունեն փու-
թացսել ժողովրդի կրթութիւնը, նրա լու-
սաւորութիւնը՝ եկեղեցւոյ միջոցաւ:

Այսպէս է միթէ: Արդեօք նրանք, մա-
նաւանդ Արծրունին, անկեղծօրէն այդ նը-

պատակաւ էր պահանջում եկեղեցւոյ վե-
րանորոգութիւն, թէ, գուցէ, այն նպատա-
կաւ, որպէսզի եկեղեցականները քաղաքա-
կան շարժումների պարագլուխ հանդիսա-
նան:

Եթէ այսպէս է, եթէ մեր «հայ Լիւ-
տէրները» ընդունում են ժողովրդի կրթու-
թիւնը եկեղեցւոյ միջոցաւ,—ապա ուրեմն
նրանք պիտի համակերպին եկեղեցւոյ
հիմնադրին,—Յիսուս Քրիստոսին,—և նրա
աւետարանին:

Ինչպէս յայտնի է, ոչ եկեղեցւոյ Հիմ-
նադիրը, ոչ էլ Աւետարանիչները ոչ մի
ուշադրութիւն չէին դարձնում արտաքին
բաների վրայ:

Նրանք յաճախում էին Մովսիսական
եկեղեցին, նրա պատուէրները, նրա ծէսերը
կատարում էին, նրա օրէնքները պահում
էին: Այդ ծէսերի և այդ օրէնքների փո-
փոխման, տաճարի վերակազմութեան մա-
սին՝ խօսք չէին բաց անում: Եւ երբ օրի-
նապահները ուզում էին անպատճառ Քրի-
ստոսից մի դրական կամ բացասական
պատասխան լսել իրենց օրէնքների մասին
—նա մեղմութեամբ պատասխանում էր՝
«ոչ եկի լուծանել զօրէնս, այլ լնուլ»:

Բայց դրա փոխարէն՝ Քրիստոս և նրա առաքեալները իրանց բոլոր ուշադրութիւնը դարձնում էին ժողովրդի սրտի, մտքի, հոգու վրայ:

Նրանք բոլոր ժամանակը նւիրւած էին «ներքին մարդուն» կրթելուն, մարդու ներքինը լուսաւորելուն, քաջ գիտնալով, որ ամեն ինչ ներքինից է կախւած:

Այդ ուզութեամբ էին գործում և մեր նախնի կաթողիկոսները, ուստի և Ս. Գրիգորը կոչւում էր Լուսաւորիչ հոգւոց, ս. Սահակ Լուսաւորիչ մտաց, ս. Ներսէսը՝ Լուսաւորիչ սրտից:

Նրանք մարդու ազատութիւնը այնտեղ չէին գտնում, որտեղ մեր «ազատամիտներն» են որոնում, այլ, —ասում է Պօղոս առաքեալը, — «անդ է ազատութիւն, ուր Հոգի Տեառն է»:

Քրիստոս չէր պատւիրում թէ Աստուծուն պէտք է աղօթել Քորազին սարի գլուխին, ինչպէս Սամարացիներն էին պահանջում, կամ նրուսաղեմում ինչպէս Հրեաներին էին անում, այլ Քրիստոս ասում էր թէ Աստուծուն պէտք է աղօթել հոգով և ճմարտութեամբ»:

Եկեղեցւոյ վերանորոգութիւն պահան-

ջողները, նրան իր նախկին պարզութեանը վերածել ցանկացողները, ահա թէ իմ կարծիքով, ինչ բանի պիտի ձգտին, ինչ բանի համար պիտի աշխատին ու տքնին: Ապա թէ ոչ՝ Լուսաւորչի ժամանակայ պարզութեանը դիմել ասելով՝ վեր կենալ և 1600 տարի կեանք ունեցող մի պատկառելի հնութիւն տակն ու վրայ անել, հայի հոգեբանութիւնը, նրա սրտին, նրա հասկացողութեանը անձանօթ արտաքին այս ու այն յեղաշրջումը կատարելով, — դա չէ նշանակում ժողովրդին բարիք անել: Այլ՝ չարիք: Եւ ամենամեծ չարիք:

Հայ ժողովուրդը 16 դար այդ եկեղեցիով ապրել և մխիթարւել է: Թող էլի մի քանի դար ապրի, եթէ ուզում է այդպէս ապրել:

Ազատամտութեան ամենազլխաւոր պայմանը՝ ուրիշի, — նամանաւանդ մի ամբողջ ժողովրդի, ազգի, — խղճի և գիտակցութեան վրայ շժանրանալն է:

Դուք մի շտապէք, գայթակղութեան առիթ մի տաք: Ժամանակը ինքնիրան, կամաց-կամաց, կանի ինչ որ հարկաւոր է:

Ուզենաք չուզենաք բնութեան օրէնքը — էփօլուցեան իրանը կանէ:

Եւ արդէն արել է քշից շատից՝ թէ-
պէտ և ոչ մեր ազատամիտների ցանկա-
ցած չափով, ի հարկէ:

Էհ ինչ արած:

Բնութեան օրէնքով զեանի մէջ ընկած
սերմը՝ պէտք է առժամանակ այնտեղ մը-
նայ, բեղմնաւորւի, ծլի, արմատ բռնի,
արմատից բուն շինւի, բնից՝ ճղներ, ճղնե-
րից՝ տերևներ, կոկոններ, ծաղիկներ, հուն-
դեր և ապա թէ պտուղներ:

Օրհնեալ լինի հայի Աստուծը, — մեր
եկեղեցին, — հակառակ մեր Արծրունիների
պնդածին, կղերական կազմակերպութիւն
չէ ունեցել և չունի:

Եւ եթէ, ինչպէս հնումը, նոյնպէս և
նորումս նրանում կղերականութեան նը-
շաններ երևում են, — դրանք եկեղեցւոյ
ներքին յատկութիւններիցը չեն, այլ օտա-
րամուտ պատուաստումներ են տիրող իշ-
խանութիւնների կողմից ներմուծւած: Կը-
ղերական կազմակերպութիւն չունենալով՝
հայ եկեղեցին բնաւ արգելք չի եղել, որ
ժողովուրդը ինքնուրոյնաբար գործէ յօ-
գուտ սեփական օգտին, սեփական կոթու-
թեանն ու զարգացմանը այս ու այն աս-
պարիզում:

Ընդհակառակը եկեղեցին և եկեղեցա-
կաններն իրենց ձեռքից եկած աջակցու-
թիւնը և գոհաբերութիւնը չեն խնայել և
չեն խնայում ամեն մի բարենպասակ,
ազգային գործի համար:

Թողնելով եկեղեցական զպրօցները ի-
րանց շրջանակին մէջ, աշխարհիկ զպրօց-
ներ հիմնեցէք, թատրոններ շինեցէք, զե-
րասանական խմբեր կազմակերպեցէք, մաս-
նագլխական այլ և այլ թերթեր հրատա-
րակեցէք, ոչ թէ մի, այլ մի քանի կու-
տուրական միութիւններ կազմեցէք, գրա-
կան Փօնդ հիմնեցէք, հայ հեղինակի գրը-
ւածքները տարածելու միջոց հնարեցէք և
այլն և այլն:

Ոչ ոք ձեր ձեռքը չի բռնիլ, ոչ ոք ձեզ
չի խանգարիլ:

Բայց խօսքը մեր մէջ մնայ, մենք
գործի մարդիկ չենք, այլ խօսքի, լոկ
խօսքի...

Մենք շինելու ցանկութիւն և շնորհք
չունինք, այլ միայն քաճողելու, մենք պար-
տականութիւն չենք ճանաչում, այլ մի-
այն իրաւունք են բանեցնում, մենք եր-
կընքում կուռնկներ ենք որոնում, իսկ լո-
րերին մեր ձեռքի տակից փախցնում...:

Դառնում եմ կուսակրօնների ամուսնութեան հարցին:

ԺԳ

«Մեզանից չեն պահանջում հրաշքներ կատարել աշխատելու ժառանակ»... և այլն — այս խօսքերովն էր զարդարել Արծրունին «Մշակի» հրատարակման առթիւ՝ իր ցրուած յայտարարութեան ճակատը, ինչպէս իր տեղումը տեսաւ ընթերցողը:

Այդ գեղեցիկ և իմաստալից խօսքերը՝ որ ինչպէս յիշել ենք Փրանսիացի էդմօնդ Աբուի խօսքերն էին, որոց գործադրութեան ժամանակ Արծրունին դաւաճանեց հեղինակին:

Եւ աշխատանք ասելով միմիայն նախատել ու հարւածել հասկացաւ:

Մի երկու տարի յետոյ՝ Փրանսիացի Պրուզոն անունով գրողից վերցնելով Արծրունին քարոզում էր թէ սիրել կին, սիրել ընտանիք և միևնոյն ժամանակ սիրել մի գաղափար և սիրել մարդկութիւնը, — մինը միևսին արգելում է: Մինը խլում է մարդից այն ոյժը, այն եռանդը, որ հարկաւոր է գործ դնել միևսի վրայ*)

*) Ահօ հատ. Բ, էր. 365—366

Եւ հետևաբար. — եզրափակում էր Արծրունին, — «մտաւոր կեանքով ապրող, նոր հասարակական գաղափարներ քարոզող հայը, պսակելով ժամանակակից կրթւած հայ ազնկայ հետ, չէր գտնի նրա մէջ արձագանք իր այն մտքերի, որոնք կազմում են նրա համար ամբողջ կեանքի նպատակը, այլ կը գտնէր նրա մէջ միայն սառնութիւն, անտարբերութիւն դէպի իդէալը»:

Այս տեսակետով պէտք է ուրեքն հետևեցնել, որ կուսակրօնութիւնը սահմանողներ խելացի բան են արել դարեր առաջ իրագործել տալով մի գեղեցիկ սկզբունք, որի օգտակարութիւնը Արծրունին զեռնոր էր սկսում հասկանալ և քարոզել ու պաշտպանել:

Սակայն ինչպէս էդմօնդ Աբուի քարոզած մտքին սկզբում, նոյնպէս և վերջերում Պրուզոնին՝ դաւաճանեց Արծրունին դարձեալ:

Եւ այս դաւաճանական քայլին մէջ՝ մեր հրապարակախօսին գլորողը եղաւ այս անգամ Բազէլի աւետարանական ընկերութեան քարոզիչ յայտնի Աբրահամ Ամիրխանեանցը:

Օգտւելով Արծրունու մինչև մոլու-

թեան հասնող նորասիրութիւնից, գիտնալով, որ նրա կտրուկ գրիչը ազդեցութիւն է ունենում թերուսների, տգէտների վրայ, — հինաւուրց, ճարպիկ քարոզիչը, որ ըստ թւոյ իր արած որսերի զբամական վարձատրութիւն էր ստանում Աւետարանական ընկերութիւնից, կամաց-կամաց «Մշակին» մօտեցաւ և համոզելով նրան իբրև թէ նախնի կաթողիկոսները կնիկ ունէին, սկսեց այս նոր միտքը արծարծել ու տարածել ազգի մէջ:

Այս մասին գրում էր Արծրունին, գրում էր նրա գաղափարների ամենամոլեռանդ քարոզիչը — Րաֆֆին, գրում էր և ինքը՝ Աբրահամ Սմիլիանեանցը:

Վերջինս ի միջի այլոց մի գեղեցիկ պատկեր էլ գրեց, ուր զուրս էր բերած հայոց կաթողիկոսուհին վեհարանում իր ընկերուհիներին հիւրասիրելիս:

Կրօնական հարցերում անտարբերութիւն, անխտրականութիւն քարոզող թերթում բարձրացած այս հարցը մէծ բանակուի նիւթ դարձաւ «Մշակի» և «Մեղուի» մէջ:

Տողերիս գրողը թէև այդ բանակուին չէ մասնակցել, բայց «Մեղուի» մէջ խօ-

սելով Րաֆֆիի «Կայծեր» վիպասանութեան մասին, — որի մէջ ընդարձակ տեղ ու պաշտպանութիւն էր գտնում մեր կաթողիկոսներին կին ունենալու հարցը, — հակառակ է զուրս եկել այդ պաշտպանութեան հիմնելով այս ու այն պատմական փաստի վրայ:

Ցաւում եմ, որ ձեռքիս տակ չունիմ «Մեղուի» №№-ները: Բայց և այնպէս յիշողութեամբ այստեղ առաջ կը բերեմ իմ ունեցած փաստերի գոնէ գլխաւորներն ի տեղեկութիւն ընթերցողներին:

Եկեղեցականներին կին ունենալու կամ չունենալու հարցը երկու հազար տարի առաջ վճռել են եկեղեցու Հիմնադիրը և նրա աշակերտները: Երբ մարդ ու կնոջ մէջ եղած տարածայնութեանց առթիւ՝ Յիսուսի աշակերտները մի օր ասացին՝ «լաւ է չամուսնանալ, — Յիսուս պատասխանեց՝ «ոչ ամենքեան բաւական են այդմ բանի, այլ որոց աուեալ է» *):

Միևնույն միտքը յայտնում է Պօղոս առաքեալը ասելով՝ «կամի՛մ եթէ ամենայն մարդ լինէր իբրև զիս, այլ իւրաքանչիւր ոք զիւր շնորհս ունիցի՛ յԱստուծոյ՝ ոմն

*) Մատթ. ԺԹ 11:

այսպէս և ոմն այնպէս: Բայց ամուրեացն և այրեացն ասեմ. լաւ է նոցա եթէ կացցեն իբրև զիս: Ապա թէ ոչ ունիցին ժոյժ ամուսնացին, զի լաւ է ամուսնանալ՝ քան զՂեռնուլ» *):

Այս խօսքերով՝ Յիսուս և նրա աշակերտը ամուսնանալու կտամ շամուսնանալու հարցը թողնում են մարդու իրեն ազատ կամքին: Թէպէտ և միևնույն ժամանակ Պօղոս առաքեալը աւելի շամուսնանալու կողմն է հակւած:

Նրա յաջորդներից՝ Արիստակէսը ամուսնացած չէր: Ներսէս Մեծը կաթողիկոս դառնալիս կնոջն արձակեց, կամ թերևս կինը մեռած էր:

Բայց կային և ամուսնացած եպիսկոպոսներ ու կաթողիկոսներ:— Վրթմանէսը:

Ինչ էլ որ լինի՝ եկեղեցականների այդ անհատական ազատութեանը վերջ տրւեցաւ Ե. դարում:

Եւ այդ դարից սկսեալ՝ ամուսնաւոր բարձրաստիճան եկեղեցականների մենք այլևս չենք պատահում: Որովհետև այսուհետև բացարձակ կանոն սահմանւեցաւ նրանց համար թէ՛ «Կոչեսցի ընտրեալն յատ-

*) Ա. Կորնթ: է. 7—8.

եան եկեղեցւոյն և խոստացի գանձանւիրութիւն ցմահ» *): Եթէ ի կաւանքեացն դասե իցե, բաժակեսցի ի կնոցէ իստե եւ ի սակե եւ յորդաց, ծառայել հոգոց մարդկակ եւ եկեղեցոյն Աստուծոյ»:

Այս կանոնը սահմանողները անշուշտ զօրաւոր հիմունքներ ունէին:

Իւրաքանչիւր եկեղեցական իր ազատ կամքին թողնելը՝ այլ և այլ անյարմարութիւններ և անտեղեկութիւններ էին առաջ բերել եկեղեցւոյ մէջ: Անհրաժեշտ դատւեցաւ զրանց առաջն առնել:

Եւ եկեղեցականութիւնը, իբրև հոգեւոր գլխւորութիւն, որոշ կարգի ու կարգապահութեան ենթարկել, առանց, սակայն, մարդկանց անհատական ազատութիւնը խլելու:

— «Որ կարողն է տանել, տարցի», այսինքն՝ ով որ այդ պայմանը յանձն է առնում և կարող է տանել, թող յանձն առնէ: Եթէ ոչ՝ ազատ է:

Արդէն Քրիստոս ինքն էր ասել թէ՛ «ով ուզում է իմ ետեից գալ, պիտի թող-

**) Մինչև հիմա էլ՝ այս պայմանովն են ընտրուում մեր կաթողիկոսները:

նէ իր մօրը, կնոջը, վերցնէ իր խաչը և հետի ինձ» (Աւետարան):

Այս ամենից պարզ երևում է ուրեմն, որ նախկին դարերում մեր բոլոր եկեղեցականներն էլ եպիսկոպոսական և կաթողիկոսական աթոռներ ստանալիս՝ իրանց նրանց հետ աթոռակից և բարձակից չունէին իրանց սիրասուն կնիկներին:

Բայց եթէ ընդունենք անգամ, որ Ս. Լուսաւորիչ և իր յաջորդները մինչև հինգերորդ դարը՝ ամենք էլ կին ունէին և նրանց հետ ապրում էին, այդ չի նշանակում թէ մեր այժմեան հոգևորականները ևս պէտք է անպատճառ ամուսնաւոր անձինք լինիլ ինչպէս որ պահանջում էին Ամիրխանեանցն ու Արծրունին:

Կան հարցեր, որոնք ըստ երևոյթին, հասունացած են երևում այս կամ այն փոփոխմանը ենթարկւելու: Սակայն շատ անգամ այդ երևոյթը խաբուսիկ է լինում:

Ժողովուրդը — մասսան հեշտութեամբ ձեռք չի քաշում իր տեսածից, իր աւանդութիւններից: Մանաւանդ երբ զրանք կրօնական հողի վրայ են դրւած լինում:

Վերցրէք, օրինակի համար, այրի քահանաներին պսակելու հարցը, որ հան-

գուցեալ Մկրտիչ կաթողիկոսը զրեց ի պաշտօնէ, բայց չանցկացաւ:

Վերջապէս այդպիսի հարցերը վճռողը միմիայն համադգային ժողովն է լինելու, ուրիշ ոչ ոք՝ ով էլ լինի:

Ուստի երբ մի հրապարակախօս համանման հարցերը անցկացնել է ուզում, — պարտաւոր է բազմակողմանի կերպով քննել նրանց, նրանց իրաւական, պատմական, անտեսական և այլ մասերը հրապարակի վրայ դնել ու լուսաբանել ու հասկացնել ժողովրդին:

Բացի դրանից՝ նախ քան դրական պահանջ դնելը՝ հարկաւոր է հարցի իրագործման ճանապարհը գտնել ու հարթել ևայլն:

Դժբաղդաբար մեր հրապարակախօսութիւնը այդպիսի նեղութիւն չի ուզում ինքն իրան տալ ազգային եկեղեցական հարցերում: Այլ փի-փոյ հրապարակ հանելով այս ու այն լուրջ խնդիրը՝ փի-փոյ էլ վճռում է յանուն... ազատամտութեան, յանուն յառաջագիմութեան:

Զվիցերիայում դիակներն այրելու ընկերութիւն է կազմւել: Արի ձեռաց մենք էլ այդպիսի ընկերութիւն կազմենք — պահանջում էր Արծրունին:

Ամերիկական կառավարութիւնը Մոր-
մոն կոչւած ազանդաւորներէց պահան-
ջում է, որ մէկից աւելի կին չունենան:

— Թող մեր տէրութիւնն էլ, — խոր-
հուրդ էր տալիս Արծրունին, — օրէնք սահ-
մանէ, որ մահմէդականները ևս մէկից ա-
ւելի կին ունենալու իրաւունք չունենան:

Եւ այլն և այլն:

Դառնալով դարձեալ կուսակրօններին
և այրիացած քահանաներին *) ամուսնա-
նալու հարցին, ինձ թւում է, որ մեր
մամուլում այդ առթիւ եղած ամենատե-
սակ գրեւորներն՝ ապարդիւն կը մնայ այ-
սուհետև ևս, ինչպէս մնացել են մինչև
հիմա:

Եւ բացի թերթերի էջերը լեցնելուց,
բացի ժողովրդին մոլորեցնելուց, ուրիշ ոչ
մի բանի չեն ծառայել, եթէ ոչ անգիտա-
կից, թերուս, ծանծաղամիտ մարդկանց
գրոտելու ցանկութիւն ունեցողներին բա-
ւարարութիւն տւած լինելու համար **):

*) Ինչպէս յայտնի է, մեր եկեղեցու կանոնով
այրիացած քահանաները եթէ ձեր են, կարող են ժո-
ղովրդի մէջ մնալ և իրանց պաշտօնը շարունակել: Եթէ
ջահէլ են՝ կամ վանք պիտի գնան և կամ բոլորովին
հրաժարւին քահանայութիւնից:

**) Մանօթ. հէնց այս բոլորիս ստացած «Մշակի»

ԺԴ

Մինչև այժմս ես աշխատեցայ ծանօ-
թացնել իմ ընթերցողին Արծրունու այն
մտքերի և նրանց արտայայտման ձևի հետ
որ վերաբերում էին հայ մտաւորականին,
հայ հին սերնդին, հայ դպրոցին, հայ բե-
մին և հայ հոգևորականութեանը:

Հայութեան հետ սերտ կապ ունեցող
«տեղակալական» և «կաթողիկոսական» ըն-
տրութեան հարցերի առթիւ էլ Արծրունին,
իր ժամանակին, շատ պարզ կերպիւ ար-

183 Նւում կարգում եմ «Դատապարտածներ» վեր-
նագրով մի յօդւած ի պաշտպանութիւն Ախալքալակի
գաւառի մի գիւղական քահանայի, որ այրի լինելով
«բացարձակապէս կողակցում էր մի այրի կնոջ հետ:
Մատթէոս Բ. կաթողիկոսը, — գրում է յօդւածի գիր-
ուսանողը, — լինելով հին և խոտաբարոյ մարդ, անսո-
վոր նման դէպքերի, հրամայում է պատժել քահանա-
յին»:

Ի վերջոյ՝ պ. Ուսանողը «հուսատացած է, որ Գէ-
որդ Ե կաթողիկոսը իր ծրագիրների մէջ կը մտցնէ և
այս ազատարար հարցը»:

— Ես անկեղծ խորհուրդ եմ տալիս պ. Ուսանա-
ղին իր դասերովը և եթէ պարապելով ազատել հանգու-
ցեալ կաթողիկոսին իր մեղադրանքներից, և այժմեան
կաթողիկոսին իր խորհուրդներից:

տայայտուել է իր մտքերով և գործունէութեան եղանակով:

Նրա այդ մտքերից շատ-շատերի հետ համաձայն չլինելով հանդերձ՝ ես նրանց չեմ ուզում շօշափել:

Եւ այդ այն պատճառաւ ևեթ, որովհետև այդ հարցերը պատահական հարցեր էին:

Եւ որ գլխաւորն է, նրանց լիուլի բացատրութիւնը տալ անկարելի է լրագրութեան ներկայ պայմաններում: Ինչպէս և անկարելի էր այն ժամանակ, երբ Արծրունին դրում էր զրանց մասին:

Եւ ինչպէս կարելի է լիուլի կերպով բացատրուել, գորօրինակ, մի ընտրութեան առթիւ, երբ ընտրողների մէկը համոզւած է, որ ինքն է ընտրել, իսկ միւսը՝ որ ընտրել են տւած:

Այս այսպէս լինելով՝ ես թողնում եմ յիշեալ հարցերը և դառնում հայ կնոջ մասին Արծրունու գրածներին, օգտւելով «յօբէլանական կանանց») յանձնաժողովի հրատարակած «Մշակ» և հայ կինը» հաւաքածուից:

*) Աւելի ճիշտ կ'ըլնի ասել «կանանց յօբէլանական յանձնաժողովից»:

Բայց նախապէս աւետում եմ ընթերցողներին, և սրտի ուրախութեամբ արձանագրում այստեղ, որ կանանց մասին խօսելիս՝ Արծրունին համեմատաբար քաղաքավարի և վայելուչ լեզու է բանեցնում և մտրակող ու յարձակող ուղղութիւնից խուսափում:

Եւ այդ այն հիման վրայ, որովհետև Արծրունին շատ լաւ գիտէ «այն ճշմարտութիւնը որ եթէ մի նոր միտք, մի վարդապետութիւն կամենում է ներգործութիւն ունենալ կնոջ վրայ, նա պէտք է հեռու պահէ իրան այն միջոցներից, որ գործ էր դնում հասարակական կոշտացած խզմտանքը կորցրած, փշացած գասակարգերի վրայ ներգործութիւն ունենալու ժամանակ: Կղերական դասի կամ անխիղճ հարստահարողների վրայ զրելու ժամանակ պէտք է մտրակել, իսկ կնոջ վրայ ազդելու ժամանակ յարձակողական միջոցները այն հետեանքը ունին, որ կինը դարձնում է ձեզանից իր երեսը, դուք կորցնում էք նրա համակրութիւնը: Իսկ կանանց վրայ ոչինչ ազդեցութիւն չէ կարող ունենալ, երբ որ դուք չունիք նրա համակրութիւնը»*):

Տղամարդկանց հաւասար՝ կանանց ևս

**) «Մշակ» և հայ կինը եր. 60:

ամէն իրաւունք պահանջող մեր հրապարակախօսի այս վարձունքը թէպէտ և անաչառութեան, արդարամտութեան նշան չէ,— այնուամենայնիւ, ներելի է, վերագրելով այն նրա շահէլութեանը: Կուգայ ժամանակ, երբ այդ շահէլը, ինչպէս ժողովուրդն է ասում, կը պսակւի, խելքի կուգայ, երբ «փոքր ինչ յետոյ կանանցից մէկը շօկվում է, որը եթէ ոչ աշխատակից, բայց իր մշտական լծակից, նրա կեանքի և գործունէութեան ընկերուհի է դառնում: Եւ անս հրապարակագրողի ձեռք սկսում է մեղմակնալ, նրա գաղափարներն սկսում են մի այլ ընթացքի ընդունել, նրա ոճն անգամ անելի գրւած, անելի կիրք է դառնում,— նա ոգեւորւում է, ներշնչում է մի նոր եւ իր հասարակական այժմ չեղած, մի անսովոր ոգով... *): Նա իր գրասեղանի մօտ նստած, գրիչը բռնած ժամանակ մտածում է. պէտք է այնպէս գրեմ, որ նրան **): կարողանամ կարգաւ նա կը քննադատէ իմ գրածքը ոչ թէ տղամարդու և անողորմ լօգիկայով, բայց (այլ) կանացի նուրբ զգացմունքով» ***):

— Տեսնում ես, սիրելի ընթերցող, թէ կինը ինչ և որքան բարեբար ներգործու-

* Ընդգծումները իմն են:
 **) Այս ընդգծումը Արժրունունն է:
 ***) Նոյնը եր. 289—290.

թիւն է ունենում ոչ միայն բանաստեղծներին, նկարիչներին և վիպասանների վրայ, — այլ նաև հրապարակախօսի վրայ:

Բայց այս ամէնը՝ ի միջի այլոց:
 Դառնանք մեր նիւթին:

«Յօրելեանական կանանց յանձնաժողովի» հրատարակած հաւաքածուն բաղկացած է 72 յօդւածներից:

Դրանցից 48-ը Արժրունուն իրանն են (մի քանիսը Ֆէլէտօններ՝ Ասիացի ստորագրութեամբ, որ նոյն ինքն է Արժրունին): Իսկ մնացեալ 24 յօդւածները «Մշակի» աշխատակիցների ու թղթակիցների գրչին են պատկանում:

Նախապէս ծանօթանանք, ընթերցող, այդ երկրորդ կարգի յօդւածների գլխաւորների բովանդակութեան հետ:

— «Կանանց ազատութիւն» յօդւածով (եր. 11) պրօֆեսօր Յ. Աբելեանց նկարագրում է յայտնի գիտնականների թեր և զէմ կարծիքը կանանց կազմուցքի վերաբերութեամբ, և ապա՝ այն տարբեր հայեացքն ու գործունէութիւնը, որ կայ եւրոպայի և Ամերիկայի կանանց մէջ:

— Ապա գալիս է Կարլ Հաննի «Մի

քանի մտքեր իգական սեռի դաստիարակութեան մասին, մասնաւորապէս Գերմանիայում» յօդաւոր (եր. 31), ուր համեմատութեան է դնում առաւելապէս գերման և ուս կնոջ ստացած կրթութիւնը:

Յօդաւորները, ի միջի այլոց, ասում է «որ Գերմանիայումը աղջկերբը շափազանց միակողմանի տնային կեանքի համար են պատրաստում, Ռուսիայումը՝ շափազանց շատ սալօնի և հասարակութեան համար: Եւ թէ՛ գերմանուհիքը շատ չգիտեն, բայց գիտեցածը հիմնաւոր գիտեն և կատարելապէս մշակել են:

Իսկ ուս կանանց պակասում է մէկ հիմնաւոր գիտութիւն»:

Ս. Ս. Չախարեանց իգական սեռի ներկայ վիճակը հայերի մէջ» յօդաւորով (եր. 52) յաջող կերպով հայ կնոջ անմխիթար վիճակը և նրանից ազատելու գեղեցիկ խորհուրդներ է տալիս:

— «Ծնողներին» յօդաւոր (եր. 62) «Հայուհի»-ն՝ խոցոտւած սրտով նկարագրում է այն ողբալի գրութիւնը, որի մէջ գտնւում է հայ լեզուի, իբրև անպարտազիր առարկայի, — աւանդումը պետական դպրոցներում: Եւ այդ գրութեան պա-

տասխանատուութիւնը ձգում է առաւելապէս ծնողների վրայ:

Կատարելապէս համաձայն եմ յարգելի յօդաւորի հետ շեշտելով որ նրա նկարագրած գրութիւնը շարունակւում է մինչև այսօր, և, մինչև անգամ, աւելի վատթարանում է:

— Օրիորդ Բ-եան «Էլի մի պարապմունք կանանց համար» յօդաւորով (եր. 161) մի շատ գեղեցիկ առաջարկութիւն է անում, — այն է, որ կանայք մեզանում գիւղատնտեսութեամբ էլ պարապեն, — մի պարապմունք, որ չի դուրս գալ նրանց համար «դարերով գծագրած գործունէութեան շրջանից»:

— Մի այլ գեղեցիկ և կարևոր միտք է յայտնում Ն. Աբելեանց «Մի առաջարկութիւն» ամփոփ յօդաւորով (եր. 165): Պարոնը առաջարկում է կանանց մասին լրագրական յօդաւորներով չբաւականանալ, որոնք, — ասում է պարոնը, և ես միանգամայն համամիտ եմ, — անցնում են առանց մի իրական ներգործութեան հասարակութեան վրայ»: Ս.յլ հիմնել մի ընկերութիւն, որ «նպաստէ կանանց կրթութեան գործին միջոց տալ բարձր կրթութիւն ստանալու հայ օրիորդին, ունենայ իր յատուկ օրգա-

նր և, այսպիսով, թէ խօսքով և թէ գործով յառաջ մղէ կանանց բարձրացնելու կենսական խնդիրը:

Ն. Արեւեանի այս առաջարկին համակրանքով վերաբերելով՝ Արծրունին ինքը ևս երկու խմբագրական է նւիրել, — «Կանանց աշխատանքի խնդիրը» (եր. 167): Արեւեանցի առաջարկութիւնը, մասամբ, կատարւեցաւ վերջերում «Հայունեաց Բարեգործական Ընկերութիւնը» հիմնելով:

«Հայ կինը» վերնագրի տակ *** ստորագրութեամբ մի պարոն մի հատւած է գուրս բերել Գանկեհիշի դասախօսութիւնից (եր. 181):

Դասախօսը, առհասարակ, շատ լաւ կարծիք ունի հայ ազգի մասին, եւ այդ ինչպէս նախնի, նմանապէս և այժմեան հայերի:

Գանկեհիշ գտնում է, որ եթէ այդ ազգը դարաւոր փոթորիկների մէջից գուրս է պրծել, — այդ նա պարտական է իր ղէվիզին, որ են՝ աշխատանք, հաւատ, ընտանիք:

Մասնաւորելով իր խօսքը հայ կրոն մասին դասախօսը գտնում է, որ «տնտեսութեան և խնայողութեան ոգին, յարգանք

ղէպի սրբութիւնը և սէր ղէպի ընտանիքը պահպանւում են հայ ազգի մէջ շնորհիւ նրա կնոջ»:

Նա գտնում է նոյնպէս, որ «հայերի մօտ ընտանեկան երջանկութիւնը կախած է ամուսինների փոխադարձ համաձայնութիւնից: Տղամարդը անխոնջ աշխատում է կինը տնտեսութեան և կարգին է նայում տան մէջ և հոգում է նրա մէջ խաղաղութիւն պահպանել, որը զօրեղ ներգործութիւն ունի տան մէջ բոլոր ապրողների վրայ:

«...Հայ կինը, — շարունակում է Գանկեհիշը, — գօրութիւն է ստանում նոյնպէս իր կրօնական համոզմունքների մէջ, իր ժառանգական աւանդութիւնների մէջ և իր բարքերի մաքրութեան մէջ»:

«Որը քննելով, — այս բառերովն է վերջացնում Գանկեհիշ իր դասախօսութիւնը, հայ կանանց ընտանեկան բարքերը, զուք չէք զարմանայ տեսնելով, որ ժողովրդի մասսայի մէջ գերակշռում է բարոյակաւորութիւնը և բարօրութիւնը ու ինձ չափազանց ախորժելի էր համոզել այդ բանում իմ կովկաս եղած ժամանակ: Թող այդ երկիրը, որը իր բազմով կարողացաւ երկար տարիների ընթացքում աղաւել եւրոպա-

յի յուզմունքից, թող այսուհետև էլ հեռու
 մնայ այդ բանից և թող իրանով մի գեղե-
 ցիկ ժողովրդի օրինակ ցոյց տայ, որը բո-
 լորովին նւիրել է իրան խաղաղ պարապ-
 մունքներին և որը իր մտաւոր զարգաց-
 ման համար գործ է ածում իր խելացի և
 բարոյական ազգաբնակիւթեան բոլոր գոր-
 ծունէութիւնը»:

— «Ակնարկներ» վերնագրի տակ (եր-
 221) Ի. Մ. զուրս է բերել ուսս յայտնի
 ճանապարհորդ Ելիսէէի կարծիքը հայ կնոջ
 մասին:

Գանկեվիչի նման Ելիսէէն ևս մեծ գո-
 վեստի և համակրանքով է խօսում հայ
 ընտանիքի մասին:

Նկարագրելով հայ ազգի անցեալ կե-
 անքը իր դառնութիւններով և նրա այժ-
 մեան համեմատական բարեկեցութիւնն ու
 կայունութիւնը, — Ելիսէէվ ասում է որ
 «այս բոլորի մէջ, անկասկած, աշխատա-
 սէր և եռանդոտ հայը շատ բանով պար-
 տական է իր առաջին օգնականին — կնոջը:
 Միշտ գործուն հայուհին արգարացի կեր-
 պով կարող է համարւել հայ ազգի գլխա-
 ւոր յենեկէտներէից մէկը: Կարելի է ասել
 որ հայուհին կազմում է այն զանգւածը,
 որ ամրապնդում է հայ ընտանիք, և դրա

հետ միասին ամբողջ հայ ժողովուրդը:

Պահպանելով ընտանիքի ամբուլթիւնը,
 ընտանեկան օջախի սրբութիւնը և ամուս-
 նական առաջաստի մաքրութիւնը, հայու-
 հին դրանով էլ պահել է հայ-ազգի ամբող-
 շութիւնը, — որ շատ անգամ մօտ է եղել
 խորտակման: Աշխատասիրութիւնը, որ
 կազմում է հայուհու գլխաւոր առաքինու-
 թիւններից մէկը, ձևակերպում է նրա
 բնաւորութիւնը: Նա միշտ ոտի վրայ է,
 միշտ աշխատում ու հոգում է տան մա-
 սին, համարձակ կարելի է ասել, որ աշխա-
 տանքը երբէք չէ հեռանում նրա ոսկեայ
 ձեռքերից: Բայց այդ մշտական աշխատան-
 քը հայուհու համար այնպիսի սարսափելի
 ծանրութիւն չէ, ինչպէս այդ նկատելի է
 քիւրդերի, արաբների և եգիպտոսի ֆէլլահ-
 ների վերաբերութեամբ: Այդ տարբերու-
 թիւնը բացատրւում է ինքնիրան: Մինչդեռ
 այդ վերջին ազգերի մէջ շատ անգամ կը-
 նոջ վրայ նայում են ինչպէս մի աշխա-
 տող անասունի վրայ, որը պարտաւոր է
 միշտ աշխատել ընտանիքի և շատ անգամ
 ոչինչ չզինող մարդու բոլոր պէտքերին լի-
 ութիւն տալու համար, հայուհին աշխա-
 տում է սիրով, որովհետև նրա մարդն էլ
 ինչպէս մի եզ, նոյնպէս աշխատում է իր
 ընտանիքի համար»:

Այնուհետև ուսն ճանապարհորդը նկարագրում է թէ ինչպէս հայուհին, հարուստ թէ աղքատ, անպատճառ այս ու այն արհեստը իմանալով և գործադրելով ինչ և որքան բարեկեցութիւն է մտցնում ընտանեկան կեանքի մէջ: Եւ յաճախ «կարողանում է ստքի կանգնեցնել մի ամբողջ ընտանիք»:

Ի հաստատութիւն իր տեսածների և ասածների—Ելիսէկը ստաջ է բերում Գրիգոր Արծրունու վկայութիւնը ևս*) թէ «Սահայի խորքերում կտրւած լինելով քաղաքակրթւած աշխարհից, աշխատասէր հայ ժողովուրդը լուծել է կնոջ ընտանեկան աշխատանքի հարցը, դարձնելով նրան ամենալաւ զարդարանք կնոջ համար: Մինչև որ հայ տղամարդը միշտ հոգում է հարստութիւն ձեռք բերելու և խնայելու համար, հայ կնոջ վրայ է ընկնում տան ներքին բարեկարգութեան մասին հոգալը և տնտեսութեան բարւոքելը: Չարմանալի չէ ուրեմն,—գրել է Արծրունին,—որ ընտանեկան կեանքը շատ զարգացած է հայերի մօտ և արեւելքի բոլոր ազգերի մէջ մենք չենք ճանաչում մի ուրիշ ազգ, որի մէջ այնքան լաւ կազմակերպւած լինէր

*) Գաղելով նրա «Экономич. положение турецких армянъ» գրքոյկից:

ընտանիքը և այսքան ամուր զիրք ունենար կինը, իբրև մայր և իբրև ամուսին: Կարելի ասել, սր հայը ամենաքնքուշ ամուսինն է արեւելքում:

«Մարդկային իրաւունքներով օգտւելու կողմից,—գրել է Արծրունին,—հայ կինը, կարելի է ասել, աւելի ազատ է բնարեւելցի կանայք, չբաց առնելով և Արաբիայի անապատի աղջիկը: Աղջիկ կամ կին գնել ու ծախելը, կամ կանանց գերի առնելը երբէք գոյութիւն չէ ունեցել Հայաստանում. հայ աղջիկը չգիտէ թէ ինչ է երեսի ծածկոց, ինչ է հարէմ, որոնք տիրապետում են հայերին շրջապատող ազգերի մէջ: Հայաստանի աղջիկը, ինչպէս անապատի բեգուին, ամեն տեղ գնում է ազատօրէն և բաց, չծածկելով երեսը, նա կարող է դիմել զանազան հարցերով մինչև իսկ օտար տղամարդոց, կարող է մասնակցել ընդհանուր խաղերի, խօսակցութիւնների և մինչև անգամ պարերի ու երգերի մէջ, որոնց իսկապէս ասելով՝ շատ են սիրում հայուհիները:

Փե

Անշուշտ մենք «Մշակի» հիմնադրին ենք պարտական այն ուրախալի երևոյթը,

որ, այսպէս անւանած կանանց հարցը մուտք գործեց առաջին անգամ մեր լրագրութեան մէջ: Եւ ունեցաւ այնպիսի շնորհալի հետևողներ և գրողներ այդ հարցի առթիւ, որոց անունները ու գրածների բովանդակութեան հետ անցեալ անգամ, ծանօթացաւ ընթերցողը: Գանկելիչի և Ելիսէվիի հայ կնոջ մասին գրածներից ամբողջ հատւածներ ես արտագրեցի ոչ եթէ այն պատճառ, որովհետև այդ գրւածներն գովասանական էին և մեր ազգասիրական զգացմունքներն էին փայփայում, ոչ, ամենևին:

Այլ որովհետև յիշեալ օտարազգի հեղինակները ճշմարտութիւն էին գրում, արդարութիւնն էին յայտնում, որոց ձայնակցել էր ինքը՝ «Մշակի» հիմնադիրը:

Գալով այժմ Գրիգոր Արծրունու կանանց հարցի մասին գրած սեփական յօդւածներին, — նրանց կարելի է վերածել երկու տեսակի, — յօդւածներ կանանց հարցի մասին ընդհանրապէս, և յօդւածներ հայ կնոջ մասին մասնաւորապէս:

Առաջին կարգի յօդւածները, կնոջ զարգացման պատմական նկարագրութիւնը, ընդհանուր առմամբ, ճիշտ են, թէև նրանցում կան վիճելի կէտեր ևս:

Սակայն երկրորդ կարգի յօդւածները հայ կնոջ մասին գրածների մէջ՝ Արծրունին, մեծ մասամբ, շատ առաջ չէ գնացել, ինչ որ հայ մտաւորականութեան մասին էր գրում, այն է՝ վայր ի վերոյ, անհիմն դատողութիւններ են. անփաստ մեղադրանքներ և... թէև զսպւած, բայց դարձեալ... հայհոյութիւն, գրպարտութիւն:

Այս ամենը ես վերագրում եմ Արծրունու՝ հայ կնոջ կեանքի անտեղեակ լինելուն, նրա անճանաչողութեանը:

Իսկ եթէ նա «Տաճկահայոց անտեսական գրութեան» մասին ուստերէն գրած զրքոյկով հայ կնոջ մասին տարբեր լեզու է բանեցրել, քան ինչ որ ուսասհայ կնոջ մասին է բանացրել, առաջինին գովելով, երկրորդին՝ պարսաւելով, — դրա պատճառը գոնէ ինձ համար՝ շատ պարզ է: Արծրունու ուստերէն գրքոյկի իսկակար հեղինակը առնւազն՝ թելագրողը, Արծրունին չէ այլ «Մշակի» տաղանդաւոր աշխատակից Գրիգոր Նիկողոսեանը:

Ինքը Արծրունին հաւասարապէս անծանօթ է հայ կնոջ կեանքին ամենուրեք:

Նրա ճանաչողութեան ամբողջ պաշարը՝ վերցրած է սակաւաթիւ, բարձր շրջանի հայ կանանց կեանքից, որոց նա տեսել

է Թիֆլիզում և, զուցէ միքանիսի հետ էլ ծանօթ է եղել:

Բայց այդ շրջանի հայ կիրնր՝ քանի՞ տոկոս է կազմում:

Հայ կնոջ մասին խօսելիս, նրա մասին այս ու այն դրական կամ բացասական կարծիք յայտնելիս, պէտք է վերցնել նրա մեծամասնութիւնը, պէտք է ի նկատի ունենալ գիւղացի հայ կիրնր, քաղաքի արհեստաւորի կիրնր, մանրավաճառի կիրնր, հայ մտաւորականի կիրնր:

Այս գասակարգերի հայ կնոջ մասին գրել հրապարակորէի թէ «գեուս ոտքի վրայ հագնելու մի մաշիկ է» (եր. 11), որ «հայոց ընտանիքը հիմնւած չէ սիրոյ զգացմունքի վրայ, այլ ասիական բռնաւոր և եսական կոպիտ իշխանութեան վրայ (եր. 68), որ «ոչ թէ միայն մեր հասարակութեան ունևոր գասի, մեր քաղաքային բնակիչների ընտանեկան կեանքը ներկայացնում է անսահման կամայականութիւն, բարբարոսական պատկերը, բայց նոյն դրութեան մէջն է և հայոց գիւղական ընտանիքը (եր. 77). որ «շատ անգամ մեր ծնողները ունենալով երեք չորս երեխայ, առաջիններին սիրում են, նրանց հետ մարդասիրական կերպով են վարւում, իսկ վեր-

ինն, գրեթէ առանց պատճառի, սկսում են ատել, սկսում են ճնշել, հալածել, ծեծել, զործ են ածում ինչպէս տան ծառայ կամ աղախին» (եր. 124). որ «մայրը սկսում է երեխային ատելով ատել, գրկում է նրան ամեն բանից, վարւում է նրա հետ բոլորովին այլ կերպ, քան թէ իր մնացած երեխաների հետ, հալածում, հայնջում է նրան, անդադար գլխին խփում, ստորացնում է և հասցնում է երեխային մինչև բթամտութիւն, մինչև իդիօտութիւն»: Որ «եթէ այդ տեսակ անջեգեար և ճշմարիտ, վրդովելի երևոյթ նշմարելի լինէր միմիայն մեր տգէտ, անզարգացած, ուամիկ ժողովրդի մէջ, — այդ դեռ ներելի կը լինէր: Բայց նոյն երևոյթը նշմարելի է լինում մեր հասարակութեան միջին և մինչև անգամ բարձր գասի ընտանիքներում, ուրեմն մեր հասարակութեան կրթւած գասակարգերի մէջ (եր. 125):

Որ «ուսումը» գիտութիւնը ամեն տեղ ամեն ազգի մէջ բարձրացնում են ժողովրդի բարոյականութիւնը, իսկ հայերի մէջ հումալսարական մարդը մեծ մասամբ նոյնքան անբարոյական է, նոյնքան անազնիւ է, որքան իր ազգակից ամենավերջին դալալ, կամ չարչի, ամենաստոր հաստափոր հարստահարողը» (եր. 127):

«Որ հայ կինը իսկապէս իր ոգով, իր լեզուով, դատարկութեամբ, իր ձգտումներով, իր հայեացքներով և հակումներով ոչ հայ է, ոչ վրացի է և ոչ ուրու: Նա անորոշ մի արարած է: Իր կեանքի եղանակով, իր ապրելու ձևով նա ոչ արիստոկրատ է, ոչ բուրժուա, ոչ ինտելիգենցիային պատկանող, ոչ տան անտես, ոչ աշխատող արեւնտաւոր կին է*): Նա նոյն հարեմական կին է, անգործ, անփոյթ, անասնական կեանք վարող, մտաւոր կեանքից զուրկ, իղէախներից մերկ, առանց ձրգտումների, առանց կեանքի նպատակի» (եր. 180), այլն և այլն, — այս ամեն վայրագունութիւնները, կրկնում եմ, ցոյց են տալիս, որ, արդարեւ, Արծրունին շատ և շատ բոբիկ էր նաև հայ կնոջ ճանաչողութեան մէջ, և, ըստ իր մշտական սովորութեան, մասնաւոր դէպքերը՝ ընդհանրացնում էր, բացառութիւնները՝ կանոնի էր վերածում և լուերից ուղտեր շինում:

Երկուսից մէկը կամ Արծրունու վերոյիշեալ տողերը դատարկաբանութիւններ են, կամ ներքոյիշեալ սոյն տողերը՝ որ ես արտագրում եմ «Հայ կինը» առաջնորդողից (եր. 246):

*) «Մշակի» աշխատակիցներից մէկն էլ հայ կնոջ անանիւ էր «գրաստանման էգ»:

«Քսան տարւայ ընթացքում, — գրում էր Արծրունին 1890 թւականում, այսինքն «Մշակի» հրատարակումից 20 տարի անց ուզում է ասել, — հայ կինը անագին քայլեր է արել իր մտաւոր և բարոյական զարգացման ասպարիզում, անագին առաջգիմութիւն է արել՝ իրաւագուրկ արարածի վիճակից ձգտելով դէպի իրաւատէր քաղաքացու դրութիւնը»:

«...Վերջին քսան տարւայ ընթացքում հայ կինը նախկին անխօս, ամեն բանի առջև խոնարհվող, ամեն բան տանող, ամեն բան համբերող կրաւորական էակից, — փոքր առ փոքր, դարձել է իր պատիւը ճանաչող, իր իրաւունքների համար գիտակցաբար բողոքող, թէ ընտանիքում և թէ հասարակութեան մէջ իր պատիւը պաշտպանող, ինքնասէր ինքնաճանաչ անձնաւորութիւն»:

Ահա թէ ինչի համար «Մշակի» հրատարակման սկզբում, Ռաֆֆին գուշակում էր թէ «յանկարծ կարծես մի դիւթական դաւազանի հարւածից զարթեցաւ կեանքը»:

Ինչ որ ինձ է վերաբերում, — ես միշտ այն կարծիքի եմ եղել, և հիմա էլ եմ, որ հայ կինը ևս, ընդհանուր հայ կեանքի հետ զարգացել է և զարգանում է աստիճանա-

բար, առանց դատիւնների, որ այդ զարգացումը երբէք հայ լրագրութեան ազդեցութեամբ չէ կատարել և չէ կատարուում որ հայ լրագրութիւնը, ընդհակառակը, մեր կեանքի կանոնաւոր զարգացմանը՝ յաճախ խոչնդոտ է հանդիսանում, որ նա, լրագրութիւնը է՝ որ չափազանց յոռատեսութեամբ, է որ չափազանց լաւետեսութեամբ, երբեմն կրքից, մանր մունր հաշիւներից շարժելով, երբեմն կողմնակի ներշնչումներից ոգևորելով, — տակն ու վրայ է անում և փչացնում ամեն բան՝ և կանոնաւոր զարգացնում, և յառաջադիմութիւն:

Մասնաւորելով խօսքս հայ կնոջ մասին, ես պնդում եմ, որ հայ կինը բնաւ այն չէ, ինչ որ նկարագրել է Արծրունին, որ հայ կինը թէ իր անտեսագիտութեամբ և թէ իր բարոյական ու մտաւորական յատկութիւններով ոչնչով պակաս չէ եւրոպայի ամենալուսաւորւած ազգերի, օրինակ՝ գերմանացի կնոջից, որ հայ կնոջ մէջ գեռ կան այնպիսի կողմեր, որոց եւրոպացի կինը նախանձել կարող է:

Ճիշտ է՝ հայ կինը գեռ պակաս կողմեր էլ ունի. նա իր գաւակներին պարտուպատշաճ կերպով դաստիարակել գեռ չի գիտէ, իր կոչման ըմբռնողութեան մէջ

նա տակաւին միակողմանի է: Բայց փոյթ չէ:

Ժամանակը իրանը կանի:

Ընդհանուր հայ կեանքի հետ՝ հայ կնոջ կեանքը ևս հետզհետէ կը կատարելագործուի:

Նրանում նկատւած անհարթութիւնները կը յարդարւին:

Եւ այդ կատարելագործութիւնն ու յարդարումը վաղուց, շատ վաղուց ի վեր տեղի է ունենում մեզանում:

Կէս դար առաջ՝ հայ վարժուհին (վարպետուհին) քաղաքի և գիւղի երկու սեռի մանուկներին հաւաքում էր իր տանը և նրանց միայն գրել-կարդալ էր սովորացնում*): 60-ական թւականներին՝ Մատթէոս Ա. կաթողիկոսի և մի քանի տարի յետոյ Գէորգ Դ. — ի ժամանակ հայ երկու սեռի մանուկների կրթութիւնը արագ քայլերով ընթացաւ:

Թիֆլիզում, Ալէքսանդրօպօլում, Ախ-

Դաւառական խուլ քաղաքներում և գիւղերում հիմա ես կան այդ վարժուհիները. Մի քանի տարի առաջ Բագուն թաղեց մի այդպիսի օրինակելի վարժուհի, որ յայտնի էր «Մայրիկ» անունով: Նա «Մշակի խմբագիր Բալանթարի մայրն էր:

այցիսայում, Երևալքալակում, Երևանում, Գանձակում, Շամախում և այլուր տարրական և միջնակարգ օրիորդաց դպրոցներ ծաղկեցան: Եւ եթէ չլինէր Գալիցիենեան ռեժիմի ժամանակ՝ և թէ նախընթաց՝ բաւական տնօրութեամբ մեր դպրոցները փակումը, անշուշտ կրթւած հայ կնոջ մենք աւելի մեծ կօնտինգենտ կունենայինք այժմ:

Այս ամենը գիտէ և խոստովանում է ինքը՝ Արծրունին էլ իր առաջադրողներից մի քանիստով: Միայն թէ այդ ամեն միթիթարական երևոյթների ժամանակը՝ Արծրունին «Մշակի» հրատարակմանից է հաշուում:

Փոյթ չէ: Փառասիրութիւնը, ցուցամոլութիւնը ևս, որոշ չափով, լաւ ազգակներ են գործ շինելու, գործ առաջացնելու համար: Եւ «Մշակի» հիմնադիրը, ի շնորհս իր այդ յատկութեան՝ մեծ զարկ է աւել մեր լրագրութեանը, մեծ շարժում յարուցել մեր կեանքի մէջ:

Այս պէտք է խոստովանել, լինելով և մնալով հանդերձ հակառակորդ այդպիսի յատկութեան և այդպիսի շարժման, որոնցից ազգի համար օգուտ ևս չեմ տեսնում կամ շատ աննշան օգուտ եմ տեսնում, իսկ վնաս, — շատ և տեսակ-տեսակ:

Եւ իմ այս, — չեմ ասում կարծիքը կամ ենթադրութիւնը, — այլ իմ այս կենդանի, խորին համոզմունքը հիմնում եմ այն եռանդուն, այն ջերմ գործունէութեան վերայ, որ ցոյց տւեց Գրիգոր Արծրունին դէպի տաճկահայերը վերջին ռուս-տաճկական պատերազմի ժամանակ:

ԺԶ

Յայտնի է, որ 1875 թւականում Բոսնիայում և Հերցեգովինայում սկսւած խրտումները հետզհետէ ընդարձակելով՝ վերջին ռուս-տաճկական պատերազմը առաջ բերին:

Յայտնի է նմանապէս, եթէ ոչ ամենքին, գոնէ քաղաքականութիւնից փոքր ի շատէ տեղեկութիւն ունեցողներին, որ այդ պատերազմին, ինչպէս նաև նրա նախընթաց դէպքերին, ձեռնարկեց Ռուսաստանը ի նկատի ունենալով միմիայն Բալկանեան թերակղզում ապրող բրիտանոսայ պաւօն ազգերին:

Իմ ծրագրից դուրս է այդ պատերազմի նպատակը, նրան առաջացնող շարժանքի նկարագրել: Այսքանը միայն կասեմ, որ՝ ըստ մեր «պատմաբան» Լէօի, ռուս-

տաճկական պատերազմին ձեռնարկեց Ռուսաստանը «անշահասիրութեամբ» *):

Ինչ էլ որ լինէր պատերազմի բուն պատճառը՝ մեզ հայերիս համար միևնույնն էր: Մենք կարող էինք համակրել կամ չհամակրել պատերազմին սկզբունքով, կարող էինք մեր համակրանքը այս ու այն ձևով արտայայտել պատերազմողներից այս կամ այն կողմին, բայց ոչ մի հիմք, ոչ մի օգուտ չունէինք միջամտել պատերազմին, որ ինչպէս ասացի—հրատարակած էր յանուն Եւրոպայում ապրող սլաւոն քրիստոնեայ ազգերի ազատութեան, —մի քաղաքագիտական տերմին, որ քրիստոնէութեան սկզբից ի վեր հոլովում է քաղաքագէտների բերանում միակերպ, բայց որ ոչ մի կերպ չէ համապատասխանում իրականութեանը, գոնէ հայի վերաբերեալ իրականութեանը ե. դարից սկսեալ մինչև այսօր:

Ինչ և իցէ:

Ճիշտ է, նախ քան պատերազմը՝ մի քանի փորձեր եղան թէ Տաճկաստանում և թէ մեզանում, տաճկահայերին ևս շարժեցնել, նրանց ևս պատերազմին կամ առ-

*) Լէօ Հատ. Բ. Երես. 420:

նւազն ըմբոստացման, ապստամբման մասնակից անելու, — սակայն հայերը իրենց տեղում ծանր նստեցին, իրենց համար ձեռնառու չհամարեցին շարժումը, որից նրանք բացարձակ վստաս էին նախատեսում տաճկահայերի համար:

Ս.յդպէս մտածող ու վարւողներն էին ազգի պաշտօնական ներկայացուցիչները, թէ հոգևորականները և թէ աշխարհականները, — ինչպէս Տաճկաստանում, նմանապէս և Ռուսիայում, ուր զահակալող ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Գ-րդ՝ իր րացասական պատասխանը ամենայն պարզութեամբ յայտնել էր ժեներալ Լօուիս Մելլեքովին, որ Փոխարքայ Մեծ Իշխանի յանձնարարութեամբ էլ միաձին էր վնասած:

Բացի պաշտօնական ներկայացուցիչներից՝ տաճկահայերի մասնակցութեանը պատերազմին դէմ էր նաև Կ. Պօլսոյ ամբողջ հայ մամուլը: Գէմ էր նմանապէս և Ռուսահայ մամուլը, մասնաւորապէս «Մեղու Հայաստանին»:

Գրիգոր Արծրունու «Մշակը» ընդհակառակը, ոչ միայն դէմ չէր տաճկահայերի ապստամբմանը, այլ նաև, — ինչպէս ժողովուրդն է ասում, — շատ քափ ու բրտինք

թափեց այդ ապստամբութիւնը գլուխ բերելու:

Ըստ վկայութեան մեր «պատմաբան» Լէօի, Արծրունու համար տաճկահայերի անշարժ մնալը «միայն այն էր ցոյց տալիս, որ հայերը անասնական զրութեան են հասել իրենց դարաւոր ստրկութեան մէջ» *):

Ուստի նրանց այդ անասնական զրութիւնից գլուխ բերելու կամ թերևս նրանց անասնաբար կոտորել տալու համար էր, որ Արծրունին բացականչում էր՝ «միթէ վերջապէս թիւրքահպատակ հայերը չեն հասկանայ, որ թիւրքիայի այժմեան անմխիթար զրութիւնը այնքան յարմար է մարդկային իրաւունքները պահանջելու համար, որ գուցէ դարերով այդ տեսակ յարմար զրութիւն պատահելու չէ: Ամօթ կը լինի հայերին, եթէ նրանք իրանց իրաւունքները պաշտպանելու և սոր իրաւունքներ սեփականացնելու համար ձայն չեն բարձրացնի, մինչև որ մինչդեռ թիւրքիային հպատակ այլ քրիստոնեայ ազգութիւնները իրանց անձն են զոհում, իրանց արիւնն են թափում ազատութիւնը ձեռք բերելու համար» **):

*) Նոյնը էր. 402:

Ազատամտութիւն և ուրիշի «անմխիթար զրութիւնից» օգտուելու առաջարկութիւն, հրապարակախօսութիւն և այս տեսակ՝ զօրավարներին միայն յատուկ կոչ պրակկամասիօն — սրանք թէպէտ և միմիեանց հետ հաշտուող մտքեր չեն, բայց և այնպէս՝ ես կանգ չեմ առնում այդ մտքերի վրայ: Որովհետև ես գիտեմ, որ ազատութեան գաղափարը Արծրունին լաւ չէր ըմբռնում և յաճախ նրան շփոթում էր բռնաւորութեան հետ:

Այսպէս, օրինակի համար, Արծրունին մի ժամանակ խօսելով 1870 թւականի Ֆրանկ-պրուսական պատերազմի մասին՝ այդ պատերազմը անւանում էր «ազատութեան պատերազմ ստրկութեան դէմ»: Այսինքն թէ՛ ազատ Գերմանիան պատերազմ է մղում ստրուկ Ֆրանսիայի դէմ: Լաւ լսում էք, ընթերցող, Բիսմարկի, այդ երկաթի կանցլէրի կազմակերպած զինուորական կոպիտ ոյժը՝ զնում էր մեծ յեղափոխութեան հեղինակ ժողովրդին ազատութիւն շնորհելու:

Եթէ Արծրունին ասէր, որ Մուսկէն բանակը շարժում էր Ֆրանսիային բռնաւոր Նապօլէօնից ազատելու համար, — այդ հասկանալի կը լինէր: Բայց այն ժամանակն

էլ անհասկառալի կը մնար, թէ ապա էլ ինչու համար գերմանական զօրքը այնքան ու այնքան ֆրանսիական ազգի զաւակների անմեղ արիւնը թափեց և այնքան ու այնքան աւերածութիւններ գործեց՝ նոյնիսկ Նապօլէօնին Սեզանում գերի վերցնելուց յետոյ էլ:

Հա, այն էի ասում, որ Գրիգոր Արծրունու համար ազատութիւնը այնտեղ է, է, որտեղ որ ոյժ կայ:

Այդ զէպքում մեր ազատամիտ հրապարակախօսը այն էր ասում, ինչ որ մի ժամանակ ուսաց բանակի ժեներալը թէ՛ «Սփական թիւրքիայում անհրաժեշտ է մի նոր ուժեղ իշխանութիւն, որովհետև թիւնները փոխոխելը զժւար գործ է, որին Քրիստոնեաները իրանք պիտի զիմեն իրանց սեփական պաշտպանութեան ուղիղ միջոցին, իրանց սեփական զէնքին, բայց կասկած չկայ, որ ամենքը չեն կարող պաշտպանել իրանց:

«Հետևաբար — շարունակում է ուսաց զօրավարը, — քրիստոնեաների պաշտպանութիւնը հնարաւոր է ոչ թէ խօսքերով, այլ գործով և բանակների ներկայութեամբ:

Ռուս զօրավարի այս ցանկութիւնը կատարեցու 1876 թւի կիսին. ուսաց բանակները տաճկաց սահմանները մտան թէ Եւրոպայի կողմից և թէ Ասիայի:

Այս ամենը շատ լաւ, բայց հայերը դարձեալ տեղներիցը ժաժ չեկան, ինչպէս որ կոչ էր անում նրանց Արծրունին, ուսոր կոչ էր անում նոր ասաջնորտի նա վեր կացաւ և մի նոր առաջնորտի գրեց, որի մէջ ասում էր, որ «հայ ազգը կորցրել է հաւատ գէպի իր սեփական ոյժերը, նա հաշտել է այն մաքի հետ, որ ինքը ոչ թէ միայն ազգ չէ, այլ որ իր անհատներից իւրաքանչիւրը իրաւունք չունի մինչև անգամ մարդի անունը կրելու, իրաւունք չունի այն հասարակ ընդհանուր մարդկային իրաւունքները վայելելու, որ վայելում է ամեն մի մարդկային էակ...: Ռուսի, — շարունակում էր կրսի հզօր ոյժ, Արծրունին, — պէտք է մի դրսի հզօր ոյժ, որ մարդազրսի ազգեցութիւն յայանւի, որ մարդասիրական գութից շարժւած մեկնէր այդ հոգով ընկած, անդադար բռնաբարութեան տակ յուսահատւած և մաշւած ազգութեանը իր օգնութեան ձեռքը» *):

Միանգամայն ներել պէտք է Արծրունուն, որ կարծում էր թէ քաղաքագիտու-

*) Նոյնը եր. 424:

Թիւնը կարող է «մարդասիրական գութից շարժւած» լինել: Բայց երբէք չէ կարելի հրապարակախօսին ներել, երբ նա բռնա- նալով մի ամբողջ ազգի, նրա պաշտօնա- կան ներկայացուցիչներին, նրա մամուլի խղճի և գիտակցութեան վրայ, անպատճառ ուզում է նրան պատերազմի գաշտը նե- տել, մինչդեռ «Թիւրքաց մայրաքաղաքի հայերը իրանց պատրիարքի հետ պնդում էին, թէ չեն ուզում Ռուսաստանի օգնու- թիւնը» *):

Սա արդէն հրապարակախօսական վար- մունք չէր, այլ քաղաքական աժիտասիօն էր:

Սա գրական գործունէութիւն չէր, այլ քաղաքական ազէնտի ծառայութիւն:

Վերջապէս սա իր ազգը սիրել չէր նշանակում, այլ նրան ի վաճառ հանել բռնութեամբ:

«Սակայն, — շարունակում է Լէօն, — Արծրունին իր ասածն էր պնդում: Եւ նա իրաւունք ունէր, քանի որ նրա տեսակէտը միանգամայն ճիշտ էր (!!!) և համապատաս- խանում էր իրականութեան» **):

*) Նոյնը, եր. 442:

***) Նոյնը, եր. 403:

Ուստի և Արծրունին՝ «Այժմ կամ եր- բէք» առաջնորդողով շարունակում էր իր պնդերեսութիւնը, թէ «պէտք է օգուտ քաղել դէպքերից, մի ուրիշ անգամ այս- պիսի յարմարութիւն չպիտի ներկայանայ Հայերը միմիայն Ռուսաստանի վրայ պի- տի յոյս դնեն: Միայն Ռուսաստանը կա- րող է հասկանալ որքան օգտաւէտ է թէ ընդհանուր մարդկային քաղաքակրթութեան կէտից թէ իրան՝ ռուսաց պետութեան օ- գուտների համար որքան նշանաւոր է շա- հել, գրաւել, կորած, ընկած, յուսահատ քրիստոնեայ տարրը Փոքր Ասիայում» *):

Հարկաւ ամեն ոք իրաւունք ունի իր համոզմունքն ունենալ, բայց գրաքննական օրէնքի խտուրթիւնից բռնադատւած «Մը- շակի» սոյն կարծիքների հետ համամիտ չեղողները՝ ականայից պէտք է կամ բոլո- րովին լռէին և կամ ընդհանուր ձևերով իրենց հայեացքներն կիսաապօրատ ար- տայայտէին: Իրանց պարագլուխը Պէտրոս Միմէօնեանցն էր, որ ահա ինչպէս էր պա- տասխանում իր «Մեղուի» մէջ Արծրունու գրգռեցուցիչ յօդւածներին:

«Մեր համեստ խորհուրդը մեր սիրելի

*) Նոյնը, եր. 426

հայ եղբարց, որոնք ամենուրեք ցրած են
 այն է, որ նորա պահպանելով իրանց պարզ
 հայկական կեանքը, հեռու մնան շոայու-
 թիւնից և զարգանալով մտաւորապէս և
 բարոյապէս և ապահովելով իրանց նիւթա-
 պէս, դառնան անհրաժեշտ կարևոր խաղաղ
 քաղաքացիք այն երկիրներում և տէրու-
 թիւններում, ուր նորա բնակւում են և
 վայելեն տիրապետող ազգերի հետ հաւա-
 սար քաղաքական իրաւունքներ, պահպա-
 նելով իրենց ազգայնութիւնը, լեզուն և
 կրօնը, զարգացնելով սոցա ժամանակի
 պահանջներին համեմատ: Իսկ տաճկահա-
 յերի կոչումն մինչև անգամ աւելի լաւ է,
 քան այս. թող նորա ուսմամբ և բարոյա-
 պէս զարգանալով առաջանան և նրանք մեծ
 կշիռ կը ստանան այստեղ անշուշտ, վասն
 զի ժամանակը պիտի պահանջէ իր հարկը
 և տաճկից և բրդից և կիսավայրենի թիւրք-
 մէնից, որոնք այն ժամանակ ակամայ պի-
 տի դառնան դէպի հայերը՝ սրանցից ժա-
 մանակի պահանջած ուսումն ու գիտու-
 թիւնը ստանալու: Հայի այս մտաւոր և
 բարոյական գերազանցութիւնն անշուշտ
 ժամանակով կը կազմէ Տաճկաստանի մէջ
 երկու գօրեղ տարրեր՝ տաճկական և հայ-
 կական, որոց իւրաքանչիւրը կը լրացնէ
 միւսի պակասութիւնը և այսպէս երկուսը
 միասին ներդաշնակութեամբ կը կազմեն

մի տաճկա-հայկական քաղաքական մար-
 մին, որպիսի կերպարանք ունին աշխար-
 հիս երեսին շատ գօրեղ քաղաքական մար-
 միներ» *):

«Մեղուից» արտատպելով այս տողերը
 «պատմաբան» Լէօն ծաղրում է Պետրոս
 Միմէօնեանցի այս լուսամիտ առաջարկն
 ու ցանկութիւնը:

Արծրունու աշակերտից ուրիշ վերա-
 բերմունք չէր էլ կարելի սպասել դէպի մի
 առաջարկ, որ հիմնւած չէ սուրի ու ար-
 եան վրայ, որ քարոզում է եղբայրակցու-
 թիւն, այլ ոչ եղբայրատեցութիւն, որ
 խրախուսում է կուլտուրական, շինարար
 գործունէութիւն, այլ ոչ վայրագութիւն
 ու բարբարոսութիւն, վերջապէս... որ չէ
 ուզում անմեղ գառնուկը հիւանդ մօր
 գրկից խլել և տանել առողջ գազանի բե-
 րանը ձգել:

Հայի և իր հարեանների ու տիրող
 տաճկի մէջ կուլտուրական եղբայրակցու-
 թիւնն՝ արհամարհելի և անիրագործելի
 «մի հէքեաթ» համարելով՝ Արծրունին և իր
 ձեռնասուներ՝ Բաֆֆին մի երկու տարի յե-
 սոյ շատ համակրելի և դիւրաւ իրագոր-

*) Նոյնը էր. 429:

ծելի համարեցին և քարոզեցին «ասորական-հայկական» համերաշխ և միահամուռ ապստամբութիւն և յարձակում Օսմանեան պետութեան վրայ, ինչպէս իր տեղում կը տեսնենք:

Առայժմ նկատենք այստեղ, որ երբ Արծրունին տեսաւ թէ տաճկահայերին ապստամբեցնելու իր գործ դրած շանքերը ապարդիւն են անցնում,—մոլեգնեցաւ և ուղղակի փողոցային խօսքերով սկսեց հայհոյել նրանց ասելով թէ՛ «հայերը դիակ են, լէշ են, աղբ են...»:

Ժէ

Թէև Պօլսոյ ամբողջ հայ մամուլը, բացի ուսաց դեսպանատան հովանաւորութիւնը վայելող «Մանգումէ»-ից, բողոքեց և շարունակ բողոքում էր Արծրունու զրգոչական յօդածների դէմ, և ինքն էլ փոխադարձաբար ուսահայերին զրգում էր ուս կառավարութեան դէմ, սակայն ես իմ ընթերցողի հետ բաւականանում եմ «Մասիսի» մի յօդածով: Այս թերթը, ընդհանրապէս, լուրջ թերթ էր և նրա խմբագիր Իւթիւճեանը՝ իր խօհեմութեամբ և բազմակողմանի վարկացմամբ՝ միշտ բար-

ձրը ի գլուխ կանգնած էր Պօլսոյ հայ մամուլի ներկայացուցիչներին մէջ:

— «Բնաւ չէր յուսացւէր,—գրում էր «Մասիսը»,—մայրաքաղաքիս հայ լրագրացումանց մէկ չափազանցութեան փոխարէն*») Թիֆլիզ հրատարակեալ և ամեն մէկ տղոքրաֆնկիս սուր ֆնկութեան ենթարկեալ թերթ մը գուցէ անկէ առնելով, Թիւրքիոյ հայոց և զանոնք կառավարող տէրութեան դէմ նախատինք և թշնամանք տեղա, ոչ թէ հայու, այլ Մոսկովի մի բերնին մէջ վայլուչ լեզուաւ մը... «Մշակը Թիւրքիոյ հայերը դիակ, լէշ, աղբ կը կոչէ: Մենք ամենքս անոր աչքին առջև մարդ ըսելու անգամ արժանի չենք եղեր, այլ գրաստ, անբարոյական, ինկած, անշունչ էակներ ենք եղեր և եթէ պատճառը հարցնելու լինինք, այս է եղեր որ «Թիւրքիոյ հայերը թուրքերուն և քիւրտերուն սիրտը դանակ չեն կոխեր»... ինչ մարդասիրական պահանջում:

«Մշակի» խմբագիրն ինչ փաստ ունի ապացուցանելու թէ Թիւրքիոյ հայն այն ատտիճան ընկած է, ինչպէս որ կը կարծէ. ինչպէս պիտի կրնայ ապացուցանել թէ Ռուսիոյ հայը բարոյապէս գերազոյն է Թիւր-

*) Այդ դիտաւորեալ չափազանցութեան ինչ մասերը՝ ես պարզել եմ իմ «Մտորումների» մէջ:

իւոյ հայէն, ի՞նչ յառաջադիւորութիւն, ի՞նչ լուսաւորութիւն ի՞նչ ազգային կեանք կրնայ ցոյց-
նել ռուսական Հայաստանի մէջ, որպէսզի Թուր-
իւոյ մէջ հայութեան ջնջումը պահանջէ*):

Որովհետեւ Փոքր-Ասիոյ խորերն և Հա-
յաստանի մէջ կը պատահին եղեր մասնա-
ւոր եղեւնագործութիւններ հակառակ կայ-
սերական կառավարութեան կամաց, ի վնաս
այս կամ այն հայ անհատին եղեւնագոր-
ծութիւններ՝ որոց հեղինակներն եթէ ձեռք
անցնին, իրենց արժանաւոր պատիժը կը
կրեն, ասոր համար պէտք է եղեր որ հայե-
րըն ի գէն դիմեն իրենց կառավարութեան
գէմ և «Մշակի» քարոզած քաղաքական ըն-
թացքը բռնեն իրենց իսլամ հայրենակցաց
նկատմամբ, որոց ամենամեծ մասը սիրով
և համակրութեամբ վարւած են իրենց հետ
այսչափ դարերից ի վեր, և այնպէս կը
վարւին միշտ, մանաւանդ ներկայ լուսաւ-
որեալ դարուս մէջ:

...Ենել ընկերական պատերազմի և
ապստամբութեան հրաւէր կարգալ հայոց,
ստուգիւ, եթէ ոչ ազգատեցութեան, գոնէ
յիմարութեան վերջին ծայրն է:

Եթէ հայն իւր ազգային անհատականու-

*) Ընդգծումները իմն են:

թիւնը պահած է, կը հարցնենք թէ որու
շնորհիւ է: Ոչ ապաքէն այն կառավարու-
թեան պարտի իւր ազգութեան և լեզւին
պահպանութիւնն, որ այսչափ ժամանակ է
ի վեր ոչ միայն բնաւ չբնագրեց զինքն իւր
ազգութիւնը փոխելու, երբ ամեն բան
կարող էր, այլ և պաշտպանեց և առանձնա-
շնորհութիւններ տուաւ: Նոյն իսկ այն դա-
րերուն մէջ երբ Թուրքիա տակաւին Թան-
զիմաթը գործադրած չէր, երբ Եւրոպական
տէրութեանց ներդաշնակութեան մէջ մը-
տած չէր, հայերը մեծամեծ շնորհներ կը
վայելէին, Թուրքիոյ ելումուտը իրենց
ձեռքն էր, վաճառականութեան մեծ մասը
իրենք կրնէին և կայսերական մեծամեծ
գործարաններ կը բանեցնէին: Ահա այս
շնորհիւ Թուրքիոյ հայը կրցած են անթիւ
եկեղեցիներ ու դպրոցներ կանգնել, իրենց
կրօնքը պաշտել և լեզուն մշակել, զարգա-
նալ և աճել»*):

Բայց այս ամենը Արժրունու համար
ոչ մի նշանակութիւն չունէր: Նա կարծում
էր, որ տաճկահայերի դրութիւնը ինքը ա-
ւելի լաւ էր իմանում, քան տաճկահայերը
իրանք, որոց Արժրունին գոռով, բռնու-
թեամբ ուղում էր լաւութիւն անել, ա-

*) Նոյնը եր. 459—461:

ուանց իմանալու թէ ինչու մն է կայանալու
այդ լաւութիւնը, նրա ներկան, կամ
մանաւանդ նրա ապագան:

Ամբողջ Պօլսոյ հայ մամուլի, տաճկա-
հայ պաշտօնական ներկայացուցիչների և
բանիբուն խմբերի ու անհատների, — Լէօի
բառերովը խօսելով, — «անագին ազմուկն
ու վայնասունը չկանգնեցրին Արծրունուն:
Նա չնահանջեց, կիսից յետ չդարձաւ, այլ
շարունակեց իր պրօպագանդան աւելի մեծ
եռանդով» *):

Այս ժամանակներումն էր, որ Ներսէս
պատրիարքը ի պաշտօնէ իր դաւանանքը և
ձայնը լսելի կացուցանելու համար իր հօ-
տին, և այդպիսով վերջ դնելու լրագրական
ազմուկներին Պօլսում և Թիֆլիզում հե-
տեեալ շրջաբերականը հրատարակեց:

— Այն օրէն ի վեր, — գրում էր Ներ-
սէս պատրիարքը, — որ հայոց ազգին ամե-
նամեծ մասն Օսմանեան հզօր տէրութեան
հպատակասէր բաղջը հովանոյն ներքև մը-
տաւ, իւր հինգ դարուց պատմութիւնը կը
ցուցանէ, թէ ինչ մեծամեծ շնորհներ իրեն
պարգևած է այս հզօր տէրութիւնը: Եթէ
այսօր Թուրքիոյ մէջ կը տեսնենք հայ

*) Նոյնը, եր. 462.

ազգը որ կը պահէ իր կրօնը, իւր եկեղե-
ցին, իւր լեզուն, իւր պատմութիւնն ու
աւանդութիւնները, վերջապէս եթէ այսօր
հայ ազգն կը զգայ իւր էութիւնը, նոյն
բարեխնամ տէրութեան շնորհաց արդիւն-
քնն են: Այս ճշմարտութեան ամեն հայու
միտք համոզւած է և չկայ հայ մը գրեթէ
որ ասոր դէմ խօսի առանց իւր պատմու-
թիւնն անգիտանալու և ազգին շահերը չը
ճանաչելու:

Հայոց ազգն ալ իւր այս վայելած
շնորհներուն փոխարէն հաւատարիմ հպա-
տակութիւն ցուցած է արդեամբ, և յա-
րատե երախտագիտութիւն իւր սրտին մէջ
կրած է յորդուց յորդիս: Ինչ ասպարէզ որ
որ բացւած էր իւր առջև, հոն բերած ար-
գասաւորւած է իւր բոլոր մտաւորական,
բարոյական և նիւթական կարողութիւննե-
րը և ապացուցած է այսու՝ թէ Օսմանեան
պետութեան ամենակարևոր տարրն է:

Ստոյգ է թէև, որ հայ ազգը մերթ ընդ
մերթ զաւառներու մէջ բարեխնամ կա-
ռավարութեան կամաց հակառակ հարստա-
հարութեանց ենթակայ եղած է, հարստա-
հարութիւնք՝ որոնք միայն մարմիկը կը վնասե-
ն, եւ հետի եւն այն տեսակ հարստահարու-
թիւններէն, որով ոգին եւ մարմիկը միակգա-
մայն կը վնասեն եւ ազգին գոյութեանը կըս-

պատնասի *), սակայն վերջին օրերս ձեռք առնւած միջոցով և մանաւանդ Վեհափառ Սուլթանի գահակալութեան առթիւ հրատարակւած հրովարտակին **) սկզբանց յենլով՝ մեծ յոյս ունինք որ այնպիսի մասնաւոր ճնշմանց ու անկարգութեանց ալ հիմնական բարեկարգութեամբք առաջքը պիտի առնւի, և մեր գաւառացի ազգայինք լիովին պիտի վայելեն բարեխնամ տէրութեան մեր ազգին վրայ ունեցած մասնաւոր սիրոյ և համակրութեան արդիւնքը:

Արդ հայ ազգն՝ որոց ճակատագիրը այսչափ դարերէ ի վեր նւիրագործեալ կապերով միացած է Օսմանցւոյն ճակատագրին հետ, չը կրնար անտարբեր մնալ Օսմանեան տէրութեան գտնւած արդի ծանրակշիռ պարագայից մէջ, այլ պարտաւոր է ինչպէս ամեն ժամանակ նոյնպէս և առաւել ևս ներկայ ժամանակիս մէջ անկեղծ օժանդակութիւն մատուցանել:

«Այս օժանդակութիւնն ընելով հայրենասէր հայը նոյնիսկ իւր ազգային շահը

*) Ընդգծումները իմն են:

**) Միտհատ-փաշայի սահմանադրութիւնը, որի իրագործմանը արգելք եղաւ այն ժամանակ Ռուսիոյ հրատարակած պատերազմը, ինչպէս որ այժմեան սահմանադրութեանը արդելք հանդիսացաւ եւրոպական քաղաքականութիւնը:

պաշտպանած կըլլայ, վասնզի Օսմանեան երկիրը պաշտպանել՝ Հայաստանը պաշտպանել ըսել է, նոյնիսկ հայուն կրօնը, դպրոցը, ինչքը, տունը, ընտանիքը և պատիւն ու կեանքը պաշտպանել ըսել է» *):

Կոնդակը վերջացնում էր ներսէն պատրիարքը՝ Ազգային վարչութեան խառն ժողովի որոշման համեմատ՝ հրաւիրելով իր հօտին եկեղեցիներում աղօթել Սուլթանի՝ և նրա զօրաց համար, նոյնպէս և կամաւորապէս օգնել տաճիկ զօրքին՝ զինւոր զրեւելով:

Ինչպէս մի անգամ Պետրոս Սիմէօնեանի խաղարար մտքերն էր արհամարհում մեր «պատմաբան» Լէօն, այս անգամ էլ ներսէս պատրիարքի մտքերիցն է վրդովում ասելով «մի կողմ թողնելով ուրիշ բոլոր հանգամանքները **), նկատի առնենք միայն այն, որ Թիւրքիայի պէս մի մէծ զինւորական բռնապետութիւն պատե՛րազմ էր մղում երկու փոքրիկ, թոյլ, նոյնիսկ կանոնաւոր զօրքեր չունեցող սլաւօնական իշխանութիւնների դէմ, որ

*) Նոյնը էր. 450:

**) Իզուր էք այդ բոլոր հանգամանքները մի կողմը թողնում: Քաջութիւն ունեցէք կամ հերքելու, կամ ընդունելու նրանց ճշմարտութիւնը:

Թիւրքիայի բանակները, Սերբիայի սահմանները հասնելու համար, պիտի անցնէին Բոլգարիայի արիւնոտ դաշտերով, ուր դեռ նոր այդ զօրքերը կատարել էին այնպիսի գազանութիւններ, որոնցից սարսափահար էր դարձել ամբողջ քրիստոնեայ աշխարհը:

Միայն այս հանգամանքները աչքի առաջ բռնելով, մենք տեսնում ենք որ առ նւազն չափազանցութիւն էր քրիստոնեայ ազգի հոգևոր ներկայացուցչի կողմից այդպիսի շրջաբերական հրաւեր հրապարակելը*):

«Կարծեմ ոչ մի ժամանակ,— շարունակում է «պատմաբան» Լէօն,— Կ. Պօլսի հայութիւնը այս աստիճանի թիւրքասիրութիւն չէր ցոյց տւել»**):

*) Իսկ քրիստոնեայ հոգևոր ներկայացուցչի կողմից այդպիսի շրջաբերական ուղղելի ընդդէմ թիւրքաց «առնւազն չափազանցութիւն» չէ՞ր լինիլ միթէ:

**) Որովհետև ուրիշ ոչ մի ժամանակ այս աստիճանի թիւրքատեցութիւն չէր ցոյց տւել Կովկասի հայութիւնը յանձին ազատամիտ «Մշակի»: Շատ բնական է. մի ծայրայեղութիւնից միւսն է առաջ գալիս: Իշխող տէրութեան շահերի համար՝ ձեր կոկորդը պատահողով, ինչի՞նչ ուրիշը չպիտի այդ իրաւունքը ունենայ իր վրայ իշխող տէրութեան շահերի համար: Եթէ դուք ձեր տէրութեան և ձեր անձնական շահերը անբաժան էք գտնում, նոյնպէս գտնում է և ուրիշը:

Ճիշտ է, յոյներն էլ էին կամաւորներ տալիս*), գուցէ**) նոյնիսկ աղօթում էին իրանց եկեղեցիներում որ կիսալուսինը շախշախէ Չերնօգորիան և Սերբիան, բայց հայերի շերմ թիւրքամոլութիւլ մի առանձին, աչքի ընկնող երևոյթ էր կազմում»***):

— «Միայն մի մարդ գտնւեց հայերի մէջ,— վերջ է տալիս Լէօն իր խօսքերին,— որ բողոք հրապարակեց պատրիարքի այս շրջաբերականի դէմ: Եւ դա Գրիգոր Արծրունին էր, որ այդ առթիւ մի առաջնորդող գրեց հետեւեալ վերնագրով՝ «Կ.

*) Ուրեմն եթէ համակրօն յոյնը իր կամաւորներն էր մտցնում թիւրքաց բանակի մէջ, ինչի՞ հայերը ևս չմտցնէին: Այս դէպքում ինչ հակառակ բան է գտնում մեր «պատմաբանը» ընդդէմ խղճի, ազգի կամ քաղաքականութեան: Ինչ որ ինձ է վերաբերում՝ պատրիարքի այս վարմունքը ես հակառակ եմ գտնում միմիայն մշակական-հայկական ազատամտութեան:

**) Ոչ թէ գուցէ, այլ ճիշտ՝ աղօթում էին:
 ***) Երկուսից մէկը, կամ մեր «պատմաբանը» չգիտէ այդ երևոյթի հիմնական շարժառիթը, և կամ գիտէ ու թաղցնում է: Այդ երևոյթը, սիրելի ընթերցող, «թիւրքամոլութիւնից» չէր առաջանում, այլ Պօլսում ապրող մօտ 50000 հայ մշակների ու արհեստաւորների,— ամենամեծ մասամբ գաւառացիների— կեանքը վերահաս կոտորածից ազատելու համար,— կոտորած, որի համար նիւթեր էր նիւթել մի զիպլոմատ: Ման. հեղ.

Պօլսի Ներսէս պատրիարքի խայտառակ և ամօթալի շրջաբերականը»:

Ինչպէս ընթերցողը ինքն էլ տեսաւ՝ Ներսէս պատրիարքի շրջաբերականի մէջ ոչինչ «խայտառակ և ամօթալի» բան չկայ:

— «Այդ շրջաբերականի մէջ, — գրում է Լէօն, — Արծրունին տեսնում էր կղերականութեան յաղթանակը*):

Արծրունին, ինչպէս յաճախ, այս անգամ ևս խելքին զօռ էր տալիս, պատասխանում եմ ես մեր «պատմաբանին»:

Ներսէս պատրիարքի շրջաբերականի մէջ ոչ կղերականութիւն կայ, ոչ էլ նամանաւանդ կղերականութեան յաղթանակ:

Եթէ արդարև յիշեալ շրջաբերականը «կղերականութեան յաղթանակ» էր համարում «Մշակի» խմբագիրը, և մեր «պատմաբանը» համամիտ է նրա հետ, — այն ժամանակ նա պարտաւոր է իր կարծիքը ևս յայտնել Արծրունու մտքի նկատմամբ, այլ ոչ թէ «մի կողմ թողնելով ուրիշ բոլոր հանգամանքները», մութ խօսքերով հարցի էական մասը կտուրը ձգել:

*) Նոյնը, եր. 452.

Բայց դառնանք Արծրունու առաջնորդողին:

ԺԸ

«Ներսէս սրբազանի շրջաբերականը կարդալուց յետոյ, — ասում է Արծրունին, — մենք ոչինչ գանազանութիւն չենք գտնում նրա ամօթալի վարմունքի և Հոռմի անսխալական հրէշի վարմունքի մէջ թիւքաց տէրութեան վերաբերութեամբ...»:

«Ինչ սքանչելի պատկեր՝ քրիստոնէական առաքելական եկեղեցու հովիւր բարոգում է հրապարակապէս, թէ աւետարանի պահպանողը իսլամն է, թէ «Օսմանեան երկիրը պաշտպանել՝ Հայաստանը պաշտպանել ըսել է, նոյնիսկ Հայուն կրօնը, դպրոցը, ինչքը, տունը, ընտանիքը և պատիւն ու կեանքը պաշտպանել ըսել է»:

«Մենք միշտ համոզւած էինք, — շարունակում է Արծրունին, — որ քրիստոնէութիւնը՝ թէ իր բարոյական, թէ հասարակական վարդապետութեան կողմից բարձր է, քան թէ մահմեդականութիւնը, որ միայն քրիստոնէութեան միջոցով կարելի է մարդկութեան հասնել լայն, ընդարձակ,

բարոյակա՛ն, հասարակական և քաղաքական զարգացմանը: Մենք միշտ համոզուած էինք, որ քրիստոնէութիւնը դաւանող ազգը չէ կարող իր բոլոր մտաւոր, հոգևոր, անտեսական և հասարակական կարողութիւններ զարգացնել մինչև որ ենթարկուած կը լինի մի պետութեան լուծին, որ դաւանութիւնը՝ մահմեդականութիւնը սկզբունքով թշնամի է մարդու ազատ, անհատական զարգացմանը, այն դաւանութիւնը, որ իրան երբէք ընդունակ չէ ցոյց տւել՝ նպաստել պետական կանոնաւոր, հաստատ, գորեղ կազմակերպութեան զարգացնելուն, որ միշտ սկզբունքով թշնամի է եղել լոյսի, յառաջադիմութեան, ժամանակակից գաղափարների ընդունելուն...

«Բայց Ներսէս սրբազանը այսպէս չէ կարծում: Այդ քրիստոնեայ հովիւը, այդ աշակերտը և առաքեալը քրիստոսի՝ անհրաժեշտ է համարում քրիստոնէական ազգի գոյութեան տևողութեան համար մահմեդականութեան հովանաւորութիւնը, քրիստոնեայի պատիւը ենթարկում է իսլամի պատուի հովանաւորութեանը, աւետարանը ստորադրում է գուրանին...

Փրկչի հօտի գոյութիւնը կարօտ է համարում Մահմեդի պաշտպանութեան...

«Մենք խօսքեր չենք գտնում, վերջացնում է Արծրունին իր մեղադրական ճառը, —մեր վարմանքը, գայրացումը, մեր զգվանքը արտայայտելու համար, տեսնելով որքան ստոր է ընկել բարոյապէս մեր հոգևորականութիւնը և որ նրա երարխիական կազմակերպութեան այգբան բարձր աստիճանների վրայ բուն է գրել կաթոլիկ կղերականութեան թշւառ ոգին» *):

Նախ և առաջ պէտք է նկատել, որ ամօթայի, խայտառակ, գայրացում և զգւանք բառերի գործածման տեղը գոնէ այստեղ չէր: Առանց այն էլ «Մշակի» բառարանը չափազանց հարուստ էր այդպիսի և աւելի վատթար բառերով:

Երկրորդ՝ Ներսէս պատրիարքը իր շրջաբերական կոնգակով քրիստոնէութեան ուսումնասիրութիւնը չէ հրատարակում: Նա այդ երկու վարդապետութիւնների համեմատութիւնը չէ անում նմանապէս: Այլ նա իր հօտին մի գործնական ու կենսական խրատ ու յորդոր է կարդում: Հետևաբար Արծրունին ի գուր պատրիարքի տևաբար Արծրունին ի գուր պատրիարքի այդ գործնական միտքը տեսականի է վերածում և իր կողմից լուսաբանութիւններ անում:

*) Ահօ Հատ. Բ. Երես. 453:

Երրորդ՝ Արծրունու հայեացքը մահմեդականութեան մասին միակողմանի է և շատ ու շատ վիճելի:

Ճշմարիտ է, ուսումնականների մէջ կան մարդիկ, օրինակ Ռնանը և ուրիշները, որոնք քարոզել ենք Արծրունու այժմեան ասածները, բայց միւս կողմից կան և ուրիշները, որոնք հակառակն են պնդում: Եւ «յայն, ընդարձակ, բարոյական, հասարակական և քաղաքական զարգացումը» քրիստոնէութեան մօտօպօլիտ չեն համարում Արծրունու նման:

Ասորեցիք, բաբելացիք, եգիպտացիք, յոյները, հռոմայեցիք քրիստոնեայ չէին, սակայն քաղաքակրթւած էին: Այժմեան հեթանոս ճապոնիան՝ շատ քրիստոնեայ պետութիւնների վրայ կարող է լիմոն սեղմել իր բարձր քաղաքակրթութեամբ:

Միթէ այդ հեթանոս ազգերը «պետական, կանոնաւոր գօրեղ կազմակերպութիւն չունէին:

Գալով մահմեդականութեանը՝ միթէ արաբական քաղաքակրթութիւնը, միթէ Հարուն-ալ-Ռաշիդի դարը պակաս զազացած էին:

Եթէ Արծրունըն մատնանիշ կը լինի

այդ կրօնները զաւանդոյների գործած այս ու այն, մեծ ու փոքր շարագործութիւնները, ջարդերը, — ես էլ նրան մատնացոյց կը լինեմ քրիստոնէութեան անունով կատարւած ինկվիզիցիան, Բարգուղիմեան գիշերները հնումը, իսկ մեր օրերում՝ այն գազանութիւնները, որ քրիստոնեայ տէրութիւնները գործեցին Տրիպօլիտանիայի արաբների վրայ, Չինաստանի խաղաղ գիւղացիների վրայ, նրանց ձերերի, կանանց և անմեղ մանուկների վրայ, Խարթումի արաբացիների վրայ, Տրանսպալցիների վրայ, Ալժիրի ծծկեր մանուկների վրայ և այլն, և այլն:

Բայց, ի հարկէ, ինչպէս որ այս հեն ու նոր սոսկալի եղեոնագործութիւնների մէջ մեզ չունի քրիստոնէական կրօնը, այսպէս էլ՝ հեթանոսների և մահմեդականների գործած եղեոնագործութիւնների մէջ մեղաւոր չէ նրանց կրօնը:

Վերջապէս չորրորդ՝ Արծրունին, ինչպէս իր խօսքերիցն է երևում, քրիստոնէութիւնը թէպէտ և գովում, պաշտպանում է, սակայն քրիստոնէութեան ինչ լինելը, դժբաղտաբար, չէ ըմբռնել: Եւ մեր ազատամիտ հրապարակախօսի այդ անըմբռնութեան ամենալաւ ապացոյցը այն ատե-

ցողութիւնը, այն անհամբերատարութիւնն է, որ նա ցոյց է տալիս դէպի մահմեդականները, որոնք Քրիստոսի վարդապետութեամբ միկնայն «Երկնաւոր Հօր որդիքն» են:

Ուրեմն Ներսէս պատրիարքը՝ «այդ քրիստոնեայ հովիւը, այդ աշակերտը և առաքեալը Քրիստոսի» վարւել է ճիշտ Քրիստոսի վարդապետութեան նման: Հետեալը նա անբասիր է:

Սակայն Արծրունու վրդովմունքը, նրա «զարմացումը», նրա «զայրացումը» և «զգգվանքը» նրանից է առաջ գալիս, որ պատրիարքը կոնդակում գրում է, թէ «Օսմանեան երկիրը պաշտպանել՝ Հայաստան պաշտպանել ըսել է. նոյնիսկ Հայու կրօնը դպրոցը պաշտպանել ըսել է»:

Բայց մի՞թէ անհիմն են Ներսէս պատրիարքի այս խօսքերը:

Հայոց ամբողջ պատմութիւնը չորրորդ դարից սկսեալ մինչև այսօր կենդանի փաստերով ապացուցանում է, որ քրիստոնեայ պետութիւնների ձեռքին՝ քրիստոնէութիւնը սոսկ պատրւակ է եղել իրենց քաղաքաքական, նւաճողական, աշխարհակալական ձգտումները ի կատար ածելու:

Ուրիշ ոչինչ, միանգամայն ոչինչ:

Այն ամեն իրաւունք ու արտօնութիւնները, որոնք հայերը զաւանակից ազգերից ստացել են, ամենքն էլ ժամանակաւոր, խաբուսիկ բաներ են եղել՝ հայերի աչքը շլացնելու, նրանց քնացնելու համար:

Այն պարզեւններն ու թագերը, որոնք Արշակունի, Բագրատունի և Ռուբինեան հայ թագաւորները ստացել են քրիստոնեայ Հռոմից—ուրիշ նպատակ չեն ունեցել եթէ ոչ հայերին որսալու. յիմարացնելու և իրենց հետ ձուլելու:

Եւ յաջողած էլ են:

Այո, քրիստոնէութիւնը էժան չի նըստել հայ ազգի վրայ:

Ընդհակառակը՝ ոչ քրիստոնեայ տարբերը, մեզ վրայ իշխող պարթևացին, սասանացին, արաբացին, մահմեդականը համարաբար հաշտ և համբերատար ոգով են վարւել հայերի հետ: Ընդունել, յարգել ու պատել են մեր կրօնը, մեր ազգային աւանդութիւնները (История человека, հատ. Ե. 199, 205), ոչ թէ քրիստոնէից նման առ երեսս, կեղծաւորութեամբ, յետին

նպատակով, այլ անկեղծութեամբ, ուղղա-
մտութեամբ, հաւատով:

Այո, հեթանոս, կռապաշտ և մահմե-
դական պետութիւնները այդ կողմից՝
միշտ բաձր են կանգնած եղել քրիստոնեայ
կոչւած պետութիւններից *):

Վերջիններս քրիստոնէութիւնից այն-
քան հեռու են, որքան երկիրը՝ երկրից:

Եւ միմիայն մեր միամիտ-ազատա-
միտներն են, որոնք չեն կարողանում քրի-
ստոնէութիւնը քրիստոնեայ կոչւածներից
ջոկել, զանազանել:

*) Քրիստոնեայ տէրութիւնների մեր եկեղեցին
հալածելու հազարաւոր փաստերից միայն երկուսը ա-
ռաջ կը բերեմ այստեղ.

ա) Ժէ դարու մեր կաթողիկոսներից մէկը, Փի-
լիպպոսը, Իննտիկնտիոս պապին գրած թղթումը ի մի-
ջի այլոց անա թէ ինչ է գրում. «...Այլ և զարմանամ
իսկ ընգէր արդեօք այնպիսի դժնդակութիւն խար-
դախութեանց գործի այդք առ մեզ, զի մեք թէպէտ
նեղութիւն ինչ հարկապահանջութեան կրեցիմք յայլ-
ազգաց աստի, սակայն ի կողմանէ հաւատոյ, կամ ե-
կեղեցւոյ սակս, ոչ երբէք տեսեալ եմք հակառակու-
թիւն ինչ կամ կրեալ վիշտ, այլ ամենայն համակրու-
թեամբ պաշտեմք զհաւատս մեր, և յայնութեամբ
կատարեմք զամենայն խորհուրդ եկեղեցւոյ և զկար-
գաւորութիւն ազօթից՝ փառաւորեալ յաչս տղարարոյ
ազգաց» (Դիւան Հայոց պատմ. գիրք Ժ, եր. 101):

Եւ իրենց ազատամտութեան մէջ այն-
քան առաջ են գնում, որ քրիստոնէութեան
անունով, լսում էք, քրիստոնէական անու-
նով ուղում են արդարացնել ու պաշտպա-
նել պատերազմը, արիւնհեղութիւնը, յա-
փշտակութիւնը, եղբայրատեցութիւնը, նե-
ղութիւնն ու ատելութիւնը, որոցմով գոր-
ծել է և գործում է քրիստոնեայ կոչւած
պետութիւնների քաղաքագիտութիւնը՝
յամօթ և ի նախատինս քրիստոնէութեան:

Վերցրեք թէկուզ հէնց այսօրւայ ար-
իւնահեղ պատերազմը տաճկաց և սլաւօն
տէրութիւնների մէջ: Դա ամբողջապէս
քրիստոնեայ աշխարհի նենգաւոր և շահա-
մոլ քաղաքագիտութեան արդիւնքն է:

Այս բանը այդ ազգերը շուտով իրանք
էլ կզգան, կըհասկանան ու կը զղջան:

բ) Փիլիպպոս կաթողիկոսի ճիշտ այս թղթի ի-
մաստով մի թուղթ էլ գրեց Դէորդ Դ. Պետերբուրգ
Մեծ Իշխան կոստանդինին, խնդրելով որ զեկուցանէ
Թագաւոր Կայսեր:

Այս թղթի հետեանքն էր որ 1873-ին կառավա-
րութիւնը յետ վերցրեց՝ մեր դպրոցները գրաւելու
նախկին կարգադրութիւնը:

Վերջապէս քանի տարէ է անա, որ երդման հար-
ցը ծեծուած է մեր կաթողիկոսների և կառավարութեան
մէջ. իսկ մեր լրագրութիւնը Զաքարիայն նման պա-
պանձել է, ձայն ծպտուն չի հանում:

Ծան. հեղ.

Այդ հրդեհը քրիստոնեայ աշխարհը առաջացրեց, որպէսզի ուրիշների ձեռքով իր ուզած շագանակները հանէ այդ բոցերի միջից:

Այդպիսի շագանակներ հայերը իրանց գոյութեան ընթացքում շատ-շատ անգամ են հանել քրիստոնեայ կոչւած ազգերի համար: Եւ իրանց տուներ շարունակ քանդել են, նրանցը շինելու համար:

Մինչդեռ ոչ-քրիստոնեայ ազգերի իշխանութեան տակ հայ ազգը համեմատաբար աւելի ապահով և աներկիւղ է եղել: Իր կրօնը, իր լեզուն, իր ազգային առանձնայատկութիւնները, համեմատաբար աւելի տևականութիւն են ունեցել և յարգով ու պատուով մնացել:

Եւ ահա այս ամեն ճշմարտութիւններն են, որ Կ. Պօլսի ներսէս պատրիարքը յիշել է իր շրջաբերական կոնդակում:

Եւ միմիայն Արծրունու նման ազգային պատմութիւնից բէյխաբար հրապարակախօսներն են, որոնք վրդովում են այդպիսի ճշմարտութիւններ լսելուց և ձեռնարկում իրենց սովորական լեզւագարութեանը:

— Ուրեմն ձեր ասածով, — անշուշտ այս հարցը կը տայ ինձ իմ ընթերցողը, — ուրեմն ձեր ասածով մահմեդական պետութիւնների Հայաստանի մէջ արած աւերածութիւններն ու կոտորածները սուտ են, հնարովի*:

— Ոչ, դրանք սուտ չեն, այլ անուրանալի իրողութիւններ, — պատասխանում եմ և իսկոյն գալիս եմ բացատրութիւնը տալու:

ԺԹ

Որքան էլ որ մեր հին և նոր ազատամիտները կրօնին նշանակութիւն չտան, այնուամենայնիւ ազգութեան ֆակտորների մէջ նա առաջակարգ տեղերից մէկն է բռնում մարդկութեան պատմութեան մէջ:

Հին ազգերի մէջ մանաւանդ՝ ազգութիւնը կրօնով էր իմացւում: Հիմա էլ մեծ մասամբ, այսպէս է*):

*) Այս փաստը ապացուցանող հետաքրքիր տեղեկութիւններ է տալիս սրբ. Բարդէն Կիւլեսեբեանը իր մի նոր և պատուական աշխատութեան մէջ՝ «Հայաստան»:

Իբրև հին ազգի մէջ՝ հայերիս մէջ էլ՝ կրօնը ահագին դեր է կատարել: Եւ կատարում է մինչև այսօր:

Եթէ Արշակունեաց թագաւորութեան ժամանակ և նրա վերջերում հռոմէական քրիստոնեայ կայսրները կարողացան այնքան գործ տեսնել իրենց համար քրիստոնեայ Հայաստանում, այնքան որսալ ու գրաւել ս. Գրիգոր Լուսաւորչի գաւակներին, որ մինչև իսկ նրա թագաւորութեան կործանման պատճառ դարձան,— դրա պատճառը, այո մասամբ հռոմէական կայսրութեան կանոնաւոր կազմակերպութիւնը, նրա կարգերի և կանոնների հաստատակաւնութիւնն էր, սակայն ամենամեծ մասամբ նաև այս երկու ազգերի կրօնակցութիւնը էր—քրիստոնէութիւնը:

Կրօնակցութիւնը ազգերի փոխադարձ յարաբերութեան մէջ՝ նոյնն է, ինչ որ մարդկանց մէջ՝ ազգակցութիւնը, կամ առնւազն՝ խնամութիւնը,—այսինքն մի-

տանեայց եկեղեցին հինգերորդ դարու մէջ՝ վերնագրով (Կ. Պոլիս, 1912):

Սորհուրդ ենք տալիս հայ հոգևոր դասին, նոյնպէս և հայ ուսումնականներին՝ կարգաւ սրբ. Բարգէնի այդ դիմնական վաստակը:

միանց մօտենալն, միմիանց համակրելն:

Ինչ դեր որ կատարեց քրիստոնեայ Հռոմը կրօնակից հայերի վերաբերութեամբ Արշակունեաց թագաւորութեան ժամանակ —նոյն դերը կատարեց, և աւելի վատթար —կերպով, քրիստոնեայ Բիւզանդիոնը Բաղրատունեաց թագաւորութեան ժամանակ է նրա վերջերումը:

Եւ նոյնպէս այդ թագաւորութեան կործանմանը պատճառ դարձաւ:

Միևնոյն պատճառ, և միևնոյն վաղձանն ունեցաւ հայերիս համար նաև քրիստոնեայ Եւրոպայի կրօնակցութիւնը Ռուբինեան իշխանութեան ժամանակ:

Կրօնակցութիւնն է դարձեալ գլխաւոր պատճառ, որ այժմեան Եւրոպայի քրիստոնեայ պետութիւնները անզաղար առաջ են մղում իրանց նւաճողական քաղաքականութիւնը:

Եւ յաջողում մեծապէս:

Եթէ նւաճելի երկիրը քրիստոնեայ չէ, այլ հեթանոս,— այն ժամանակ Եւրոպական Պետութիւնները, մասնաւորապէս Անգլիան, դեռ առաջ՝ այդ երկրի մարդ-

կանց քրիստոնեայ են դարձնում կամաց-
կամաց,—և նրանք այդ անում են իրանց
միսիօնարական ընկերութիւնների, միսիօ-
ներ անհատների միջոցաւ,—ապա վաճա-
ռականական յարաբերութեան ձեռնար-
կում, և, ի վերջոյ, անգլիական դրօշակը՝
ծածանեցնում այն երկրի վրայ:

Իսկ եթէ նւաճելի երկիրը արդէն քրի-
ստոնեայ է,—այդ հօ աւելի լաւ: Որսը
կարելի է ասել, ինքն իրան կուգայ և անձ-
նատուր կը լինի:

Եւ եթէ դժւար կամ անյարժար է լի-
նում իսկոյն և եթ այդ նոր երկրի վրայ
դրօշակ ծածանեցնելն,—այն ժամանակ
այդ երկրին ժամանակաւոր մի նոր անու-
նով են մկրտում,—«անգլեցութեան շըր-
ջան»:

Այսպէս են վարել Եւրոպական գրե-
թէ բոլոր պետութիւնները:

Վերջին քառորդ դարումս է միայն,
որ կրօնական ֆակտօրի ոյժը հետզհետէ
թուլանում է քաղաքագիտական աշխար-
հում*):

*) Թէպէտ Բուլղարիոյ Ֆերդինանդ թագաւորը
կրօնի անունն է յիշում իր հրովարտական:

Սակայն հայերիս վերաբերութեամբ՝
առաջին տեղը՝ դարձեալ կրօնին է պատ-
կանում: Այս է պատճառը, որ աշխարհա-
կալութեամբ պարապող տերութիւնների
մէջ՝ կրօնն ու կրօնաւորը ի յարգի և ի
պատուի են:

Կրօնակցութեան պատճառաւ՝ հայերից
օգտւող պետութիւններից, վերջին երկու
դարերում, ամենաառաջինը Ռուսաստանն
է եղել:

Սամսալի Մելիքութեան պատկանող
երկիրներին, Խրիմի թերակղզուն, մեծ և
փոքր Սիւնիքին, Արարատեան աշխարհին,
Աղւանից երկրին ոսները տիրել են հայե-
րի մեծամիժ և բազմադիմի օգնութիւն-
ներով:

Եւ տիրելով այդ երկիրներին՝ Ռուս
կառավարութիւնը ձեռնարկել է նրանցում
ապրող հայերի մէջ տարածել ուղղափառ
կրօնը, աստիճանաբար ի հարկէ*):

Բայց գալու է ժամանակ որ հայերիս
սիրաշահելու այժմեան քաղաքականութիւ-
նը կը փոխուի և հայութեան վրայ մի մեծ
խաչ կը քաշուի այն օրից, երբ փոքր Ասի-

*) Ист. человечества т. 205:

ային մի մեծ պետութիւն տէր դառնայ:

Եւ անա այս գիտենալովն է, որ Ներ-
սէսի նման եղել են և կան՝ պատրիարքներ
և կաթողիկոսներ, և աշխարհականներ, և
հրապարակախօսներ, և պատմաբաններ,
թէ Տաճկաստանում և թէ մեզանում, որ-
ոնք հակառակ են եղել այդ տիրապետու-
թեանը՝ ազգի գոյութեան և պահպանմամբ
նկատմամբ՝ տաճիկների տիրապետութեա-
նը նախապատուութիւն տալով:

Այսպէս մտածող, այսպէս դատող ու
գործող մարդիկն են անա, որ մեզանում
կազմում են պահպանողական կոչւած տար-
րը կամ կուսակցութիւնը:

Բայց մեզանում եղել է և կայ և մի
այլ տարր, կամ կուսակցութիւն, որոյ մէջ
եղել են և կան ամեն կարգի և կոչումի
անձինք: Դրանք մեր ազատամիտներն են:

Դրանք էլ այն կարծիքի և նոյնիսկ այն
համոզմունքի են, որ հայերի ինչպէս ներ-
կան, նմանապէս և ապագան, միմիայն
ուսաց տիրապետութեան տակ կարող են
լաւ լինել: Ուստի և ամեն կերպ աշխա-
տում են, որ որքան կարելի է շուտ՝ Ռու-
սաստանը տէր դառնայ փոքր Ասիային
ևս:

Ուրիշ բաներով խօսելով՝ հայ ազա-
տամիտները հայկական շահերը ուսական
շահերի մէջն են տեսնում:

Իսկ հայ պահպանողականները՝ հայկա-
կան շահերը տաճկական շահերի մէջ են
տեսնում:

Իմ կարծիքով անա թէ ինչումն են
կայանուա և ուր են յանգում մեզանում
պահպանողականութեան և ազատամտու-
թեան գաղափարները, սկզբից մինչև մեր
օրերը:

Եւ մեր այդ երկու գաղափարների շա-
հագործերն է, որ մեզ շարժում և գործել
են տալիս յօգուտ իրենց շահերին ուս և
տաճիկ, (մի ժամանակ նաև պարսիկ), կա-
ռավարութիւնները:

Եւ որովհետև ուս կառավարութիւնը
քրիստոնեայ է մեզ նման,— և հայերի մի
մասն էլ հպատակ են ըրան, ուստի եւ նա
աւելի շանսեր է ունեցել, և հիմա էլ ունի
իր գործերը աւելի արագութեամբ և հաս-
տատակամութեարբ առաջ տանելու շնոր-
հիւ հայ ազատամիտներին պատկանեալ
գործիչների՝ լինին զրանք հոգևորական թէ
աշխարհական միևնոյնն է:

Արդ՝ հայ ազատամիտների այդ տարրն է, որ դրսից կամ ներսից, խօսքով կամ գործով, կամայ թէ ակամայ, ինքնաբերաբար, կամ թելադրւած, սեփական միջոցներով կամ այլոց օգնութեամբ՝ գիշեր և ցերեկ աշխատել է տաճկահայերին դէպի Ռուսիան գրաւել, նրանց մէջ դէպի ոուս ազգն համակրութիւն զարթեցնել, զանազան խոստումներով և յոյսերով ու յոյգերով նրանց խրախուսել ու օրօրել: Վերջապէս նրանց դաւանած կրօնը, — բրիտոնութիւնը յօգուտ իրենց ազատամտութեանը շահագործել:

Եւ պէտք է խոստովանած, որ մեր ազատամիտները, գրեթէ միշտ, իրենց նըպատակին հասել են:

Եւ հիմա ոչ ոքի համար զազոնիք չէ, որ տաճկահայ ազգաբնակիւթիւնը դէպի բրիտոնեայ Ռուսիան տածած իր համակրութիւններով, յօգուտ Ռուսիային կատարած իր ցոյցերով, ոուս դիպլոմատիային մատուցած իր ծառայութիւններով, ոուս բանակներին ընձեռած իր մեծամեծ դիւրութիւններով իր վրայ իշխող մահմեդական տաճիկ և պարսիկ կառավարութիւնների կասկածին և վրէժխնդրութեանը առարկոյ է եղել միշտ:

Ահա թէ սիրելի ընթերցող, որտեղ և ուր պէտք է որոնել ու գտնել բրիտոնեայ հայ ազգի պարբերական շարճերի բուն շարժառիթը Տաճկաստանում, և մի ժամանակ նաև Պարսկաստանում:

Եւ այդ շարճերը այդ կոտորածներն ու աւերածութիւնները կը շարունակին այնքան ժամանակ, մինչև որ Ռուսիան Փոքր-Ասիային տիրելու իր յոյսը բոլորովին կամ կորէ, և կամ այդ երկրին տիրէ և կամ բողջ Հայաստանին միակ տէրն ու տիրականը դառնալով, ձեռնարկէ նրան կառավարելու «բարեկարգելու» բայց, ի հարկէ, ինչպէս արտաքին գործոց մինիստր Լաբանով-Ռոստովսկին էր ասում, առանց հայերի:

Փոքր Ասիային ոուսաց ձեռքն անցնելու մտքի համար աշխատող հայ ազատամիտների շարքում առաջնակարգ տեղ էր բռնում «Մշակի» հիմնադիր Գրիգոր Արժրունին, դէպի որը այժմ ես կրկին վերագառնում եմ:

ի

Չգիտեմ թէ ինչ և որ աղբիւրից ստացած հաստատուն փաստերի վրայ, սակայն

Արծրունիք պնդելով պնդում էր, որ Հայաստանի Հայոց ամբոխը, մօտ երեք միլիօն Փոքր Ասիայի մեծ մասամբ երկրագործ և արւեստաւոր (արհեստաւոր) Հայոց ժողովուրդը ցանկանում է միանալ Ռուսաստանին, ապրել հաստատ օրէնքների հովանաւորութեան տակ, դուրս գալ այնպիսի դրութիւնից, որտեղ նա ապրում է անսահման կաւայականութեան տակ, անպաշտպան ինչելով հարստահարութիւնների, բարբարոսութիւնների, մահմէդական ամբոխի, աւազակների և թիւրք պաշտօնեաների կամայականութեան դէմ*):

Ուստի իբրև թարգման Փոքր-Ասիայի երեք միլիօն հայ ժողովրդի այդ ցանկութեանը, կամ թէ՛ իբրև նրա հաւատարմատարը, — թէև ինքնակոչ, — Արծրունին «նախաձեռնող հանդիսացաւ որ մի առանձին ուղերձ ներկայացնեն թիֆլիզի հայերը:

Ամբողջ օրերով նա (Արծրունին) կառք նստած, այս ու այն կողմն էր գնում ստորագրութիւններ հաւաքելու»:

«Ուղերձը գրւեց կովկասեան փոխար-

*) Լէօ. հատ. Բ. էր. 456: Դրանք բոլոր դիտաւորեալ գունաւորումներն են:

բայ Մեծ Իշխան Միքայիլ Նիկօլաեվիչի անունով**):

Արծրունու հաւաքած ստորագրութիւնների հեղինակները իրանց ուղերձի վերջում կովկասեան Փոխարքայից խնդրում էին «արկանել Թագաւոր կայսրի ոտներին մեր ամենահպատակ խնդիրը՝ պաշտպանել իր հզօր ձեռքով, հաւասար թիւրքիայի այլ քրիստոնեաներին, մահմէդականութիւնից միշտ ճնշւած Հայոց ազգը այն միջոցներով, որ Նախախնամութիւնը յանձնել է Նորին Մեծութեանը և որ նա աւելի յարմար կը համարի***):

Այս դիպլոմատիկական լեզուով ու ոճով (որոց Գրիգոր Արծրունին բոլորովին անձանօթ էր) գրւած ուղերձը, — որ ի դէպ շատ նման է թիֆլիզի հայերի մի այլ ուղերձին Դաւիթ-Դանիէլեան կոիւնների ժամանակ****), — «հիմք զարձաւ որ Կ. Պօլսի ղեսպանաժողովում ռուսաց ղեսպան Իգնատև հարց բարձրացնէ և թիւրքահայերի մասին»*****):

**) Նոյնը, էր. 472:

***) Նոյնը, էր. 474:

****) «Դիւան Հայոց պատմ.» Ե. էր. 251:

*****) Նոյնը, էր. 474:

Արծրունին և նրա կենսագիրը, պ. Լէօն, չեն յայտնում թէ՛ Իգնատեվի բարձրացրած հարցը ինչպէս ընդունեցաւ դեսպանների ժողովում:

Բայց այս յայտնի է որ՝ Իգնատեվի այս քաղաքագիտական խաղի դիմաց՝ համանման մի խաղ էլ Մարկիզ Սուբիւրին հնարեց՝ նոյն դեսպանների ժողովին ներկայացնելով անգլիական հպատակ Սէթ-Արգարի կազմած յիշատակագիրը տաճկահայերի դրութեան մասին:

Իգնատեվի և Սուբիւրիի այդ քաղաքագիտական խաղերի առթիւ՝ «ամբողջ հայ մամուլի մէջ «Մշակը» մի բացառիկ դիրք էր վրաւում, բարձրացնելով և արժարժեցնելով թիւրքահայերի հարցը»:

— «Արծրունին սկսում է, — ասում է Լէօն, — իր կրակոտ առաջնորդների շարքը, առաջնորդներ, որոց նման ահագին զերկատարած լրագրական յօդւածներ մեզանում չեն եղել և որոնք Արծրունու գրական գործունէութեան փառքն ու պսակն են կազմում» *):

Որովհետև Արծրունին իսկապէս հա-

*) Նոյնը եր. 400:

մոզւած էր որ Ռուսաստանը բարերարութիւն կանէ և հայերին և որոնց յոյսը միայն Ռուսաստանի վրայ պէտք է դնել» *):

Որ «թիւրքահպատակ հայերը իրանց թշւառ դրութիւնից դուրս գալու համար կարող են օգնութիւն սպասել միայն մի եւրոպական պետութիւնից, այն է Ռուսաստանից» **):

Ուստի և «Արծրունին կարողացաւ մեծ ազմուկ և իրարացում բարձրացնել» ***):

Եւ ի շնորհս այդ ազմուկների և իրարացումների նա, — Արծրունին, «կովկասի զանազան կողմերից ստանում էր համակրական նամակներ: Ռուսաստանի հայուսանողութիւնը, որ մինչև այդ համարեա անտարբեր էր դէպի «Մշակը», նոյնպէս սկսեց համակրանք և գաղափարակցութիւն ցոյց տալ, Արծրունին, — շարունակում է Լէօն — գոհութեամբ էր արձանագրում այս երևոյթը «Մշակի» մէջ ****):

Եւ ի նշան իր գոհունակութեան, — ակելացնում եմ ես, — Արծրունին մի առաջ-

*) Նոյնը եր. 420:

***) Նոյնը եր. 426:

****) Նոյնը եր. 401

*****) Նոյնը եր. 475:

նորդոյ էլ էր հրատարակում «Ազգասիրական խաբեբայութիւն» վերնագրով:

«Այստեղ, Ռուսաստանում,— գրում էր Արծրունին իր այդ առաջնորդողում, հայերի մի բաւական տարածւած կուսակցութիւն կայ, որ ահա տասնևեօթ տարի է աշխատում էր միշտ հաւանեցնել մեզ որ ոչ մի տեղ հայերը այնքան երջանիկ չեն, որքան Թիւրքիայում:

Թիւրքիայի հայերի զրուծեան իսկական պատկերը մեր աչքերից ծածկելով, այդ պետութեան սարսափելի վերքերը անդադար քօղարկելով, այդ փսած կուսակցութիւնը *) կարծում էր որ միւս երկիրների հայերին մեծ բարերարութիւն է անում ազգասիրական գործ է կատարում...

Եւ այժմ, երբ որ Թիւրքիան գտնւում է սարսափելի քաղաքական մի կրիզիսի մէջ, յանկարծ յայտնւեցաւ որ Թիւրքիայի հայերի զրուծեան վրայ մեզ պատմած բոլոր զեղեցիկ բաները,— առասպելներ էին:

Կրիզիսի ընդհանուր յայտնւեցաւ որ հռչակւած սահմանադրութիւնը անգոր է պաշտպանել հայերին տէրութեան կամայա-

*) Ընդգծումները իմն են:

կանութեան և բարբարոսութեան դէմ, անգոր է պաշտպանել Թիւրքիայի հպատակ հայի ամենահրաժեշտ, անբռնաբարելի իրաւունքը...:

...Եւ ահա Թիւրքիայի հայը մոլորւած յուսահատւած դիմում է ոչ թէ իր տէրութեանը, որից ոչինչ բաւականութիւն չէր ստանում, այլ ստիպւած է դիմել օտար պետութիւնների օգնութեանը...

Եւ յանկարծ իր տիրացու-ազգասէրների փտած կուսակցութիւնը, մոլորւած տեսնում է թէ իր բոլոր յոյսերը զուր էին կամ որ իր տասնևեօթ տարւայ խաբեբայութիւնը յայտնւեցաւ, մերկացաւ:

Նրան ստում են դուք սխալւած էք,— որ շասնք թշուառ խաբեբաներ էք, որ այսքան ժամանակ աշխատեցիք մոլորեցնել, բոլոր ջանք էիք գործ դնում քնեցնել այն զայրացումը որ անշուշտ կը յայտնվէր, եթէ ներկայացնէիք Թիւրքահայերի զրուծեան իսկական պատկերը, դուք օրօր էիք կարդում մեր գլխին, դուք կամ ամենամեծ յանցաւորներ էք, կամ միամիտ կարճատես, սահմանափակ ողորմելի գլուխներ էք...

Բայց փտած տիրացու-ազգասէրների

յիմար ինքնասիրութիւնը չէ ներում իրանց սխալը խոստովանել, չէ թոյլ տալիս անկեղծութեամբ խոստովանել թէ այսքան տարի նորա կամ խաբւած էին, կամ խաբում էին» *) :

Հանգուցեալ հրապարակախօսի այս առաջնորդող կոչւած լեզւագարութիւնն ու շափաղփանքը, նրա ամեն մի տողը, կարելի է փառաւորապէս ջախջախել: Սակայն ես բաւականանում եմ Կօնֆուցիոսի հետեւեալ տողերով, որոնք, կարծես, յատկապէս Արծրունու համար ասւած լինին:

— «Մեծամտութիւն, կուարարութիւն, անփորձութիւն, անզգուշութիւն,— ահա երիտասարդութեան սխալների գլխաւոր աղբիւրը: Փքելով իրանց չնչին արժանաւորութիւններով, գիտութեան հագիւ փըշրանքներն ըմբռնելով երիտասարդները իրանք իրանց ամենագէտ են համարում, իմաստութեան և բարերարութեան հերոսներ են հռչակւում իրենց՝ հէնց որ մի գործ են կատարում: Նրանց համար անյայտ են կասկածը և թէ անվճռականութիւնը: Նրանք ոչ թէ փորձառու և իմաստուն մարդկանց խորհրդովն են ղեկավարւում, այլ կոյր ու անմիտ ոգևորութեամբ:

*) Նոյնը, Բ. 479:

Նրանք սխալ ճանապարհով են ընթանում; ուստի և մոլորվում են և հէնց առաջին պատահած թակարդի մէջ են ընկնում»:

Թէ արդարև, սխալւողը և սխալւեցնողը, մոլորւողն ու մոլորեցնողը՝ ինքը Արծրունին էր, այլ ոչ ուրիշները,— այդ վկայում է ահա նոյն ինքն Արծրունու պաշտպան-փաստարանը գրելով «1883-ի վերջերում և այնուհետև Արծրունին, մինչև իր կեանքի վերջը, չէր կարողանում վերադառնալ այն եռանդոտ, հռչակաւոր գործունէութեան, թէև դրդիչ հանգամանքներ երբէք չէին պակասում»: Որ «Արծրունին ստիպւած էր լռել, լռել ակամայ, լռել հպատակւելով հանգամանքներին» (Եր. 213): Որ «այդ ժամանակներում (1876—1877) «Մշակը» յարուցեց այնպիսի հարցեր, որոնց յետոյ երբէք այլևս չկարողացաւ յարուցանել... «Մշակի ամենափայլուն ժամանակն անցած էր» *) :

Եւ ոչ միայն «Մշակի»,— աւելացնում եմ ես,— այլ և նրան յաջորդող «ազատամիտների» փայլուն ժամանակներն ևս եկան անցան, և դեռ կուգան ու կանցնին, մինչև որ նրանք խելքի կգան ու իրենց

*) Նոյնը Բ. 394:

մոլորութիւնից ձեռք քաշելով՝ «պատրիարք և վարչութիւն համաձայն կըլլան մոռանալու և մոռացնելու զեռ քանի մը ամիսներ առաջ ժողովուրդին յուզման և ճնշումին տակ իրենց առած քայլերն և այն բուռն արտայայտութիւնները, որոցմով կը գանգատէինք Թիւրքիոյ ստեղծած յուր վարչութեան համար»:

«Հիմա կուզւի կամ կը մտածւի այս ճգնաժամային վայրկեաններն անցնել առանց կեանքեր կորցնելու և խուժանային զայրոյթի առարկայ ըլլալու»:

Այս տեսակէտով ահա, — շարունակում է «Մշակի» թղթակիցը*), — ազգային վարչութիւնը ամեն ճիգ կը թափէ, որ կառավարութեան աչքին առաջ պարզելով արտաքին միջամտութեան երկիւղը՝ Հայաստանի Հայոց կեանքը ապահովէ, միւս կողմէն Կ. Պոլսոյ մէջ կառավարութեան աշակցելով հայոց հաւատարմութեան հաւաստիքն ընծայէ»:

«Ասոր համար հայերը բաւականին կաշակցին կազմակերպելով Կարմիր Սաչի մասնախումբեր և պատրիարքարանը շրջաբերականներով կը յորդորէ հայերը նպատա-

*) «Մշակ» 1912, № 241:

ներով աշակցիլ վերաւորեալ զինւորներ ու փախստական գաղթականներու օգնութեան համար կազմուած մարմիններուն»:

«Պատրիարքարանը այս միջոցիս խիստ գաղտնի կը պահէ իր ստացած հարստահարութեան (որ գոյութիւն չունին) տեղեկութիւնները՝ հայոց շտաբու համար «խընդիր յարուցանողի» դեր»:

Սակայն ինչ որ Արշարունի սրբազանը և ազգային վարչութիւնը, «ամիսներ առաջ» իրենց գործած մեղքը քաւելու համար՝ այսօր սկսեր են շողոքորթ մտքով անել, — նոյնը անկեղծութեամբ և համոզմունքով անում էր վարժապետեան Ներսէս պատրիարքը՝ սրանից 38 տարի առաջ «Հայոց շտաբու համար խնդիր յարուցանողի դեր»։ Քաջ գիտենալով որ այդ տեսակ «խնդիր» Հայոց օգտի համար չի յարուցւիլ այժմ ևս, ինչպէս որ չէ յարուցւել դարեր առաջ:

Եւ միայն մեր ազատամիտ Արծրունին էր, որ երբ Թիֆլիզի հայերի ուղերձը Իգնատևը դեսպանաժողովի առաջ դրեց Կ. Պոլսում, — ոգևորւեցաւ և հետեւեալ տողերը գրեց 1876-ին. «Տարւայ վերջին, ինչպէս կայ սլաւոնական հարց, յունական հարց,

այնպէս էլ կայ հայոց հարց, չարս-հինգ
ամիս առաջ չկար այդ հարցը, ոչ ոք հա-
յերի մասին չէր էլ մտածում, բայց այս-
ուհետև հայերն էլ կը կազմեն արևելեան
հարցի մի մասը:

Երանի թէ Արծրունին իր այդ ոգևոր-
ութեամբ էլ բաւականանար: Եւ իւր ներ-
քին, հոգեկան բերկրանքով մխիթարւէր
ինքը, մխիթարէր նաև իր «համախոհնե-
րին»:

Այդ նրա իրաւունքն էր կատարելա-
պէս:

Սակայն «Մշակի» հիմնադիրը մի ան-
գամ ևս ազատամտութեան անունով ազա-
տամտութիւնը դարձեալ իր ոտքերի տակ
ձգեց, կոխկռտեց: Եւ իր շինծու օլիմպի-
ական բարձրութիւնից «այդ միջոցին,—
գրում է Լէօն,—Արծրունին երկրորդ խիստ
յարձակումը գործեց ներսէս պատրիարքի
դէմ»:

Տեսնենք թէ դա ինչու համար էր:

ԻՍ.

«Եւրոպական լրագիրները հաղորդել էին
—գրում է Լէօն,—որ դեսպանաժողովը դի-

մել էր ներսէսին և հարց տւել, թէ ինչ
են ուզում հայերը: Ներսէսը պատասխա-
նել էր թէ հայերը իրենց յոյսը թիւրքաց
կառավարութեան վրայ են դրել և նրանից
են սպասում իրենց վիճակի բարւոքու-
մը *),

Նախ և առաջ՝ դեռ հարց է թէ՛ ճիշտ
է արդեօք «Եւրոպական լրագիրների հա-
ղորդածը»:

Սակայն ընդունենք, որ ճիշտ է: Մի-
այն թէ՛ ներսիսի հարց տւողը Կ. Պօլսի
դեսպանաժողովը չէր լինիլ ի հարկէ, այլ
Օսմանեան կառավարութեանը, նրա մի-
նիստը:

Բայց հարց տւողը՝ ով էլ որ լինի, ինչ
նպատակաւ էլ որ տւած լինէր,—Ներսէսը
պիտի՞պատասխանէր այնպէս ինչպէսոր պա-
տասխանել է: Տաճկահայերի պատրիարքը
անշուշտ աւելի լաւ տեղեակ իր հօտի հին և
նոր պատմութեանը, գիտէր, ըմբռնում էր
նրա շուրջը կատարւած իրողութիւնների
բուն նպատակը,—ուստի և ամենայն պար-
զութեամբ արտայայտեց իր միտքը, իր
համոզմունքը:

Ներսիսի այդ արտայայտութիւնը ի

*) Նոյնը, եր. 517:

հարկէ, չէր համապատասխանում դեսպա-
նաժողովի անդամներից մէկի կամ միւսի
ծրագրին, ցանկութեանը: Ուստի բնական
է, որ այդ դիպլոմատը Ներսիսից զժգոհ
կը լինէր:

Ըստ վկայութեան Լէօի, «Արծրունին
էլ Ներսէսից զժգոհ մնաց» *):

Զարմանք չէ:

Ռուսներին դէպի պատերազմ քաշելու
և թիւրքերին պատերազմի պատրաստե-
լու միջոց տալու համար՝ նշանակւած Կ.
Պօլսի զեսպանաժողովը ցրւեցաւ Միգհատ-
եան սահմանադրութեան հռչակման որոտ-
մունքների տակ:

Գուցէ սահմանադրութեան հրատա-
րակումը քաղաքագիտական մի խաղ էր
Օսմանեան կառավարութեան կողմից, ինչ-
պէս որ ուս զիպլոմատիան և մեր Արծ-
րունին էին կարծում: Բայց գուցէ խաղ
չէր, այլ մի անկեղծ ակտ՝ պատերազմի
առաջն առնելու և Եւրոպական տէրու-
թիւնների, մասնաւորապէս Ռուսաստանի
անվերջ միջամտութիւններին վաղճան
դնելու համար, մի անգամ ընդմիջտ եր-
կիրը խաղաղացնելու համար:

*) Նոյնը, էր. 516:

Երևի այսպէս էլ մեկնեցին այդ ակտի
երևումը Կ. Պօլսում:

Ուստի և այնտեղի ազգայինք փութա-
ցին իրենց խնդակցութիւնն ու շնորհաւո-
րումը յայտնել Բ. Դրանը, ըստ վկայու-
թեան Լէօի, հետևեալ կերպով:

«Կ. Պօլսի «Նոր-Դար» լրագիրը 1876
թ. գեկտեմբերի 29 համարի մէջ հաղոր-
դում էր.

«Երէկ Խառն ժողովը որոշեց Բ. Դրան
ուղերձ մը գրել, նոր սահմանադրութեան
վրայ իր գոհունակութիւնն ու շնորհակալ-
ութիւնը յայտնելով, որով հայազգի օս-
մանցիութիւնը, պաշտօնական լեզուն ա-
մեն տեղ ընդհանրապէս տաճկական լեզուն
ըլլալը, պատրիարքարանի լոկ կրօնական
խնդրոց վրայ իրաւասութիւնը ազգային և
քաղաքական ցաւոց ընդհանուր երկրէն ըն-
տրեալ երեսփոխանաց միջոցաւ յայտնելը
և ազգային դպրոցաց մէջ կրօնական դա-
ւանութեանց վերաբերեալ ուսմանց վրայ
միայն պատրիարքարանի իրաւասութիւն
ունենալը կընդունւի:

Այս ուղերձը այսօր պիտի մատուցւի
Բ. Դրան հանդիսապէս յանուն պատրիար-

քարանի, առանց սպասելու Ազգային ժողովի քուէէն անցնելու» *):

Նախ և առաջ պէտք է նկատել, որ այս ուղերձի բովանդակութիւնը հաղորդողը՝ մի մասնաւոր լրագիր է:

Երկրորդը՝ այդ լրագիրն էլ չէ ասում որ այսպիսի բովանդակութեան ուղերձ գրւեցաւ, այլ որ «որոշւած է գրել»:

Այդ որոշումը գլուխ եկաւ արդեօք թէ ոչ, և թէ եկաւ՝ ճիշտ այդ բովանդակութեամբ գրւեցաւ, — յայտնի չէ:

Յայտնի չէ նմանապէս թէ այդ ուղերձը տրւեցաւ Բ. Դրանը և առանց «Ազգային ժողովի քուէէն անցնելու»:

Յամենայն դէպս՝ եթէ Պօլսոյ «Նոր-Դար» լրագրի հաղորդածը ճիշտ և կատարւած իրողութիւն համարենք, այնուամենայնիւ Խառն ժողովի այդ վարմունքը, — գրում է նոյն լէժօն, — «լոկ մի քաղաքական ցոյց էր, որ մի կողմից պիտի լազէնք դառնար նեղ հանգամանքների մէջ խեղդող թիւրքաց կառավարութեան համար, իսկ միւս կողմից պիտի ընդգծեր հայերի հաւատարմութիւնը, որով և ներ-

*) Նոյնը, էր. 514:

սէսը կարելի էր համարում քաղցրացնել կառավարութեան աչքը դէպի հայերը» *):

Բայց այդ ցոյցը՝ առիթ բռնած իր ձեռին՝ Արծրունին մի անգամ ևս իր թոյնը թափեց Ներսէսի վրայ անւանելով նրան «գաւաճան»:

Եւ իր «էլ չկայ հայոց սահմանադրութիւն» առաջնորդողը՝ վերջացնում էր հետեալ բացականչութեամբ՝

Միթէ թիւրքիայի հայերը այդ տեսակ սարսափելի գաւաճանութիւնից յետոյ՝ պէտք է համբերեն որ Ներսէս եպիսկոպոսը պատրիարք մնայ» **):

Ի հարկէ պիտի մնայ, — պատասխանում եմ ես:

Դաւաճանական ոչինչ բան չկայ Խառն ժողովի և վարմունքի մէջ:

Այդ վարմունքը պայմանական մի բան է: Եթէ ընդհանուր, պետական սահմանադրութիւնը գլուխ չի գալ, — Խառն ժողովի ուղերձն էլ իր նշանակութիւնը կորցրած կը լինի: Նա մանաւանդ որ Ազգային ժողովի

*) Նոյնը, էր. 517:

**) Նոյնը, էր. 517:

կողմիցն էլ տակաւին սանկցիա ստացած չէ:

Եւ ով գիտէ, թերեւ ուղերձը դիտմամբ Ազգային ժողովին չհերկայացրին այն ժամանակ:

Իսկ եթէ ընդհանուր, պետական սահմանադրութիւնը գլուխ եկաւ,— թող այնուհետեւ թէկուզ չլինի էլ ազգային սահմանադրութիւնը: Կամ լինի այն ծրագրով, ինչ որ յիշւած է ուղերձի մէջ:

Չէ՞ որ «յերևիլ արեգական՝ կորնչին աստեղը»:

Միթէ ամեն մի քաղաքադիրթ հին և նոր ազգերի մէջ ևս այդպէս չի եղել, և հիմայ էլ այդպէս չէ՞:

Նա մանաւանդ որ տաճկահայերի սահմանադրութիւնը շարունակ ծաղր ու ծանակի առարկայ էր դարձել Արժրունու համար՝ մինչև Խառն ժողովի ուղերձի հրապարակ գալն:

Այս այսպէս լինելով՝ եթէ Արժրունին, իրաւի, սահմանադրատէր, ազատամիտ հրապարակախօս էր՝ երկու ձևքով պինդ պէտք է կպչէր Օսմանեան սահմանադրութիւնից և տաճկահայերին էլ յորդորէր՝ ա-

մեն կերպ աշխատելու որ սահմանադրութիւնը հաստատուի, ամբանայ և ընդմիջովադճան զնէ պետութեան մէջ եղած անկարգութիւններին ու ապօրինութիւններին:

Այսպէս պիտի վարէր «Մշակը» նոյնիսկ այն գէպքում, եթէ իմանար անգամ, որ Միհրատեան սահմանադրութիւնը անկեղծ մտքով չէ տրւած:

Ահա թէ ինչ բանի վրայ պիտի գործադրէր Գրիգոր Արժրունին իր սուր գրիչը իր ազդեցութիւնը, իր հոգեկան բոլոր ոյժքն ու զօրութիւնը:

Բայց... բանաստեղծն ի զուր չէ ասել՝

«Пустыя, звучныя слова,
Обширный храмъ безъ божества».

Ամեն մի փայլափոխում՝ ընդհանուր մարդկութիւն, հանրամարդկային գաղափար գոչող Արժրունուն՝ չէր գրաւում Օսմանեան միահեծան կառավարութեան ձեռ սահմանադրականի փոխելիլը: Նա վերջին միջոցի՞ծ էլ ոչինք օգուտ չէր տեսնում տաճկահայերի համար: Այլ վերջիններիս միակ փրկութիւնը տեսնում էր մէկ միահեծան կառավարութիւնից՝ միւսի ձեռքն

անցնելն, այսինքն՝ ըստ հայկական առածին՝ «մրի միջից հանել՝ մրաջի մէջ կոխել»։ Եւ կամ՝ փոխանակ մահմէդականի՝ քրիստոնեայ պետութեան հպատակ դառնալն, — մի շատ հին երգ, որ մեր բոլոր վեղարաւոր պատմիչներն դարերից ի վեր երգել են միակողմանիաբար և մոլեռանդաբար որպիսի յատկութիւններով այժմ գալիս է Արծրունին նրանցից գերազանցելու։

Ինչ և իցէ։

Հազիւ հազ Օսմանեան պառլամենտը հաւաքւած էր. և ահա Ռուսաստանը պատերազմ յայտարարեց (1877 ապրիլի 12-ին)։ Եւ նրա բանակները Տաճկաստան մտան թէ Եւրոպայի և թէ Ասիայի կողմերից։

— «Յանկանանք մեր զօրքերին աջողութիւն, — մաղթում էր Արծրունին, — որից կախւած է արևելքի ազատութիւնը, նրա բնակիչների խաղաղ ապահով զրութիւնը և երկար ժամանակ ճնշման տակ մնացած քրիստոնեայ ազգերի բարոյական, անտեսական և մտաւոր վերանորոգութիւնը» *)։

«Մշակի» խմբագրի այդ մաղթանքին ձայնակցեց նաև նրա ֆէլիտոնիոտ Ասիա-

*) Նոյնը Բ. 519։

ցին, որ նոյն ինքն Արծրունին էր, հեռուեալ բնորոշ համեմատութեամբ։

— «Կրկին պատերազմի բեմը Հայաստանն է... որ նման է մի կնոջ, որ անթիւ սիրեկաններ է ունեցել, բայց այդ սիրեկաններից իսկապէս ոչ մէկին անկեղծ սիրով չէ սիրել...»

Արդեօք կը սիրէ նա մի օր անկեղծ սիրով, կընծայէ՞ նա իր սէրը մէկին անբաժան կերպով, կրնորէ՞ նա վերջապէս մէկին, որին ամբողջութեամբ կը յանձնէ իր անձը, այդքան ցրւած կեանք վարելուց յետոյ՝ օրինաւոր կին, տանտիկին, մայր դառնալու համար։

Դժւար է նախագուշակել։

Առհասարակ այդ տեսակ կանանց կողմից ժամանակաւոր շնորհ վայելելը ամենքը ցանկանում են, — բայց կապւել այդ տեսակ էակի հետ ամբողջ կեանքի համար ոչ ոք չի ցանկանայ» *)։

Արդ՝ որպէսզի այս «պոռնիկը» նւիրէ «իբր սէրը մէկին և անբաժան կերպով իր անձը ամբողջութեամբ յանձնէ նրան», — Արծրունին «շարունակ կրկնում էր թէ Հա-

*) Նոյնը Եր. 521։

յաստանը պիտի միացնվի Ռուսաստանին: Իսկ եթէ այդ անհնարին լինի, այն ժամանակ Ռուսաստանը պէտք է իր հովանաւորութեան տակ առնէ Հայաստանը... Որքան առաջ էր գնում ոռւս բանակը, այնքան Արծրունու համար անհրաժեշտ էր դառնում հարցի այդ տեսակ լուծումը... Երբ հարսը ընկաւ ոռւսների ձեռքը, Արծրունին արդէն միանգամայն համոզւեց, որ Հայաստանի ճակատագիրը վերջնականապէս կարգադրւած է, նա կը դառնայ Ռուսաստանի մի մասը և այդպիսով կազատւի իր դարաւոր դժբախտութիւններից:

«Իսկ եթէ բան է, ինքը Ռուսաստանը չկամենայ միացնել Հայաստանը իր կալւածներին, աւելորդ համարելով իր՝ առանց այն էլ շատ տարածւած սահմանների ընդարձակումը, այդ դէպքում դարձեալ նրբան է վերապահւած կարգադրել Հայաստանի ճակատագիրը այնպէս, որ հայերը ապահովութիւն գտնեն, ինքնավարութիւն ունենան» *):

Ինչպէս միշտ՝ այս անգամ ևս Արծրունու այս միտքը Բաֆֆին մտցրեց իր «Իսախան-Բեկ» վէպի մէջ Հայաստանը պոռնիկ կնոջ նմանեցնելով: Եղեկիէլ մարգարէն ևս հրէաներին պոռնիկ կնոջ է նմանեցնում այն պատճառաւ, որ այդ ազգը իր Եհովային թողած՝ գնաց և կոսպաշտութեան գիրկն ընկաւ: Ուրեմն Արծրունին և Բաֆֆին Եղեկիէլի խօսքերը թարս են մեկնում:

Այս ցանկութեամբ արտապնդւած և տեսնելով, որ ոռւս բանակին մասնակից են և հայ զօրապետներ, որ Ռուսաստանն է միայն որ անշահասիրութեամբ և անկեղծութեամբ աշխատում է արևելեան բրիտանականներին իրական պաշտպանը դառնալ», — Արծրունին մոռանալով իր բոլոր նախկին բացասական վերաբերմունքը դէպի հայ ազգը, դէպի այն «զիակը, լէշը, աղբը», յանկարծ վեր կացաւ և «Ազգութեան հանճար» վերնագրով մի առաջնորդող գրեց, ուր ասում էր թէ՛ «մինչև վերջին ժամանակները հայոց ազգի մասին ամբողջ աշխարհը համոզւած էր, թէ այդ ազգը ունի խելք, ընդունակութիւններ, արդիւնագործական, առևտրական ոգի և այլն, — բայց որ հայերը վախկոտ ժողովուրդ են և զուրկ են բոլորովին զինւորական յատկութիւններից: Այդ տեսակ համոզմունք կազմած ունէր ամբողջ աշխարհը հայոց ազգի հանճարի մասին:

«Ներկայ թիւրքաց ոռւսաց պատերազմը ապացուցեց մեզ հակառակը:

Այն ազգը, որ յայտնի էր որպէս զինւորական ոգի կորցրած, առևտրական, վախկոտ ժողովուրդ, — յանկարծ արդիւնաբերում է (?) անթիւ քաջեր, սկսած հա-

սարակ սօղաաններից, մեկիցիայի զինուոր-
ներից՝ մինչև զօրքի պիսաւոր առաջնորդ-
ները, մինչև առաջնակարգ զօրապետնե-
րը»:

«Կարելի է արդեօք որ մի վախկոտ
բնաւորութիւն ունեցող ազգից զուրս գա-
յին անթիւ քաջեր, կարելի է արդեօք որ
հետևանքը ծնունդ առնէ առանց պատճառի
կարելի է արդեօք որ ջուրը վազի առանց
աղբիւրից զուրս գալու...»

Անկարելի է:

«Այն ազգը որ հարկաւոր ժամանակ
ընծայում է այդքան թւով քաջ և ընդու-
նակ զինուորականներ, ինչքան վերջին պա-
տերազմում հայերը ընծայեցին ուսաց
զօրքին,—այդ տեսակ նշանաւոր, աչքի ըն-
կնող երևոյթ ակամայ ստիպւած ենք համա-
րել մեր ազգի յատկութիւնը, մեր ազգի
հանճարը» *):

Արծրունու այս առաջնորդոյից շատ պարզ
երևում է երկու բան:

Նախ՝ թէ նա որ աստիճան անտեղակ է
հայ պատմութեանը, գոնեա 19-րդ դարու
պատմութեանը և ինչ որ ինքը չգիտէ, կար-

*) Նոյնը, Բ. 526:

ծում է թէ «ամբողջ աշխարհը չգիտէ:

Եւ երկրորդ՝ թէ նա որ աստիճան յա-
փըշտակեող, ծայրահեղութիւնների մէջ
թարթափող անձն է և թէ՛ ինչպէս ըո-
պէի ազդեցութեան տակ՝ կարող է փոխել
երեկւայ սևացրւածը այսօր սպիտակացնել
և ընդհակառակն:

Կարդանք, օրինակի համար «Օտարնե-
րը և մենք» առաջնորդողը, որ Արծրունին
գրել է մի Ֆրանսիական թերթի թղթակցի
հետ ունեցած խօսակցութիւնից յետոյ՝

«Որքան զարմացաւ այդ թղթակիցը,—
գրում է Արծրունին,—երբ գտաւ Անդրկով-
կասում մի ազգ, որ իբր բոլոր պակասու-
թիւնների հետ միասին այնուամենայնիւ
ներկայացնում է արևելքում եւրօպական
տարր՝ իր ձգտումներով, իր ոգևով, իր
բնաւորութեամբ, իր ընդունակութիւննե-
րով և կեանքի եղանակով»:

«Նա կարծում էր որ հայերը վաճա-
ռականներ են,—յանկարծ նա իմանում է,
որ հայոց ազգի մեծ մասը երկրագործներ
են:

Նա հեռուից լսում էր որ հայերը վախ-
կոտ պաաներագմական բոլոր յատկութիւն-
ներից զուրկ ժողովուրդ են,— և յանկարծ

համոզուում է որ հայերը համարուում են ոուս գորբի մէջ ամենաքաջ զինուորների կարգում, իրանց միջից ընդունակ և տաղանդաւոր գորապետներ են ընծայել ոուսաց գորբին:

Նա սպասում էր տեսնել մեզ մօտ խորին տգիտութիւն, — և յանկարծ տեսնում է հայոց ժողովրդական ուսումնարանների հաշիւից որ զպրոցների և աշակերտների պրոցենդը մեզանում բաւական նշանաւոր է:

Նա սպասում էր պատահել հարեմ, — յանկարծ գտնում է եւրոպական ընտանիք և օրիորդական զպրոցներ, որտեղ իրանք կանայք անգամ դասաւարտութիւն են աւնում*):

ԻՐ.

Թէպէտ առանց Թիֆլիզի հարերի ուղերձին էլ՝ անգլիական դիպլոմատիան շատ լաւ հասկանում էր ոուսական դիպլոմատիայի նպատակը, բայց և այնպէս Իգնատիեւի կողմից յիշեալ ուղերձին ի պաշտօնէ Պօլսոյ ղեսպանաժողովի սեղանի վրայ դը-

*) Նոյնը Բ. 529:

նելը շօշափելի ապացոյց էր, որ Ռուսանտանը իր աչքը տնկել է Փոքր-Ասիայի վրայ:

«Մշակի միջոցով Գրիգոր Արծրունու բացարձակ պահանջը, որ ոուսները տիրեն Տաճկահայաստանին և այս առթիւ «Մշակի» և տաճկահայ մամուլի մէջ եղած ջերմ բանակութիւնը, որ մինչև իսկ տուր ու ղմփօցի հասաւ Կ. Պօլսում և եթէ չէր լինիլ ոուսաց ղեսպանութեան միջամտութիւնն ու պաշտպանութիւնը՝ Պօլսոյ հայ ամբօրը քարուքանդ կանէր «Մանգումէ» լրագրի խմբագրատունը, որովհետև այդ թերթը աշխատում էր զսպել սանձել Պօլսոյ հայ ամբօխի ոուսատեցութեան ցոյցերն*): — այս ղէպքերն էլ իրենց հերթում եկան աւելի համոզելու անգլիական դիպլոմատիային, որ ոուսաց նպատակն է անշուշտ վերցնել Տաճկահայաստանը:

Այս էր պատճառը, որ Բիկօնսֆիլդի նախարարութիւնը չբաւականացաւ ոուս բանակի Պօլիս մտնելը արգելելով, այլ նաև Ասիայի կողմից էլ ուղեց փակել Ռուսաստանի ճանապարհը ղէպի Հնդկաստան:

Ուստի և որոշեց Տաճկահայաստանը մի

*) Նոյնը, Բ. 455:

ինկնատար հոտիկ իշխանութեան վերածեր
Թիւրքայի իշխանութեան ներքոյ*):

Այս դրութիւնը ճնոնտու էր ինչպէս
Անգլիային, նմանապէս և Թիւրքիային:
Ուստի վերջինս էլ հաշտ աչքով էր նայում
այս բանին:

Անգլիոյ Պօլսի ղեսպան Լայարդը՝ Ներ-
սէս պատրիարքի հետ տեսնելով խոր-
հուրդ տւեց այս իմաստով միջնորդութիւն
յարուցանել Սուլթանի առաջ, որի հետ
Անգլիոյ ղեսպանը նախապէս խօսած և նրա
յօժարութիւնը ստացած էր:

Երբ Լայարդը իր այս ծրագրովն էր
զբաղւած մի կողմից, Իզնատուն էլ քնած
չէր միւս կողմից: Սա էլ յաջողել էր Պօլ-
սոյ հոյերի մէջ, զոնէ նրանց մի մասի
մէջ հաստատել «այն համոզմունքը, թէ ջպէս
է դժարացիւղ ոռուների գործը, ջպէս է բար-
դուքիւններ յարուցանել նրանց (ոռուաց) դիպ-
յունսիքիւն գործողութիւնների մեջ: Միակու-
նայն յոյս դնելով ոռուների բարեկամութեան և

*) Այս ձգտումն ունէր Սէթ Արգարի Կ. Պօլ.
ղեսպանաժողովին ներկայացրած յիշատակարանը:
Վերջերում խօսուում էր մինչև անգամ Նուբար փաշայի
և Էտենբուրգի գուբարի մասին, իբրև ապագայ խաբնա-
վար Հայաստանի իշխանի:

վեհանձնութեան վրայ, պէս էր գործել նրանց
միջոցով, իբրև նրանց կուսակիցներ» *):

Այս առաջարկութիւնը՝ նրան պաշտ-
պանողների համար՝ այն առաւելութիւնն
ունէր քան Լայարդինը, որ Տաճկաստանը
Ռուսաստանի հետ սահմանակից էր և թեր-
ևս մէկը կամ միւսը կարող էր ժամանա-
կին միանալ միւսի հետ, որ եթէ Անգլիան
ունի մի Նուբար հայ փաշա, — Ռուսաստա-
նըն ունի Լորիս-Մելիքովի և Լազարեվի
նման զօրապետներ: Վերջապէս ոռուաց
կամքին հակառակ՝ նրա կովկասեան սահ-
մանին կից ինքնավար Հայաստան կազմե-
լով բնականաբար առիթ տւած կը լինինք,
որ Ռուսաստանը միշտ խէթ աչքով նայէ
այդ ինքնավար Հայաստանին և աշխատի
միշտ նրան տապալելու՝ իբրև Հնդկաստա-
նի ճանապարհի վրայ ընկած մի պատուար,
մի աւելորդ թումբ:

Ուստի, — ասում էին Պօլսոյ ոռուասէր
հայերը, — լաւն այն է՝ նորանոր հարցեր
չյարուցանել և թոյլ տալ, մինչև անգամ
նպաստել, որ Ռուսաստանը տիրէ Տաճկա-
ստանին և, ըստ իրեն, «բարեհաճու-
թեան ու վեհանձնութեան» որոշէ նորա
բաղդը:

*) Նոյնը, Գ. եր. 42:

Ինչպէս տեսանք՝ ճիշտ այս իմաստով էլ խմբագրած էր Թիֆլիզի հայերի ուղերձը: Եւ այս միտքն էր, որ շարունակ քարոզում և շատագոյնում էր Արծրունին, որ վերջերում հարկաւոր համարեց նորից զարթեցնել և նորից պաշտպանել տարիներ առաջ քարոզած իր այն միտքը թէ՛ Ազգային ժողովը անշուշտ պէտք է Փոքր Ասիա փոխադրել: Որովհետեւ, — ասում էր Արծրունին, — «Պօլիսը ֆրագա է, Հայաստանը՝ իրականութիւն»:

Գոռ Ղլէֆնայի անկումը, Սան-Ստեֆանոյի ուսական բանակի հայ սպաների Պօլիս երթևեկելը և իրենց լի և առատ քսակների ոսկիներն այս ու այն կողմն շարտելը Պօլսոյ շուկաներում, — մի առանձին ուսասիրութիւն առաջ բերին «հոս-հոսների» աշխարհում:

Սակայն ներսէս պատրիարքը, ինչպէս մինչև հիմայ, այնուհետև էլ եր գերբը շարտելուց, չկամենալով ենթարկւել այլոց ազդեցութեանը կամ գործել նրանց ցուցումներով:

Իժբաղգարար հաստատակամ պատրիարքի գահլան տանում էին ոչ միայն Պօլսոյ հայութեան յայտնի մասը և ոչ միայն

խուժանն իր խուժանապետներով*), այլ նաև ոմանք բորձրաստիճան հոգևորականներից, որոնք էին Մկրտիչ (Նրիմեան), Նորէն կամ Նար-պէյ և Իզմիրլեան Մատթէոս եպիսկոպոսները, որոնք անգագար ստիպում էին պատրիարքին օգուել բոպէլից և ազատել տաճկահայերին մահմէդականների լծից»:

Աւելացրէք այս ամենի վրայ տաճկահայերին սպառնացող վտանգը ուս բանակին Փոքր-Ասիայից հեռանալուց յետոյ, աւելացրէք այդ հայերի դէպի Ռուսաստան զազթելու տեսած պատրաստութիւնները, — և այն ժամանակ կը համոզւէք, որ ներսէս պատրիարքին ուրիշ ոչինչ չէր մտում անել, եթէ ոչ համակերպել ժամանակի հետ, մանաւանդ որ Լայարզն ևս նոյնն էր պահանջում:

Ներսէսը ստիպւած եղաւ Սան-Ստեֆանո գնալ և ուսաց բանակի հրամանատար Մեծ Իշխան կոստանդնից խնդրել տաճկահայերի համար էլ անել այն, ինչ որ Ռուսիան մտադրւած էր սլաւոն բրիտոնեանների համար անել:

*) Գուլաքսըզ կոչւած վայրենին, օրինակի համար ո՛ր պատրիարքի վրայ յարձակւեց: Թան. հեղ.

Մեծ Իշխանը, ի հարկէ, շատ սիրով և մեծարանքով ընդունեց տաճկահայ պատրիարքին, Բայց նրա խնդիրքին ինչ ձև ու ընթացք տալը՝ բնական է, որ իրեն վերապահեց:

Մեծ-Իշխանի կարեւոր էր, որ սաճկահայոց պատրիարքի անձանք դիմէ նրան Սան-Ստեփանո:

Սա մի դիպրուստիական ակտիւտեչտրիս էր այն ժամանակ և անցիակ միևնույն այսօր: Իսկ թէ կատարել արդեօք պատրիարքի խնդիրը թէ ոչ էր ինչ ձևով կատարել կամ ինչ ձևով մերժել, դա արդէն դիպրուստիայի իրեն գործն է եւ իրաւունքը:

Այսպէս թէ այնպէս՝ Ներսէս պատրիարքի խնդիրը յարգւեցաւ և Ս.-Ստեփանոյի դաշնադրութեան 16-րդ յօդւածը կազմւեցաւ:

«Հետեւեալ օրը, — գրում է պատմիչը, — Թիւրքիոյ ներկայացուցիչը կը զարմանան թէ ուսմները հայոց համար յօդւած մը կուզեն, և կը բողոքեն, թէ հայոց խնդիր չկայ: Բայց Մեծ-Իւուքսը կը պնդէ՝ յայտարարելով թէ այդ մասին Չարէն յատուկ հրահանգ ստացած է:

Թիւրքերը կը ստիպուին զիջանել» *):

Ներսէս պատրիարքի Ս. Ստեփանո գրնալը՝ առիթ դարձաւ Արծրունու համար փոխելու իր նախկին վատ կարծիքը նրա մասին: Եւ այդ օրւանից սկսեալ՝ տաճկահայ պատրիարքը՝ ինչպէս Պօլսոյ ուսուսէր հայ խմբակի, նոյնպէս և նամանաւանդ «Մշակի» ամենասիրելի անձը դարձաւ: Իսկ «Մշակը», — ասում է Լէօն, — «քաղաքական հարցերը անսխալ հոտառութեամբ ըմբոսում էր» (եր. 49):

Եթէ հաւատանք Լէօնին, «Թիֆլիզում «Փորձն» էլ շուտ փոխեց իր հայեացքը, դէն դրեց իր վարդապոյն լաւատեսութիւնը»:

— Միմիայն հին «Մեղուն» էր, — գրում է Լէօն, — որ յամառութեամբ շարունակում էր զիմադրել օրւայ հոսանքներին **), պաշտպանել իր հայեացքները:

Քաղբքին («Մեղի» ֆէլէտօնիստը, որ ինքը խմբագիր Պ. Սիմէօնեանցն էր) 1878 իր առաջին ֆէլիէտօնում ծաղրում էր ոչ միայն Գրիգոր Արծրունուն, այլ և Իզմիրլ-

*) Պատմ. Արևել. ինդրոյ, Բ, 518:

***) Լէօն այս նկատողութիւնը բողոքովին ճիշտ է: «Մեղուն» «օրւայ հոսանքների» հետ ընթացող թերթ էր:

եանին, Նար-բէյին, որոնք յանդգնութիւն
էին ունեցել պնդելու, թէ հայը իրաւա-
զուրկ է թիւրքիայում և դրոսիանը կարօժ է
բարեխառքեան *):

ԻԳ

Ներսէս պատրիարքի Ս. Ստեփանօ
գնալն և ուսու-տանկական դաշնադրութեան
մէջ 16-րդ յօդածի ներմուծելն՝ յայտնի
բովանդակութեամբ ուսու բազաքազիտու-
թեան յազմանակն էր, որ Լայարդը վճռեց
հորսակել:

Եւ զրա համար ահա թէ նա ինչ ա-
րաւ:

Լայարդը կրկին տեանւեցաւ Ներսէս
պատրիարքի հետ և խորհուրդ տւեց պատ-
գամաւորութիւն ուղարկել Բերլինում գու-
մարելիք վեհաժողովին, որ գուցէ համա-
ձայնի Հայաստանից մի ինքնավար փոքրիկ
իշխանութիւն կազմելու, այն մտքին, որ

*) Նոյնը Գ էր. 16: Ընդգծած բառերը նոյնու-
թեամբ արտադրելով Լեօից, եւ կասկածում եմ թէ
զրանք «Մեղէի իսկական խօսքերը լինեն, թէն իմաս-
տը ճիշտ է:

մի քանի ամիս առաջ ինքը—Լայարդը յայտ-
նել էր դարձեալ պատրիարքին:

Ներսէսը այս անգամ ևս յօժարու-
թեամբ համակերցեցաւ անգլիական զես-
պանի առաջարկութեանը, նամանաւանդ
էր Լայարդը երաշխաւորեց, որ Բերլինի
պատգամաւորութեան պատճառաւ՝ հայե-
րին ոչ մի ֆլաս չի համնի Սուլթանի կող-
մից *):

Եւ, արդարև, Լայարդը Սուլթանի հա-
ճութիւնն նախօրօք ստացած էր Բերլին
գնացող հայ պատգամաւորութեան հա-
մար:

Պատգամաւորները մեկնեցան անգլի-
ական նաւով, նախապէս մտնելով Խրիմ-
եանը Լօնդօն, իսկ Նար-բէյը՝ Պետերբուրգ:
Վերջինիս վրայ մտնաւանդ խիտ հսկո-
ղութիւն էր նշանակւած Բ. Դրան կողմից:
Սյոյ էր թերևս պատճառը, որ յիշեալ ե-
պիսկոպոսի և իշխան Գորչակով կանցլերի
տեսակցութիւնից անմիջապէս յետոյ Բ.
Դուրը պահանջեց Նար-բէյին յետ կան-
չել:

*) Այս պատգամաւորութեան կազմելու մանրա-
մասն պատմութիւնը եւ գրել եմ «Մեղէի» կարծեմ
— 882 թ. համարներից մէկում, ի հարկ որքան որ
հարաւոր էր այն ժամանակ:

ներսէս պատրիարքը՝ հրաժարուեց:

Շատ շանցած՝ Բ. Իրան կողմից նորից մի պաշտօնեայ, Ապրօ անունով մի հայ էֆէնդի, ներկայացաւ պատրիարքին և առաջարկեց Բերլինի պատգամաւորութեանը յետ կանչել:

Հայ պատւիրակները Բերլինում այլևայլ դեպքանների և նոյնիսկ պալատին այցելելը Բ. Իրան մէջ զանազան կասկածներ էր զարթեցրել: Ներսէսը այս անգամ էլ հրաժարուեց: Եւ բացարձակօրէն յայտնեց, որ ինքը աւելի շուտ կաղախան կը բարձրանայ, քան իր պատգամաւորներին յետ կը կանչէ:

— Յայտնեցէք, — ասաց պատրիարքը Ապրօ էֆէնդիին, որ նախ քան ինձ կարողանայ ստիպել յետ կանչել հայոց պատգամաւորներին Բերլինից, պէտք է կարգադրէ ինձ կախ անել պատրիարքարանի շինութեան առաջ: Յիսունեօթ տարի սրբանից առաջ յունաց պատրիարք Գրիգորը բռնեց նոյնիսկ եկեղեցու սեղանի մօտ և քահանայական զգեստով կախուեց տաճարի դռներում: Ես կը հետևեմ նրա օրինակին, կերթամ սեղանը, կը զգեստաւորեմ և աւելի լաւ կը համարեմ անձնատուր լինել

դահիճներին, քան թողնել իմ հօտը» *):

Ներսէս պատրիարքի Ապրօ էֆէնդին տւած այս պատասխանը պ. Լէօն վերցրել է «Голосъ» թերթի մի հեռագրից:

Ես չգիտեմ թէ որ աստիճան ուղիղ են և ճիշտ ոուս թերթի հեռագրի այս գրածները, որոնք իմ ունեցած տեղեկութիւններից այդ առթիւ՝ բաւականի տարբերուում են:

Յամենայն դէպս՝ այս մէկը ճիշտ է, որ երբ Ներսէս պատրիարքը մի անգամ որոշել և պատգամաւորութիւն էր ուղարկել, — այլևս չէր կարող և չէր կամենալ ձեռնունայն, գէթ առանց վեհաժողովի ներկայացմանը, յետ դարձնել պատգամաւորներին, լոկ ի հաշիւ, կամ ի հաճոյս Բ. Իրան, կամ նոյնիսկ Լայարդին կամ Լաբանով-Ռոստովսկուն, — Կ. Պօլսոյ ոուսական նոր դեպանին: — Ոչ, Ներսէսը այդպէս բան չէր անել:

Նա ոչ միայն պատուասէր անձն էր և իր կողման ու պաշտօնի նշանակութիւնը հասկանում էր, — այլ նաև քողաքազիտական որոշ տակտ ունէր, և շատ լաւ իմանում էր թէ երբ պէտք է լուռ մնալ, և երբ ձայն բարձրացնել, երբ պէտք է մի կողմ քաշել և երբ հրապարակ նետուել:

Նա մանաւանդ որ հայ պագամաւոր-
ութեան Պօլսից մեկնելուցն ի վեր՝ Ներսէս
պատրիարքը շարունակ յարաբերութեան
մէջ էր Լայարզի հետ, որի միջոցաւ և
ստանում էր հայ պատւիրակների կողմից
իրեն ուղղւած հեռագիրներն ու նամակ-
ներն:

Ուզում եմ ասել, որ Ներսէսը իր թի-
կունքը պնդացրել էր և միանգամայն վըս-
տահ անգլիական քաղաքագիտութեան վը-
րայ, անյորդոզը ընթանում էր այդ քա-
ղաքագիտութեան ծրագրով, որը և առաւել
օգտակար էր համարում իր ազգի համար,
քան Ս. Սահֆանօի 16-րդ յօդւածը:

Մի խօսքով՝ Ներսէս պատրիարքը, —
սովորական դարձւածով խօսելով, — անգլօ-
ֆիլ, — անգլիասէր էր:

Գրիգոր Արծրունին, **ընդհակառակը,**
Անգլիային չէր սիրում:

Պատերազմի ձայներն սկսւած օրից ի
վեր «Մշակը» միշտ Անգլիային հակառակ
է եղել:

Գովելով և շատագովելով Ռուսաստա-
նին Արծրունին, միևնոյն ժամանակ, չէր
դադարում Անգլիային շարունակ նախատե-

լուց և անարգելուց: Արծրունու աչքում՝
Ճաճկահայաստանի նկատմամբ Ռուսաս-
տանի վերաբերմունքը՝ փրկարար ազատա-
րար էր, իսկ Անգլիայի վերաբերմունքը՝
կործանարար: Եւ եթէ նա, ըստ Աէօի, քա-
ղաքական հարցերը «անսխալ հոտառոտու-
թեամբ ըմբռնող» այդ հրապարակախօսը,
այդ ազատամիտ խմբագիրը, իմանար, որ
Ներսէսը Անգլիական քաղաքականութեան
համակիր է, — այն ժամանակ էլ Սառւած
այնտեղ բան չունէր, էլ Ներսէսը նրա ձեռ-
քից պրծնելու չէր:

Սակայն պատրիարքի բաղձից՝ Արծրու-
նու «անսխալ հոտառութիւնը» սխալ դուրս
եկաւ այս անգամ: Այնպէս որ «Մշակը»
այս անգամ փոխանակ Ներսէսին դատափե-
տելու՝ սկսեց նրան գովել: Եւ ինչպէս գո-
վել:

Այ տեսէք:

«Թիւրքիայի հայոց հոգևորականը աը-
ժանի է դառնում ամբողջ ազգի խորին
համակրութեան» *):

«Այո, երբ Ներսէս պատրիարքը շողս-
քորթում էր (?) թիւրքաց տէրութեանը,

*) Ընդգծումները իմն են:

երբ նա ակնոց եր եւ սզգի շահերը գոհում եր ակննակաւ շահերի հաւատ (?), մենք նրա վրայ անխնայ կերպով յարձակուում ենք: Այժմ մենք չենք կարող չյայտնել նրան մեր կասարեալ հաւակրոտիանը, մեր յարգակիր, երբ նա իր քաջ վարմունքով, իր վեհանձն պատասխանով կրկին յարուցանում է հայ մարդու հոգու մէջ հինգերորդ դարի հայոց հոգևորականութեան յիշատակը»:

«Աշխարհը կը յարգէ հայերին միայն այն ժամանակ, երբ ամենքը կը տեսնեն, որ հայը իր կեանքի գնով պաշտպանում է իր անձը, իր պատիւը, իր ազգի իրաւունքները»:

«Թէև ներսէս պատրիարքը իր հերոսական պատասխանով միայն իր պարտաւորութիւնն է կատարել, — բայց մենք վաղուց է որ առիթ չունենալով տեսնել որ Թիւրքիայի հայոց հոգևորականութիւնը իր պարտաւորութիւնը կատարէր, հիացած եւ սրբազան ներսէսի պատասխանով» *):

Եթէ ներսէսը Արծրունու խելքի մարդ լինէր՝ կամ նրա գրածներին նշանակութիւն տար, նրա այս ատեստացիայի վրայ՝ կարող էր Շիւլերի խօսքերը կրկնել՝ «Մօօրը

*) Նոյնը, Բ. 77:

իւր գործը վերջացրեց. այժմ Մօօրը կարող է հեռանալ»:

Բարեբաղդաբար տաճկահայերի պատրիարքը՝ ոչ ոգևորում էր, ոչ էլ յուսահատում: Ուստի երբ Բերլինի վեհաժողովը Ս. Սահեֆանօյի դաշնագրութեան 16-ր(յօդուածը 61-րդ վերածելը տեսնելով՝ որոշ կուսակցութեան բանակը, կամ ըստ պօլսեցիներին, «օճախը»), սկսեց մեղադրել ներսէսին՝ Բերլին ուղարկած պատգամաւորութեանը համար, — պատրիարքը անա թէ ինչ պատասխանեց իր հակառակորդներին 1878 թւի յունիս ամսին Ազգային ժողովում իր արտասանած խորհրդաւոր ճառով:

ԻԴ.

...Մեծ խելք և մեծ հեռատեսութիւն պէտք չէր տեսնելու համար, թէ երկրին վիճակը կը փոխեր բոլորովին *) և անոր հետ նաև անձնիւր քրիստոնեայ ժողովրդի գոյութեան պայմաններն ալ կը փոխէր: Մէկ խօսքով՝ վսակը ակնետա եր ինձի համար և ամենուն համար, որ հայոց ազգն պիտի կրնար անհետանալ իբր ինքնուրոյն

*) Ըստ գծումները միշտ իմն են:

ժողովուրդ, և եթէ իր գոյութիւնը չամրապնդէր, պիտի ոչնչանար: Հարստահարութեան խնդրոյն կաւելանար մեծ քան գայն խնդիր՝ ազգի գոյութեան ու յոյութեան խրնդիր:

«Այս ընդհանուր պայմանաց մէջ հայոց ազգին անունն անգամ չկար և դաշնադրութեան վիճարանութիւնը այն պայմանաց սահմանին մէջ միայն կրնար ըլլալ: Գրեթէ յուսահատելու էր և ես չգիտեմ թէ ինչպէս չյուսահատեցանք»:

«Անկարելի է նկարագրել սրտիս մորմոքը՝ զոր թողէք ըսեմ, զգացի ի սիրտս և ի բովանդակ անձն իմ միանգամայն զգացի անհղն այն պատասխանութեան, որ այն հանդիսաւոր ժամուն կը ծանրանար իմ վերաս, զի ազգը իր երեցփոխանական ժողովովը ազգին խնդիրն ինձ էր յանձնած մասնաւորապէս»:

«Յաջողիլ անկարելի էր սովորական միջոցներով, ոչ ալ սպասելը ներելի էր: Կըրնայի ի ժողով կոչել զձեզ, և այն ատեն բան մը ընելով ալ ձեր առջև պատասխանութենէ ազատիլ, կրնայի գոնէ քաղաքական ժողովով գործել»:

«Պէտք էր որ այնպիսի պարագայի մէջ

նայէի միայն անձնական պատասխանատուութեանց ու ձեր առջև անպարտ ելնելով, խղճիս առջև պարտաւոր մնայի»:

«Տեարք երեսփոխանք, անշուշտ անհետացած չէ ձեր յիշողութենէ այն սիրուն յիշատակը»:

Օսմանեան ազգը որ առատապէս հեղած էր իր արիւնն ի դաշտ պատերազմաց, այնքան զոհողութիւններէ ետքը իր պարտութիւնը տեսնելով և այսքան չարեաց սկզնապատճառ ֆրիստոնէութեան անունը միշտ հնչելով իր ականջին, բնական էր որ արտաքոյ կարգի գրգռութեան մը չգար»:

«Աւելի քան երբէք պէտք էր խոհեմատութեամբ և շրջահայեցողութեամբ գործել, այլ նաև ուժով և ազդու կերպով գործել»:

«Ձեր պատրիարքը մտածեց խորհրդակցեցաւ: Իր շուրջը ունէր բոլոր եպիսկոպոսական դասը՝ պատրաստ գործելու իրեն հետ յանուն ազգին և յանուն ազգին զոհելու, եթէ պէտք ըլլար: Միացաւ իր սրբազան եղբարց հետ՝ և որոնք արդէն իրենց կոչման օրն առաջի Աստուծոյ երդւեալ էին նորէն երդւան նւիրել զանձինս ազգին»:

Օսմանեան լիազօր դեսպանք զեռ չէին ուղևորած Սղրիանուպօլիս, ես և իմ սրբազան եղբայրակիցներս գործել սկսանք: Ազգին յայտնի էր այն ատեն ինչ որ ուզեցինք. այն է՝ հայոց յիշատակութիւնը դաշնադրութեան մէջ, և յայտնի է այսօր թէ այս յիշատակութիւնն եղաւ մասնաւոր յօղւածով:

Արդեօք ճիշտ մեր ուզածին պէս եղաւ յիշատակութիւնը:

— Ոչ, այլ քաղաքականութեան մէջ՝ «երբ չես կրնար ընել ինչ որ կուզես, պէտք է ընել ինչ որ կրնաս»*):

— «Իսկ մենք, տեսրք երեսփոխանք, — բացականչեց ներսէսը, — մենք յարատեւենք մեր սկսած գործին մէջ: Այսպիսի գործեր ոչ մէկ օրւան մէջ, ոչ մէկ մարդու ձեռքով կրնան կատարիլ:

Պատրաստուինք մեր ապագային:

Նախ՝ չը կենանք հոս, Հայաստան երթանք, Հայաստան զրկենք ինչ որ ունինք ազգիս մէջ բանիբուն, տաղանդաւոր, ազգասէր, ուսումնասէր եկեղեցականներ, Հայաստան երթան մեր գոստիարակներ, ու-

*) Նոյնը, Գ 44—45

սուցիչներ, մեր այնքան վառվռում երիտասարդներ, Հայաստան երթան մեր արւեստագէտներ, վաճառականներ, Հայաստան երթան մեր այնքան դժբախդ պանդուխտներ, ոչ ևս պիտի ըլլայ հոն սով, սրածովութիւն, ոչ ևս հարստահարութիւն, ոչ ևս կենաց և ընչից և պատուոյ առևանգութիւն, ոչ ևս աշխատութեան խափանում. ուղիներ պիտի բացւին, ջրանցքներ պիտի շինւին, գործաւաններ պիտի կառուցւին»:

«Անզլիոյ դրամատէրք հոն պիտի երթան իրենց դրամը գործածելու. թող երթան մեր դրամատերք ալ, ընկերութիւններ կազմեն այս օրւանէ, ընկերութիւններ ամեն քաղաք ու գիւղ՝ դպրոցներ հաստատելու համար, ընկերութիւններ՝ առևտրական յարաբերութիւններ հաստատելու համար, ընկերութիւններ՝ գործարաններ հաստատելու համար... Եւ այն ատեն՝ թերևս ես ալ ցաւազար և անբուժելի հիւանդութեամբ վարակեալ*) ի գերեզման իջած ըլլամ արդէն, այլ տեսնելով այսքան ազգային միասիրտ, միահոգի աշխատողութեան գեղեցիկ արդիւնքները, տեսնելով պսակած մեր այսօրւան բոլոր յոյսերը, հոգիս պիտի խայտայ գերեզմանիս միջէն»:

*) Ներսէսի հիւանդութիւնը՝ շաքարի էր:

և պիտի ընդ զրկէ մեր սիրելի նախնեաց հոգիները...» *):

Ներսէս պատրիարքի այս ճառից ակնա-
յայտնի է, որ Անգլիական կառավարութիւ-
նը որոշել էր իսկապէս բարեկարգել Տաճ-
կահայաստանը, ի հարկէ, իր շահերի հա-
մար, որոնք, սակայն, (հայկական շահերին
էլ հակառակ չէին միևնոյն ժամանակ:

Իսկ բարեկարգելու, երկիրը ծաղկեցնե-
լու, լուսաւորելու ամեն յարմարութիւն
ու ընդունակութիւն ունէին Անգլիան և իր
գրամատէրերը, իր բարձր կուլտուրան, իր
հաստատակամութիւնը, վեհաժողովի 61-դ
յօդւածը, նա մանաւանդ տաճիկ կառավա-
րութեան հետ իր ունեցած առանձին դաշ-
նագիրը Կիպրոսի վերաբերութեամբ, — այս
ամենը ոչ մի տարակոյս չէին թողնում,
որ խորագէտ Ալբրիտը լուրջ ուշադրութիւն
է դարձնելու տաճկահայաստանի վրայ՝ կամ
նրանից մի փոքրիկ, առանձին իշխանու-
թիւն կազմելով, կամ հիմնաւոր հաստա-
տուն բարեկարգութիւններ մտցնելով:

**) Նոյնը Գ. 83—84:

Ի՛ն

Այս հաստատուն յոյսն ու կենդանի հա-
ւատը ունենալուց էր, որ Ներսէս պատրի-
արքը՝ այնքան գրաւիչ կերպով էր նկարա-
գրում իր ճառում Տաճկահայաստանի ա-
պագան:

Թէ նրա այդ յոյսը՝ ինչու չարդարա-
ցաւ, — իր տեղում ես կը բացատրեմ, — առ-
այժմ պէտք է ուրախութեամբ արձանա-
գրեմ, որ Ներսէսի այս ճառին ձայնակցեց
և «Մշակը» յուլիսի 11-ին առաջնորդողում
և «Մշակը» յուլիսի 11-ին առաջնորդողում
գրելով՝ երկու տարի մի վայրկեան է մի ազ-
գի կեանքի համար, մանաւանդ մի այնպի-
սի հնադարեան ազգութեան համար, ինչ-
պէս հայերն են:

«...Տարիներով մենք ոչինչ չենք արել
և պահանջում ենք, որ երկու-երեք լուսա-
ւորւած հոգևորականների ջանքերով, որոնց
գործունէութեանը շատերը մինչև անգամ
աշխատում էին ֆրասել, ազգը հասնէր նոյն
յաջող հանգամանքներին, որոնց հասան սլա-
ւեան ցեղերը հարիւր տարւայ ջանքերով,
աշխատանքով և անթիւ զոհաբերութիւննե-
րով:

«Այն հետևանքն էլ, որոնց մենք հա-

սանք երկու տարւայ ընթացքում, պէտք է հրաշալի համարեն...»:

— «Հայի նպատակը պէտք է այսուհետև լինի,— շարունակում էր Արծրունին— զարգացնել իր բոլոր ազգային ոյժերը իր մայրենի հողի վրայ, մտցնել իր ազգի մէջ եւրոպական լուսաւորութիւն, աշխատել բարւոքել իր ժողովրդի անտեսական գրութիւնը *), և ամեն միջոցներով զէպի իրան զբաւել շրջապատող փայրենի բարեկամ ցեղերը, մտցնել նրանց մ'ջ քաղաքակրթութիւնը, իսկ թշնամի թափառական ցեղերի զէմ զէնքը ձեռին պաշտպանել**):

Մի երկու տարուց յետոյ Արծրունին էլ աւելի հակեցաւ զէպի շինարարական գործունէութիւնը Տաճկահայաստանում և առաջարկում էր «անտեսական-բարեգործական մի ընկերութիւն» կազմել այնտեղ որպէսզի հողեր գնէր և բաժանէր զիւզացիներին ***):

Եւ Արծրունու այդ առաջարկութեան

*) Եթէ ընթերցողը չէ մոռացել՝ միևնոյն այս գեղեցիկ մտքերը՝ տակաւին պատերազմից առաջ՝ յայտնում էր և Պետրոս Սիմէօնեանցը «Մեղուի» մէջ:

**) Նոյնը եր. 82—83:

***) Նոյնը, եր. 205

«զրդմամբ այնտեղ (Պոլսում),— գրում է Լէօն, — սկսեցին պատրաստութիւններ տեսնել հիմնելու մի «անտեսական ընկերութիւն», որի կանոնադրութիւնը նախապէս ուղարկեց Արծրունուն՝ նրա կարծիքներն իմանալու համար» *):

Արծրունու այս առաջարկութիւնը Լէօն չէ հաւանում և ուտոպիա է անւանում: Պարոնը չէ հաւանում, որ «այսպիսի մեծագործութիւններ, որոնք զբամական ազգին գոհողութիւններ էին պահանջում, պիտի կատարէր մեր այն հասարակութիւնը, որ նոյնիսկ չէր կարողանում մի լրագիր պահել («Մշակը»), պիտի կատարէր զլիաւորապէս հայ անկուրտութեան, հնամոլ փաճառականութիւնը» **):

Լէօն հարկաւ ճշմարիտ է մասամբ:

Սակայն Արծրունու առաջարկը անհարին չէր, եթէ անգլիական զբամագլուխը հրապարակ գար, ինչպէս որ շեշտում էր Ներսէս պատրիարքը 1878 թ. իր արտասանած ճառի մէջ:

Արծրունին լիկ տեսական մտքերի ար-

*) Նոյնը, եր. 204:

***) Նոյնը, եր. 203:

Թիֆլիզում կարգացած Արծրունու դա-
զասախօսութիւնից արդէն երևում են որո-
մի ծայրերն, որ նա չնկատելով, միամտա-
բար ասում էր՝ «վերջին ժամանակ մեր
լրագիրները թղթակիցները հաղորդում են,
որ Թիւրքիայի հայը գրեթէ ամեն տեղ
սկսում է գինւել:

Բայց արդեօք դրանով նա ընդդէմ է
գնում իր բռնած պատմական ընթացքին:

Չեմ կարծում:

Եթէ հայը Թիւրքիայում գինւում է
միայն նրա համար որ բռնութեան դէմ
պաշտպանողական դիրք բռնի միայն և ոչ
թէ յարձակողական» *):

Պէտք է նկատել, որ այդ միջոցում
Յունաստանի ապա Չեռնօգորիայի և Ալբա-
նիայի շարժումներն սկսեցին Եւրոպա-
յում:

Եւրոպական պետութիւնները ստիպ-
ւած եղան իրենց ուշադրութիւնը այն
կողմը դարձնելու հարկադրւեցաւ դանդա-
ղեցնել իր տենդային գործունէութիւնը
Տաճկահայաստանի նկատմամբ:

*) Նոյնը, եր. 128:

Այս հանգամանքը ամենալաւ առիթ
էր ուսական դիպլոմատիայի համար ինչ-
պէս ասում են՝ արգանդի մէջ մեսցնել
Տաճկահայաստանի ինքնավարութեան հար-
ցը կամ նոյնիսկ այդ երկրի բարեկարգու-
մը Անգլիայի ձեռներէցութեամբ:

Ահա թէ ինչու համար՝ Կովկասի մահ-
մէդական տարրերն, չէրքեզներն շտապ-
շտապ գաղթել սկսան դէպի Փոքր-Ասիա,
ուր և մեծ ընդունելութիւն գտան Օսման-
եան կառավարութեան կողմից:

Շնորհակալութեամբ ընդունելով հան-
դերձ Ռուսաստանից եկած հաւատակից
հիւրերին՝ Ապդիւլ-Համիդը, միևնոյն ժա-
մանակ, նախատեսնում էր, որ շուտով ու-
րիշ և արդէն քրիստոնեայ հիւրեր էլ պէտք
է գան Կովկասի կողմերից: Եւ այդ հիւրե-
րն՝ գաղթականներ չեն լինելու, այլ Տաճ-
կահայաստանի՝ «ազատարարները Օսմանեան
լծից»:

Ուստի և Ապդիւլ-Համիդը կարգա-
դրեց, որ իր հպատակ քրդերից՝ այդ ա-
զատարարներին դիմաւորելու խմբեր պա-
տրասուին:

Եւ խմբերը լուրջ պատրաստեցան և
անհամբեր սպասում էին լուռ ու մունջ:

Ապղիւ-Համիդի գուշակութիւնը կատարեցաւ:

Եւրոպական լրագիրներէց վերցնելով ահա ինչ էր հաղորդում «Մշակին» Կ. Պօլսի թղթակից Հայկակը:

«Լրագիրները կը հաստատեն թէ՛ յանուն սոցալին վրէժխնդրութեան հայոց գինեալ գօրեղ խմբեր յարձակեր են Վասպուրականի քիւրդ գիւղերու վրայ և 7 գիւղ այրեր մըրկեր են»:

«Համոզում կայ, — շարունակում է Հայկակը, — որ եթէ այս դէպքը ճշմարիտ լինի, եւրոպայի վրայ խոր տպաւորութիւն մը պիտի ընէ և Հայկական խնդրոյն այնպիսի քայլ մը անել պիտի տայ, յորմէ շատ և շատ գոհ պիտի լինինք»:

...Հայոց խնդիրն որ օրերս երկրորդական կերպարանք մը առած էր Յունաց և Մօսթէնեկրօյի հարցի բազդազմամբ, երկու աւուր մէջ կերպարանափոխ եղաւ հայոց գինեալ խմբերու արշաւանաց շնորհիւ: Կրսեն որ այս միջոցին Վանայ մէջ ալ շարժում մը տեղի պիտի ունենայ: Այն ատեն իրանց վիճակը անհաշուելի կերպով կը լաւանայ» *):

*) Նոյնը, Գ. 177:

Հայկակի այս լուրը մեծ բաւականութիւն է պատճառել մեր «պատմաբան» Լէօօին, որ ահա թէ ինչ էր գրում 1895-ին:

«Եթէ շինէր էլ զինւած հայերի շարժումը, պէտք էր նրան ստեղծել «իրաց վիճակը անհաշուելի կերպով» լաւացնելու համար» *):

Եւ այդ շարժումը ստեղծեց:

«Երկու ուս թերթեր, գրում է Լէօն, — Նոյնպէս լուրեր տպեցին թիւրքահայերի շարժման մասին, իսկ ղրանցից մէկը «Новое Время»-ն նոյնիսկ մի համակրական առաջնորդ նւիրեց այդ շարժման» **):

«Մշակը» տպեց, — շարունակում է Լէօն, — Իգդիրից ստացած իր հեռագիրը, որ հաղորդում էր թէ Վանի հայերի մէջ ապստամբութիւն է ծագել, սպանւած հայերի թիւը 70-ի է հասնում: Արժրունին, ինչպէս երևում է, շատ մեծ հաւատով չը վերաբերեց իր սեփական թղթակցի հեռագրին: Ուստի առաջնորդողի մէջ բերելով այդ հեռագրի բովանդակութիւնը, նա զիմեց և ուս լրագրի վկայութեան և ապա

*) Նոյնը 178:

***) Նոյնը 179:

միայն կարողացաւ ասել թէ՛ «զինեալ շարժման լուրը հաստատուում է»: Այդպիսի շարժում, որքան մենք զիտենք այժմ, չէ եղել և Իգդիրի հեռագիրը, հաւանակօրէն, հիմնւած է եղել նոյն այն լուրերի վրայ, որոնք անցել էին Եւրոպական թերթի և ուսւ լրագրութեան մէջ» *):

«Մի քանի օրից յետոյ,—գրում է Լէօն,—Իգդիրից մի ուրիշ հեռագիր հաղորդում էր, որ Վասպուրականում զինւած հայերը միացել են Ասորիների հետ, որոնք Մար-Շիմօնի առաջնորդութեամբ են գործում. Մուշի կողմում մի քանի քիւրտ ցեղեր իրենց օգնութիւն են առաջարկում զինւած հայերին **):

Իգդիրից դուրս եկած այս երկրորդ սուտ և պրօվակացիօն լուրից՝ Արծրունին էլ աւելի ոգևորւելով՝ փութաց հետևեալ աւետիքը հաղորդել հայութեանը՝

*) Շատ ափսոս, որ Վանի հայերի ապստամբման լուրի սուտ լինելն՝ Լէօն շատ ուշ է իմացել: Մինչդեռ այդ լուրի հրատարակման շարժումը «Մեղուն» բողոքել էր այդ պրօվակացիայի դէմ, որ Արծրունին արդար իւրի տեղ ընդունեց, և այդ պրօվակացիայի վրայ հիմնել տւեց իր «ձկնորս» Բաֆֆիին՝ նրա «հայծեր» կոչւած... թող ասենք, վիպասանութիւնը: Ման. հեղ.

***) Նոյնը 181.

«Վերջապէս թիւրքաց Հայաստանի ամբողջ ազգաբնակչութեան մէջ սկսում են համերաշխութեան ցոյցեր երեւալ,—Հայաստանի թէ հայ, թէ Ասորի և թէ քրւրտ ազգաբնակչութիւնները վերջապէս սկսում են հասկանալ թէ բոլորն էլ հայաստանցի են, թէ ճնշումը որ նրանց վրայ գործում է թիւրքիան, հաւասարապէս ամենքի վրայ է ծանրանում» *):

Անշուշտ ընթերցողին ցանկալի կլինի իմանալ թէ՛ Իգդիրը,—ուսւ-տաճկական սահմանի վրայ գտնւած այդ աննշան քաղաքը, ուր Արծրունին իր «սեպհական թղթակիցն» էր պահում,—ներկայ դէպքում ինչ դեր է խաղում:

— Բաւական խոշոր դեր, սիրելի ընթերցող:

Ես այդ դերի ինչ լինելը՝ քիչ յետոյ կը բացատրիմ:

Առ այժմ ուզում եմ մի հակիրճ աննարկ ձգել ուսւ քաղաքականութեան վրայ տաճկահայերի նկատմամբ:

*) Նոյնը, եր. 182:

ԻԶ.

Յայտնի է, որ Մեծն Պետրոսից սկսեալ մինչև 1877 թիւը՝ ռուսական քաղաքականութիւնը միշտ աշխատել և տեղահան է արել հայերին իրենց մայր-երկրից իրենց բնավայրից և տարել ու բնակեցրել է իրեն նորանաճ երկիրներում, որոնք այսպիսով, — հայի քրտինքով և արտասուքով, — պարարտացել, ծաղկել ու զարդարել են կարճ ժամանակում:

— «Այս ամենը ապացուցանող զրաւոր պատմութիւններ կան: Կան և անգիր յուշարձաններ և կենդանի կոթողներ, որոնք ձգւած ու սփուլած են Երասխի խառնտրանիցն մինչև նրա ակունքը՝ Բինգեօլի բարձրավանդակում. Սիւնիքի և Արցախի կրճերիցն ու խոխոմներիցն՝ միչև Զաթրգաղ և Դօնի աւազուտները, Խազրաց անպատներից մինչև Ճորայ պահակը, Կուրի ակունքներից մինչև Ամուղարի» *):

Վերջին տեղահանութիւնը, որ կատարել տւեց ռուսական քաղաքականութիւնը, Ալաշկերտի 3000 հայերի գաղթականու-

*) «Մտորումներ» եր. 4

թիւնն էր ժեներալ Տէր-Ղուկասովի առաջնորդութեամբ» *):

Այնուհետև այլևս ձեռնառու չէր Ռուսիային Տաճկահայաստանը բրիտանեայ տարրից զրկելն, — հայերին գաղթեցնել:

Ընդհակառակը՝ անհրաժեշտ էր հայերին թողնել իրենց երկրում, որպէսզի նրանց մէջ խլրտումներ, քաղաքական շարժումներ առաջ բերելով՝ ռուս քաղաքականութիւնը առիթ ունենայ գրոհ տալ Տաճկահայաստան բրիտանեայ պաշապանութիւն պատրուակելով:

Ռուս աւանդական քաղաքականութեան այս յանկարծական փոփոխութիւնը հետևանք էր Ս. Ստեֆանօյի դաշնագրութեան 16-րդ յօդւածին:

Կարսի շրջանի գեներալ նահանգապետ Փրանկինին, ազգաւ յոյն, Ս. Ստեֆանօյի դաշնագրութեան հետ ծանօթանալուց յետոյ՝ գեկուցազիր ուղարկեց փոխարքայ Մեծ-Իշխան Միքայիլին՝ խորհուրդ տալով նրան՝ ի նկատի ունենալով դաշնագրու-

*) 1853—1856 թ. պատերազմից յետոյ հրահանգ դուրս եկաւ «տաճկահայերի գաղթումը դէպի Ռուսաստան այլևս չխրախուսել, այլ միայն շտրգելի» Акты, հատ. XI, № 301:

Թեան 16-րդ յօդւածը՝ դադարեցնել տալ տաճկահայերի արտագաղթումը, որպէսզի Ռուսաստանը չգրկէ Տաճկաստանի ներքին գործերին միջամտելու հնարաւորութիւնից որ թէև պատրւակեալ ձևով, բայց և այնպէս 16-րդ յօդւածը ընձեռնում էր Ռուսաստանին:

Փոխարքայ Մեծ-Իշխանը՝ Ֆրանկինի գեղուցազրի վրայ այսպէս էր մակագրած՝ «միանգամայն համամիտ եմ գեներալ Ֆրանկինի կարծիքին. առաջադրել գեներալ Լազարեվին, որ դադարեցնէ հայերի գաղթականութիւնը» *):

Փոխարքայի այս առաջադրութեան հետևանքն էր, որ «պատերազմի ժամանակ այնքան հոշակաւոր հայազգի Ներոս գեներալ Լազարեվը,—գրում է Լէօն,—որ կարսի բանակի գլխաւոր հրամանատարն էր նշանակւած, հայերէն գրած մի կոչով դիմեց էրզրումի նահանգի հայերին և համոզում էր նրանց թողնել գաղթելու միտքը»:

Այս կոչը հասաւ իր նպատակին:

Լազարեվը ահագին հեղինակութիւն էր վայելում էրզրումի և շրջականների հայե-

*) «Լուսնայ» 1906, № 4:

րի մէջ և նրա խօսքը բնականաբար պիտի վերին աստիճանի ազդու լիներ: Եւ նա չբաւականացաւ այդ կոչով, այլև սկսեց եռանդուն բանակցութիւններ թիւրք իշխանութիւնների հետ...»:

«Արծրունին,—շարունակում է Լէօն,—առաջնորդողի մէջ մեծ գոհունակութեամբ խօսեց Լազարեվի այդ գործի մասին: Նա ասում էր, թէ գեներալ Լազարեվը փառաւոր կերպով կատարեց մի կորուստ մարտ, մի Իրիսոնկեսայի պէտակաւ գործի, և վերջապէս բուն ազգաւեր հայի պարտաւորութիւնները» *):

**) Նոյնը, Գ. 73: Ընդգծածս բառերն ցոյց են տալիս թէ՛ Արծրունին որքան միամիտ և խելօ հասկացողութիւն ունէր մի զինւորական պաշտօնէի,—որպիսին Լազարեւն էր,—տարրական պարտաւորութեան մասին:—Եւ իր այդպիսի սխալ հասկացողութեամբ Արծրունին փառաբանում ու պարսաւում, ջադագովում ու դատափետում էր մարդկանց, ըստ իր քմահաճոյքի և ըստ իր արամադրութեան: Այսպէս, օրինակի համար, գեներալ Լազարեւը «բուն ազգասէր հայ» էր, որովհետև իր տէրութեան օգտին էր ծառայում, իսկ Միդհատ փաշան «իդիօտ» էր, որովհետև նա էլ չէր տէրութեան օգտին էր ծառայում: Նոյն պատճառաւ «իդիօտ» էր նոյնպէս և Աբէղին փաշան: Կ. Պօլսի և Թիֆլիզի բոլոր հայ գործիչներն նոյնպէս «իդիօտներ» էին, որովհետև Արծրունու նման չէին խորհում ու գործում (Երես 158):

Ծան. հեղ.

Եթէ հայերի գաղթման խափանումը Ռուսաստանը գլուխ բերել ուզեց իր ապագայ շահի տեսակէտից, — ներսէս պատրիարքն էլ իր հերթում նոյնպէս շատ աշխատեց խափանել այդ գաղթականութիւնը (քարոզիչներ ուղարկելով Սրուանձտեանց Գարեգին և Պարտիզակցի Վահան վարդապետներին) տաճկահայերի իրենց ապագայ շահի տեսակէտից:

Թէև ոչ հաստատուն, սակայն հաւանական փաստեր կան, որ ներսէս պատրիարքի խորհրդատուն՝ այս հարցում ևս Անգլիայի ղեսպանն էր:

Անգլիային էլ ձեռնառու չէր Տաճկահայաստանի բրիտանաց տարրից դատարկելը: Որովհետև, ինչպէս վերևում յիշել եմ, Անգլիան մտադիր էր Տրապիզոնից — Կարին արանգիտի ճամբան բաց պահել միշտ, և Հնդկաստանի ճանապարհը փակել Ռուսաստանի հանդէպ՝ հայկական մի փոքրիկ ինքնավար իշխանութեամբ:

Դժբաղդաբար Բերլինի վեհաժողովում այդպիսի հարց չդրւեցաւ: Այլ Ս. Սաեֆանոյի դաշնադրութեան 16-դ յօդւածը 61-ի փոխարկելով՝ վեհաժողովը տաճկահայերին փոխանակ Ռուսիայի ամբողջ Եւրոպայի

մեծ պետութիւնների հովանաւորութեան տակ առաւ:

Այսպիսով անա ազգային հարցը դարձաւ միջազգային հարց:

Եւ որովհետև Կիպրոյի մասին տաճկաց կառավարութեան հետ կապած դաշինքով Անգլիան պարտաւորւել էր Տաճկաստանի ասիական սահմանները պահպանել զէն ի ձեռին, — ուստի առանց 61-րդ յօդւածին էլ նա միշտ կարող էր իրազործել Տաճկահայաստանի մասին իր մտքում գրածը:

Եւ հէնց այդ նպատակաւ էլ էր, որ վեհաժողովի ցրւելուց առաջ և յետոյ՝ անգլիական կառավարութիւնը միքանի նոր հիւպատոսութիւններ հաստատեց, որոնց յանձնւած էր ուսումնասիրել Տաճկահայաստանը և պահանջներ անել երկրի բարեկարգման համար:

Ներսէս պատրիարքին ևս յանձնարարւած էր՝ իր մարդկանց արած ուսումնասիրութիւնները հասցնել ղեսպանատանը:

Լայարդի փոխարէն էլ, նոր ղեսպան նշանակւեցաւ յատուկ հրահանգով Գօշէնը:

Թէպէտ և մինչև սրա գալն՝ Լայարդն

արդէն սկսել էր ուժեղ կերպով իր գործն առաջ տանել:

Բայց... ինչպէս Լայարդը, ինչպէս Գօշէնը, նմանապէս սրա յաջորդները մեծ ընդդիմութեան հանդիպեցան Սուլթանի կողմից:

Ապդիւլ-Համիդը այլևս շատ բանի տեղ չէր դնում Անգլիային:

Նա շատ երես էր առել: Եւ նրան երես տւողն էր գլխաւորապէս Ռուսիայի արտաքին գործոց նախարարը Լաբանով-Ռոստովսկի որ յաջողեցաւ վերջերում իրան հետ միացնել և Հանօտօին ու Բիսմարքին:

Որովհետև Բերլինի վեհաժողովի 61-րդ յօդւածով և Կիպրոսի դաշինքով՝ Ռուսաստանի ծրագիրը հիմնադատակ էր լինում, ուստի վերջինս էլ սկսեց Անգլիայի ծրագիրը հիմնադատակ անելու աշխատել, երբեմն առանձին, երբեմն Ֆրանսիայի աջակցութեամբ և յաճախ ևս Թիւրքիայի իրեն աջակցութեամբ:

Տաճկահայաստանը հայերից դատարկելու և Անգլիայի նպատակը ի դերեւ հանելու համար՝ Ռուսաստանը ձեռք-ձեռքի տւած ընթացաւ Թուրքերի հետ՝ Բերլինի վեհաժողովից յետոյ անմիջապէս:

Սուլթում—Գալէինց, Կարսից, Չլդրից և Ալաուայի Լագերի և Չերքեզներէ արտասովոր գաղթը գէպի Փոքր-Ասիա՝ հէնց կատարեալ պատուհաս դարձաւ այնտեղի քրիստոնեայ ազգաբնակչութեան համար, որոց բնակած քաղաքներում ու վիւղերումն էլ բնակեցրեց Բ. Դուռը այդ արիւնոուշա և բաղցած գաղթականներին:

Անգլիական գործակալներին, նրանց հիւպատոսներին առաջարկութիւններն նորեկ գաղթականների կատարած խժոճութիւնների մասին՝ Բ. Դուռը թողնում էր առանց հետևանքի, կամ պատիպատ պատճառաբանութիւն էր առաջ բերում:

Անգլիայի գործակալները շատ լաւ բւթւածնում էին թէ Բ. Դրան յամառութիւնը որտեղից է իր ծագումը ու իր ուժը ստանում:

Եւ Լայարդը 1879 թ. յունիսի 12-ին Սալզբերլին խփած հեռագրումը պարզատւում էր որ «եթէ Բ. Դուռը չը գգուշանայ եթէ նա խելացիութեամբ և հեռատեսութեամբ չգործէ,—այն ժամանակ մի գեղեցիկ օր Ասիայում էլ Հայոց հարցը կը գարթի ճիշտ այնպէս, ինչպէս զարթեցաւ Բօլթի ճիշտ այնպէս, որի հետևանքն էր վերջին պատերազմը:

— «Մի և նոյն ինտրիգները, — շարունակում է Լայարդը, — այժմ Փոքր-Ասիայում են սկսում գործադրել» *):

Այդ այն ինտրիգներն էին, որով Ռուս դիպլոմատիան հիմի էլ ձեռնարկեց աւելի գործնական միջոցների, — այն է՝ հայերին ըմբոստացնելու ապստամբեցնելու, յեղափոխականացնելու:

— Բայց այս ամէնը միթէ որևէ կապ ունի Գրիգոր Արծրունու հետ, — թերևս հարցնում է ընթերցողը:

— Ունի, — պատասխանում եմ ես և իսկոյն գալիս եմ այդ կապը բաց անելու, միաժամանակ պարզած կը յինիմ, ըստ խոստմանս, նաև Իզգիրի դերը:

Ի է

«Վերջին ուսու-տաճկական պատերազմը նոր էր վերջացել: Ռուս յաղթական բանակի մի մասը Փոքր-Ասիայից հետզհետէ վերադառնում էր:

*) Пол. т. арм. кр. 56.

«...Մի օր Իզգիրից մինամակ եմ ստանում 3 անձանց ստորագրութեամբ: Դրանցից մինը՝ Դաւիթ Քալանթարեանն է միմիայն ինձ ծանօթ: Ես և նա Խալիբեռն դպրոցում դասընկեր էինք:

«Նամակից երևում է որ տաճիկները շարաշար կոտորում էին այնտեղ մեր եղբայրներին, որ կովկասի զանազան բաղաճներից հայ կամաւորներ խումբ-խումբ օգնութեան են գնում. որ նամակի տակ ստորագրող անձինքը կազմում են այն կոմիտետը, որի պաշտօնն է հայ կամաւորներին սահմանն անցկացնելու ղիւրութիւններ տալ և միևնոյն ժամանակ սահմանից այս կողմն անցնող հայ վիրաւորներին դարմանել, խնամել:

«Յայտնելով ինձ, որ ազգային այս շարժմանը Ախալցխա հայաշատ քաղաքը ղեռ ոչ մի մասնակցութիւն ցոյց չէ տւել ոչ կամաւորներով և ոչ գոնէ զբամով, կոմիտետը իմ աջակցութեանն էր դիմում:

«Մշակ» լրագրից գիտէինք, որ հայ ապստամբները Վանի բերդը պաշարել են բերդապահ զօրքի և նրանց մէջ մեծ ընդհարում է տեղի ունեցել, երբ և 70 հայ կտրիճներ գոհ են գնացել:

Այս ամենը գիտէինք, սակայն կարծում էինք, որ պատերազմի վերջանալով ապստամբութիւնը ևս վերջացած է: Սակայն ահա գալիս է Իզգիբի կօմիտէտի հրաւերը, կոչը:

«Կօմիտէտի առաջարկութիւնը Ախալցխայի մէջ արժարձեցի: Համակրողներ շատ դուրս եկան: Տեղական մի կօմիտէտ էլ մենք կազմեցինք և դեռ ամիսը չլրացած՝ մօտ 40 կամաւորներ ճարեցինք ու զինեցինք:

«Միքանի օրից յետոյ էլ Ախալցխա եկաւ Արսէն Թոխմախեանը և ինձ հետ առաջին անգամ ծանօթանալով յայտնեց որ Թիֆլիզում մի կօմիտէտ է կազմել, որ նպատակ ունի Տաճկահայաստանի ազատութիւնը:

Կօմիտետը դաւառներում ունենալու է իր ճիւղերը, որպիսիներ արգէն միքանի քաղաքներում հաստատուած են:

Ախալցխայում ճիւղ կազմելու և նրան ղեկավարելու համար կենդրոնը ինձ է ի նկատի ունեցել և հէնց դրա համար էլ Թոխմախեանին ուղարկել է ինձ հետ քաղցելու:

«Իմ հարցմանը՝ թէ ովքեր են կենդրո-

նի անդամները, Թոխմախեանը յայտնեց, որ սկզբունքով երոշուած է, որ կօմիտէտի անդամները անձամբ կամ անւամբ միմիեանց չպիտի ճանաչեն, այլ նրանց միմիեանց հետ ծանօթ ու յայտնի ուղղութեամբ գործիչ լինելն՝ պաշտօնական ծածկագիր նամակներով է լինելու, որոնցմով նրանք, հարկաւոր դէպքում, փոխանակելու են միմեանց հետ:

Փալով ծածկագիր այբուբենին՝ Թոխմախեանը սովորեցրեց ինձ:

«Իմ հարցմանը՝ Թոխմախեանը յայտնեց, որ Իզգիբի կօմիտէտը արդարև գոյութիւն ունի կենդրոնի թոյլտուութեամբ: Եւ թէ՛ ծածկագրերով նամակներ գրելն վերջերումս է միմիայն ընդունուած:

«...Խնդրած դրամական համեստ գումարը, իբրև ճանապարհածախս, ինձանից ստանալով Թոխմախեանը մեկնեց կովկասի այլ քաղաքները»*):

Այս տողերն, որ ես քաղում եմ իմ «Յիշողութիւններ»-ից, պարզ ցոյց են տալիս, որ ուսասհայերի մէջ արգէն սկսուած և արժարձուած էր զինեալ խմբեր տաճկա-

*) «Լուսայ» 1906, № 4:

հայաստանն ուղարկելու ծրագիրը, որ կա-
ռավարական շրջաններում կազմւած էր Ս.
Ստեֆանօյի դաշնադրութիւնից անմիջա-
պէս յետոյ:

Քաղաքական այդ շարժումների կեն-
դրոնը Թիֆլիզումն էր գտնւում: Կենդո-
նական կօմիտէտի կազմողը և յետոյ մի
կողմ քաշւողը գեներալ Տէր-Ասուածատու-
րովն էր: Կօմիտէտի նախագահը Գրիգոր
Արծրունին էր և ուրիշները: Արսէն Թոխ-
մախեանը շրջիկ գործակատար էր, որը
մեծ ճարպիկութեամբ միքանի անգամ
սահմանն անցաւ ու վերադարձաւ:

Տէր-Ասուածատուրովի կազմած կօ-
միտէտն էր, որ Րաֆֆիին նիւթեր և թե-
լադրանքներ էր տալիս՝ յայտնի ուղղու-
թեամբ պատկերներ և վէպեր գրելու, որ-
ոնց Արծրունին տպում էր «Մշակի» մեջ
և ահագին բոմբիւններով ու ըէկլամներով
տարածում էր:

Նկարագրելով Արծրունու այս կարգի
գործունէութիւնը՝ ես ուրիշ ոչ մի նպա-
տակ չունիմ, եթէ ոչ այն, որ ընթերցողիս
հասկացնեմ, թէ նախ՝ Արծրունու կուլտու-
րական գործունէութիւնը տևական չեղաւ:
Եւ նա շատ շուտով ձեռնամուխ եղաւ յե-
ղափոխական գործերի:

Եւ իր բնաւորութեան ամբողջ և ու-
ժեղ թափով՝ անձնատուր եղաւ նրան:

Եւ երկրորդ՝ հայկական կէանքում
վերջին ժամանակներումս երևան եկած
յեղափոխական մտքերի ու շարժումների
սկզբնական հեղինակն ու պարագլուխը
Գրիգոր Արծրունին էր:

Ապագայ պատմաբանը այս հանգաման-
քը պէտք է լաւ իմանայ և ըստ այնմ գը-
նահատէ «Մշակի» անմոռաց հիմնադրի
գործունէութիւնը, որ «Թիւրքահայերի հար-
ցի շրջանում, — գրում է Լէօն և ես միան-
գամայն համամիտ եմ պարոնին, — ան-
պայման առաջինն է, որի կատարած դերը
պատմական մի իրողութիւն է մեր ազգի
նորագոյն կեանքի մէջ» *):

Թողնելով ապագայ պատմաբանին՝ Ար-
ծրունու այս գործունէութեան մասին իր
անառաջ և արդար վճիռը տալու, — ես
կանցնեմ իմ նիւթին **):

*) Նոյնը, 212:

*) Այժմեան «Մշակը» նոյնպէս և «Հորիզոնը»
մասամբ՝ Գրիգոր Արծրունու ճանապարհով եթէ չեն
ընթանում, գոնէ նրա մտքերն են պաշտպանում է
քարոզում:

Անգլիական կառավարութիւնը շարունակ հետամուտ էր Տաճկահայաստանի բարեկարգման խնդրով: Սակայն Օսմանեան կառավարութիւնը՝ հակառակ ուղղութեան դիպլոմատիայի պաշտպանութեան վրայ յենւելով, դանդաղում էր Անգլիայի առաջարկներին ընթացք տալու:

Բանն այնտեղ հասաւ, որ «Անգլիոյ կառավարութեան սաստիկ տենչանքը Փոքր-Ասիոյ քաղաքական յատակագծին գործադրութիւնը սկսելու, երկու կառավարութեանց (Անգլիոյ և Տաճկաց) յարաբերութիւններուն այնպիսի մի գոյն տւին, որ պահ մը ամեն ոք պատերազմի երկիւղներ սկսաւ զգալ» *):

Օսմանեան կառավարութիւնը միշտ այս պատասխանն էր տալիս Անգլիային՝ թէ հայերի յեղափոխական շարժումներն են, որ չեն թոյլ տալիս բարեկարգութեան հարցով զբաղւելու:

Ես չեմ պնդում, սիրելի ընթերցող, որ եթէ հայերի յեղափոխական շարժումները չլինէին՝ Բ. Դուռը բարեկարգութիւնները կը մտցնէր Տաճկահայաստանում:

*) Նոյնը, Կր. 136:

Ես այդ չգիտեմ: Ես միայն այսքանը քաջ գիտեմ, որ այդ շարժումները լատպատրւակ էին Բ. Դուռն ձեռքում բարեկարգութեան խնդիրը, եթէ ոչ փակելու, գոնէ քնացնելու:

Այս էլ գիտեմ, որ յիշեալ շարժումները բաւականին կաշկանդում էին Անգլիայի ձեռքը:

Դալով շարժումների գոյութեանը, — այդ մասին վկայում էր «Մշակի» Վանի թղթակիցը թէ՛... գաւառներում հայերը գաղանի յեղափոխական ընկերակցութիւններ են կազմում ինքնապաշտպանութեան համար *):

Հայերը ոչ միայն ինքնապաշտպանութեան պատրւակաւ զինւում էին, ընթերցող, այլ նաև «Ասորա-Հայկական» դաշնակցութիւն էին ուզում կազմել, ինչպէս նախընթաց յօդւածներից մէկում ևս յիշած էի:

Այդ ամեն շարժումներն ու ծրագիրները տեսնելով և «Մշակի» մէջ կարգաւով Բ. Դուռն էլ, — շատ բնական է, — որ ինքն էլ ինքնապաշտպանութեան կը դիմէր, և

**) Նոյնը 194.

Շէյխ Իբրահիմալլայի առաջնորդութեամբ 20 հազարանոց քրդական մի բանակ կազմելով Մարտինի հրացանով զինւած Պարսկաստան կը քշէր և ի միջի այլոց 170 հատ էլ հայկական զիւղեր կայրէր, մոխիր կը դարձնէր:

Շէյխ Իբրահիմալլայի այս արշաւանքը, — գրում է Լէօն, — «կազմակերպել է թիւրքիայում, յատկապէս իբրև սպանանք եւրոպայի դէմ, հայոց հարցի առիթով» *):

Գօշէնին փոխարինեց Լորդ Դրֆերինը Պօլսի անգլիական դեսպանի պաշտօնով և սկսեց աւելի եռանդով աշխատել տաճկահայերի օգտին:

Բայց որքան Անգլիայի քաղաքագէտները աշխատում էին յօգուտ հայերի վիճակի բարւոքման, նոյնքան Ռուսիոյ քաղաքագէտները աշխատում էին օգուտ տաճկահայերի ճնշման, հարկաւ ոչ այնքան ուղղակի, որքան կողմնակի, Բ. Դոան իրեն ձեռքով և ձեռներէցութեամբ:

Այսպէս՝ Օսմանեան կառավարութիւնը չբաւականալով Շէյխ Իբրահիմալլայի գործած աւերածներով ու կոտորածներով՝ ձեռնարկեց նաև ուրիշ տեսակ հալածանքների ընդդէմ հայոց: «Արգելեց հացի նորմուծումը

*) Նոյնը 189:

Ռուսաստանից և Պարսկաստանից, արգելեց Պօլսի լրագիրներին գրել Հայաստանի սովի մասին, իսկ Կովկասի հայ հրատարակութիւնների մուտքը թիւրքիա՝ արգելքի տակ դրաւ: Սովելոց Յանձնաժողովը կապածներէ եսթարկեց:

Նրան ոչնչացնելու համար կառավարութիւնը մի թիւրքական յանձնաժողով կազմեց և առաջարկեց հայերին իրենց հաւաքած փողերը այդ յանձնաժողովին տալ *):

Մի խոսքով ռուսահայերիս քաջածանօթ, սովորական ճշումներ, որոնք սակայն մինչև այդ ժամանակ անսովոր և խորթ երևոյթներ էին Բ. Դոան քաղաքականութեան և հարկաւ տաճկահայերի համար Բ. Դուռը չէր համարձակուիլ այսպիսի քայլեր անել, եթէ իր քամակին կանգնած չտեսնէր յորդորիչ ու խրախուսիչ:

Վերջինս՝ Արծրունու կարծիքով Անգլիան էր քարոզել և ամեն մի առիթից օգտուելով կրկնել էր, որ անգլիական քաղաքականութիւնը ուղղակի թշնամական է հայերի վերաբերմամբ **):

*) Նոյնը, էր. 144:


***) Նոյնը 153:

— Այսպէս էր ահա, սիրելի ընթերցող Արծրունու «անսխալ հոտառութիւնը քաղաքական հարցերում», ինչպէս որ մի ժամանակ Լէօն էր գրում:

Ոչ այնքան տաճկահայերի բազմից, սակայն, որքան Գրիգոր Արծրունու բազմից՝ Անգլիայում նախարարական փոփոխութիւն տեղի ունեցաւ և ազատամիտների պարագլուխ Գլադստօնը կառավարութեան գլուխն անցաւ.

.....*)

*) «Հովիտ»-ի № 16-ում խմբագրի հետեւեալ նամակ-պատասխանը հեղ. գրքոյկիս հեղինակին ուղղած «մեզտնից անկախ պատճառով ստիպւած ենք գաղաբեցնել ձեր «Իմ շնորհաւորանքը «Մշակ»-ին» յօդւածի շարունակութիւնը:



1. Ձէնիաթ—ղէնիաթ
2. Գլխագին
4. Ապօրինի գաւակը
3. Գինեղև
5. Ռաֆֆիի „Կայծերը“
6. Կացինը քարին կպաւ
7. Մտորումներ
8. Պատմական Քաղաքներ Ա. պրակ.
9. Պատմական Քաղաքներ Բ. »
10. Պատմական Քաղաքներ Գ. »
11. Պատմական Քաղաքներ Դ. »
12. Պատմական Քաղաքներ Ե. »
13. Պատմական Քաղաքներ Զ. »
14. Պատմական Քաղաքներ Է. »
15. Իսրայէլ Օրին և իր քաղաքական ծրագիրը
16. Հայկական հարցի երկրորդ շրջանը
17. Հայկական հարցի երրորդ շրջանը
18. Հայկական հարցի չորրորդ շրջանը
19. Հայկական հարցի հինգերորդ շրջանը
20. Հայկական հարցի վեցերորդ շրջանը
21. Պատմութեան դասերը
22. Հրապարակախօսական մանրունք
23. Պատմական Քաղաքներ Ը. պրակ.
24. Պատմական Քաղաքներ Թ պրակ
25. Պատմական Քաղաքներ Ժ պրակ
26. Ռոճիկ քահանաներին
27. Պատմական նիւթեր
28. Իմ շնորհաւորանքը «Մշակ»-ի յօրեկեանին 70 կ.

Ս պ ա ու լ ա ծ ե ն

0

« Ազգային գրադարան »

NL0141088

15169